



ՄԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՆԵԱՆ

ՀԱԻԱՔԱԾՈՅ

ԸՆՏԻՐ ԳՐՈՒԱԾՈՂ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՑԵՆԱԳՐԱՑ


ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՋՈՒԱԻ

ՀԱՆԴԵՐՁ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՄԲԻՆՆԱՅ ԳԱՆԱՅ Բ. ՄԱՍԻՆ
ՄԱՍԻՆ

Ս. Գ.

ՄԱՍՆ

Կ. ՊՈՒՆ



սկաւ
յ ընդոս-

Handwritten text at the top of the page, partially obscured by a tear.

Vertical handwritten text on the left edge of the page.



Handwritten text in a curved path, possibly following the edge of a stamp or seal.

Handwritten text at the bottom right of the page, possibly a signature or initials.

A 75 82



ԱԶԴ

Ներկայ աշխատասիրութեան հեղինակն ընտիր գրուածոց այս փունջ կը նուիրէ 'Հայ մանկանց' տալու համար նոցա ճաշակ ընթերցուածոց, եւ նախակրթութիւն արտասանութեանց, եւ յուսալի է որ այս կրկին նպատակատուն գործ կարժանանայ Ազգային Մեծ-Ուսուցչաց ընդունելութեան :

ՀԱՒԱՔԱՄՈՅՆ երկու մատերէ կը բաղկանայ : Բ. Մասին հրատարակուել պիտի լինի յառաջիկային :


Ս. Գ.

1 Օգոստ. 1888

Իւսկիւտար



Handwritten signatures and initials in the bottom left and center.





ՀԱՒԱՔԱԾՈՅ

ԸՆՏԵՐ ԳՐՈՒԿԱԾՈՅ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՕՏԱՐ ՄԱՏԵՆԱԳՐԱՅ

(ԱՐՁԱԿ)

ԳԼՈՒԽ Ա.

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

1. ԸՆՏԱՆԻՔ



Հայ պատանի, երբ յաշխարհ եկիր զո՞վ տեսար քու շուրջն առաջին անգամի՞ն՝ ո՞յց ձեռներ խնամ տարին քո տկար մարմնոյն վերայ և կենաց ասպարիզին մէջ առաջնորդեցին քո առաջին քայլից. քո մօր և հօր ո՞յք եղան քո մանկական խաղուց առաջին ընկերքն և ո՞յց հետ մրմնջեցիր նախկին երգերն կենացդ առաւօտին. — քո եղբարց և քերց :

Ո՛հ, ընտանի՛ք, աստուածայի՛ն հաստատութիւն, ուր ամէն ինչ նախախնամութիւն, անձնուիրութիւն, սէր և գորով է :

Ո՛րսլիսի հզօր կապեր այնոքիկ որ կը միացնեն մայրն՝ իւր զաւկին, հայրն՝ իւր որդւոյն, եղբայրն՝ իւր եղբօր, քոյրն՝ իւր հարազատին, կիներն իւր ամուսնոյն հետ. ի՞նչ է նոյն իսկ մահն այս կապերուն ուժոյն առջեւ, որոց բնութիւնն ինքն յօրինած է հանգոյցն 1 սերտ 2: Ամե-

նէն դիւցազնային առաքինութեանց աղբիւրն է ըն-
տանիքն :

Երբ հայրն , յերեկոյին , կը դառնայ իւր աշխա-
տանքէ և վար կը դնէ օրուան բեռն , զի՛ քաղցր է
նմա կարել համբուրել մի քանի խարտեաչ գլուխներ
որ կը շարունակ իւր բոլորտիքն , կ'զգայ թէ այդ պզտիկ
էակներ անհրաժեշտ են իւր կեանքի , թէ առանց նո-
ցա կարի ծանրակիր կը լինէր իւր բեռն , և թէ երբ
չ'տեսնէր իւրեան ապրիլն վերատին այդ նորարոյս կեան-
քերու մէջ՝ կարի տխուր պիտի լինէր իւր ընթացքն
'ի գերեզման : Հաւալուսն 1 իւր կող կը ճեղքէ տալու
համար արիւնն 'ի ջամբ 2 իւր ձագուց , և տեսնուեցան
հայրեր որ չ'վարանեցան բանալ իւրեանց երակներ՝ զի
հաց հայթայթեն 3 իւրեանց նօթի զաւակաց :

Եւ ի՛նչ աւելի բնական քան սէրն որդւոց առ
ծնողս , նոքա՛ իւրեանց տուին կեանքն . ոսկր են նոցա
ոսկրէն և մարմինն նոցա մարմնէն , նոցա բնոյն վերայ
փթթած է ծաղիկներ են , յորմէ ծծած են կամ կը
ծծեն իւրեանց հիւթ և սնունդ : Նոցա սիրոյն մթնո-
լորտին մէջ աճեցան , և անտի արտաքս ի՛նչ մթու-
թիւն և ի՛նչ ցուրտ : Ի՛նչ զարմանք որ Յուլիա Ալ-
պուլինա մեռնի իւր հօր դիմական վերայ զոր չ'կարաց
փրկել , և Պլինիոս Վեսուլի հրատեղաց կայծականց ու
մոխիրներուն մէջէն դուրս բերէ շալակած իւր մայր
ծերունի : Ո՞ր յիշողութենէ կը ջնջի ի սպառ հօր և
մօր յիշատակն . երբ անցնին նոքա յերկրէ՝ թողլով

(1) . Թուշուն ջրոյին և ցամաքային — (2) . 'ի կերակուր : —
(3) . ճարել — (4) . Բացուած :

զմեղ որք իւրեանց գրկէ . տարիներու թանձրացեալ մշուշին մէջն կերեւին միշտ սիրածպիտ այն նուիրական գէմքերն , և ամենէն անզգայ սիրտն կը խանգաղասի 'ի լուր աղօթոյն զոր մայրն իւրեան սովրեցուց :

Ռ . Յ . ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ք . ՀՕՐԸ ՏՈՒՆԸ

Ա . Արջափ ընդարձակ է աշխարհս , գիւղեր , քաղաքներ , լեռներ ու դաշտեր բազմամարդ են բնակչօք . բայց ինձ համար միմիայն տեղի , յորում օտար չըլլամ՝ իմ հօրս տունն է .

Բ . Սիրելի է ինձ զամէնքը ուրախ տեսնել իմ շուրջս , իցի՛ւ Վ փոքր տղայք , գեղեցիկ և կայտառ , իւրեանց ծնողաց խնդութիւնն ըլլան . երիտասարդք նոցա նեցուկը Չ , ծերունիք խնդալից դգուեն իրենց բազկաց մէջ իրենց թոռնեակներն և բնութիւնը ամենուն ժպտի՝ սակայն ինձ համար միմիայն տեղի յորում ուրախ կարենամ ըլլալ , միշտ հօրս տունն է :

Գ . Յես սա ծիծառները որոց բոյնը մեր տանեաց քիւիւն Յ անկիւնն է . ի՛նչպէս խնդալից են . ամբողջ ընտանիք մ'են նոքա , բարի հայրը կանուխ կ'երթայ պարէն փնտուելու մինչ մայրիկը կը խնամէ 'ի բնի իւր

սիրուն ճագերը . ահա անոնցմէ մին որոյ թեւք արդէն զօրաւոր ըլլալու են զի կ'երթայ կը թառի մօտաւոր ծառին մի ճիւղին վրայ ուր իւր հասակակից թռչնիկք կոչեն զինքը գեղգեղանօք 1 , հոն վայրիկ մի կ'երգէ անոնց հետ . յետոյ իւրաքանչիւրը կը վերադառնայ առ մայր իւր : Այն սիրուն էակներուն համար իրենց բոյնը իրենց տունն է :

Դ . Այո՛ , մենք ալ այդ պզտիկ արարածներուն պէս ենք , որովհետեւ կ'ըսուի թէ , մենք ալ անոնց պէս հիւր ենք յաշխարհի : Ահա՛ մեր հայրը գնաց իւր աշխատութեան պարապելու մեզի համար , մինչդեռ մեր մայրիկ առտնին հոգն ունի իրեն բաժին , նա կ'զբաղի օրն 'ի բուն պատրաստելու ինչ որ պէտք է իւր զաւակաց համար , նոյն միջոցին ես պիտի ընեմ , ինչպէս կ'ընեն այն նորատի ծիծռունք որոնք առ ընկերս իւրեանց երթան , իբրեւ ի ժամադրեալ տեղի մօտաւոր ճիւղին վրայ : Այո՛ , ես ալ ունիմ գեղեցիկ ճիւղ մը ուր սիրելի է ինձ յաճախել . այդ մեր դպրոցն է , ուր ընկերքս արդ իսկ ինձ կ'սպասեն : Աշխարհիս մէջ այդ է միմիայն ընտանեաց յարկէն դուրս ապահով տեղի իբրեւ իմ հօրս տունը :

Ե .— Հոն կայ անձ մը պատկառելի իւր հասակաւը և աւելի ևս իւր իմաստութեամբը և առաքինութեամբը , կին մը ամենէն քաղցրագոյնը ու ամենէն համբերատարը 2 յաշխարհի . սոքա ծնողք են աշակերտաց և աշակերտք իբրեւ անոնց զաւակունք . հոն կան ամէն տեսակ կտրիճ ուսուցիչներ , որչափ լաւ բաներ

(1) . Երգք .— (2) . Համբերող .—

կուսանին անդ . մանաւանդ յառաջ քան զամենայն
կուսանին սիրել զամենաբարին Աստուած , զծնողս , և
զամենեսին իբրեւ եղբայր և քոյր : Ո՛հ , որչափ գոհ
կ'ըլլան ուսանողք , երբ իրենց պարտականութիւնը լաւ
կատարեն . յայնժամ կ'ոստոստեն Վ նոքա և կ'երգեն ,
և յետոյ յերեկոյին լի ուրախութեամբ իբրեւ թռչնիկք
'ի բոյն , իւրաքանչիւրը կը դառնայ իւր հօրը տունը :

2. Իցի՛ւ , երկնից օրհնութիւնը տարածուի աշխարհիս
փրայ իբրեւ ցօղ 'ի մարմանդի 2 , իցի՛ւ հեռանան
և 'ի բաց երթան բոլոր ճախողակի և բօթարեր 3 ամպք ,
որպէս զի առատ հունձք և կութք 4 իրար յաջորդեն և
փոխարինեն մշակին աշխատութեանը , ինչպէս բարի և
ջանասէր ուսանողք իրենց ուսուցչաց խնամոցը .
Իցի՛ւ այսպէս բարի տղայք կարենան ըստ կարգի նե-
ցուկ ըլլալ իրենց բարի ծնողաց , և մէն մի պատանեակ
օգտակար ըլլալով իւր նմանեաց՝ իւր բարի վարմուն-
քովը պատուէ իւր հօրը տունը :

8 . ՈՍԿԱՆ

3 . ՄԱՅՐԱԿԱՆ ՍԷՐ

Երբ որդին մեռնի՝ հայրը կուլայ ծանրաթախիծ 5 ,
այլ ժամանակը անոր այս ցաւը միւս ցաւերէն աւելի
չյարգէր . բայց տարիներով ետքը նայէ՛ մօր սիրտը՝

(1) . Յատկաւերլ — (2) . Հովասուն տեղուանք — (3) . Գուժա-
բեր . — (4) . Արգեկութ (պաշ պօղումի) : — (5) . Մեծ տրամու-
թեամբ (մկ) :

դեռ նոյն վէրքն արիւնահոս է: Արարչագործութեան
 մէջ այն սիրոյն նմանող բան մը չ'կայ. մէկ վայրկենի մէջ
 կը ծնանի սուրբ՝ անհուն՝ աննուաճ 1. այնչափ բուռն
 որ զայն չ'գիտցողը կը տանի անդր քան զնիւթական
 բնութիւն, որ ցաւն իրեն հեշտութիւն կ'երեւցնէ,
 զրկումը՝ վայելք, և այս ոչ թէ դիպուածով անցողա-
 կան իմն՝ այլ անդուլ՝ անյեղի 2. անոր համար ոչ
 նուազիւ կայ՝ վասն զի այսպիսի փոփոխութիւնք ան-
 կատարութեան նշաններ են: Եւայն զգաց իւր Ա-
 բելայ անշունչ մարմնոյն վրայ փարելով՝ 3 ինչ որ Հե-
 կարէ 4 տեսնելով իւր Հեկտորին գեանաքարը դիա-
 կը, և ինչ որ ՚ի կատարած անդր աշխարհի պիտի զգայ
 վերջին մայրը: Աբրահամու հաւատարմութիւնը պան-
 ծացնելու համար՝ երէց մը կը սրտամէր թէ երբ Աստ-
 ուած իրմէ մինչեւ իսկ իւր միամօր որդին խնդրեց՝
 սուրբ նահապետը զայն չ'զլացաւ. «Ա՛հ, աղաղակեց, ուն-
 կընդրաց՝ մէջէն մայր մը, Աստուած այսպիսի զոհ մը
 չէր կրնար մօրմէ մը խնդրել...»: Այդ սիրոյն մէկ հը-
 րաչքն է ամբողջովին կերպարանափոխ ընել զկին. այ-
 նու թեթեւ աղջիկը՝ լուրջ կըլլայ, անկանխատեսը զգոյշ
 և խնամուտ, կարծես մանկիկը յերկնից իջնելով՝ երկ-
 փեղկեալ 5 թողուց անոր մէկ դուռն և երկնաւոր
 լուսոյ հոսանք մը կ'ողողէ 6 մայրենի ճակատը:

Թ. ԹԵՐՁԵԱՆ

(1). Անյաղթելի: — (2). Անփոփոխ: — (3). Փաթթուիլ: —
 (4). Հեկարէ, կին Պրիամու, արքային Տրոլացուոց: — (5). Բաց: —
 (6). Թրջէ:

4. ԱՌ ՀԱՅ ՄԱՅԻՆԻ

Մտիկ ըրէ՛ք, ապագային ծոցէն ճիչ մը, ձայն մը կը լսուի, անմեղութեան ճիչն է, նո՛ր սերնդեան ձայնն է: Ի՞նչ կը ճչէ, ի՞նչ կը ձայնէ. բառ մը զոր անտարակոյս Աստուծո՛վ ուսած է, բառ մը զոր քաղցր և սրտառուչ 1 կ'արտասանէ, զոր տաղնապալիր 2 կը դոջէ. մնա՛յր, մայր, և դողդոջուն ըաղուկները զայն կը փընտըռեն, և աղերսական 3 նայուածք մը կը նետէ որ կարծես ըսել կուզէ «դթա՛ յիս, և փրկէ՛ զիս»:

Մտիկ ըրէ՛ք և դթացէ՛ք այդ անմեղութեան վրայ, որ ձեզ միայն կը դոջէ 4, մայրեր:

Կաթ կուզէ:

Ճշմարտութեան կաթով լցուած ստինքներ պատրաստեցէ՛ք իրեն:

Համբոյր կուզէ:

Սիրոյ և առաքինութեան սրբաջերմ հրով այրող շուրթներ պատրաստեցէ՛ք իրեն:

Ձեռք կուզէ:

Մին մարդը, և միւսն ճշմարիտ և կատարեալ յաւիտենական էակը ցուցնող ձեռներ պատրաստեցէ՛ք իրեն:

Սիրտ և հոգի կուզէ:

Գեղեցկին և բարւոյն, վեհին և վսեմին, ճշմարտին և կատարեալին զգացմամբ պճնեալ 5 սրտեր և հոգիներ պատրաստեցէ՛ք իրեն:

(1). Արտաշարժ, կարօտած — (2). Հոգով լի — (3). Աղաչական — (4). Պսաւլ: — (5). Զարդարեալ:

Կաղաչեմք — վերջին անգամ — խնայեցէք այդ անմեղութեան, այդ փառաց սերնդեան վրայ և յարատեւեցէք:

Իրաւ է որ դուք այսօր քրտինք կը թափէք, դուք այսօր ձեր աչաց լոյսը գիշերին կը ծախէք անկէ մտածութեան վայրկեաններ գնելու համար:

Դուք այսօր ձեր կենաց թանկագին վայրկեանները, ժամերը ու օրերը մութ և լռին սենեակներու կը դատապարտէք, հոն ձեր զաւակաց մտաւորական և հոգեւոր հացը աւելի կանուխ և առաւել դիւրին հայթայթելու միջոցներ փնտռելու համար:

Դուք այսօր կը զոհուիք մէկ խօսքով:

Սակայն գիտցէք որ ձեր այդ հեղած քրտամբը, ձեր սպառած աչաց լոյսով, ձեր ծախած թանկագին վայրկեաններով, և վերջապէս ձեր անձին զոհողութեամբն է որ օր մը շատ մօտ օր մը ձեր անմահութիւնը պիտի գնէք:

Ե. ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ



Ճ. ՄՈՐՄ ԿՐՕՆՔԸ

Մեր մօր կրօնքն՝ իւր հանձարին պէս՝ բոլորովին կ'ամբիօփուէր իւր հոգւոյն մէջ: Հաւատքին մէջ պատկառանք ունէր նա, սիրոյն մէջ՝ խանդ՝ 1, յուսոյն մէջ հաստատութիւն: Առաքինի գործոց մէջ՝ կը բովանդակուէր իւր հաւատքն և ոչ թէ պատճառարանութեան:

(1) Եռանդ:

Մօրմէն ժառանգած Աստուծոյ մէկ պարգեւը կը նկատէր հաւատքն , և յանցանք կը համարէր քննել զայն ու թոյլ տալ՝ որ օղին մէջ ցնդի այն : Ժամանակ անցնելէ վերջ՝ աղօթից համայն քաղցրութիւններն , սքանչացման ամբողջ արցունքները , սրտին ամէն զեղումները 1 , կենացը բոլոր անձկութիւններն և իւր անմահութեան բովանդակ յոյսերն այնպէս մը նոյնացած 2 էին հաւատքին հետ որ իւր մտացը մէջ՝ այս ամէնը մասն կը կազմէին գոգցես իւր հաւատքին , և այնպէս կը թուէր իրեն՝ որ եթէ հաւատքը կորսնցնէր կամ այլայլէր զայն , պիտի կորսնցնէր միանգամայն իւր անմեղութիւնն , իւր առաքինութիւնն , իւր սիրելիներն ու երջանկութիւններն երկրի վերայ , և երջանկութեան առհաւատչեայներն 3 երկնից մէջ . մէկ խօսքով պիտի կորսնցնէր իւր ասդէնն ու իւր անդէնն 4 : Ասոր համար յարած իւր հաւատքին այնպէս՝ ինչպէս յարած էր երկնից և երկրին : Ասկէ զատ բարեպաշտ նա ծնած էր , ինչպէս մարդ կը ծնի բանաստեղծ . բարեպաշտութիւն՝ այս էր իւր բնութիւնը . սէր առ Աստուած ա՛յս էր իւր կիրքը : Բայց այս կիրքն՝ իւր առարկային անհունութեամբն ու իւր վայելից ապահովութեամբն իսկ , յստակ էր , ազնիւ ու քաղցր ինչպէս էին անոր միւս ամէն կիրքերն ալ :

Այս բարեպաշտութիւնն բուն իսկ իւր բաժինն էր , զոր մեզ հաղորդել կը փափաքէր նա եռանդազին : Պատրաստել մեզմով Աստուծոյ արարածներ անկեղծ ու

(1) . Յորդութիւն : — (2) . Միանալ : — (3) . Գրաւական : —

(4) . Երկիրն ու Երկինքն :

ճշմարիտ՝ այս էր իւր ամենէ տիրական մայրենի խորհուրդը: Ասոր մէջ ալ կը յաջողէր դարձեալ՝ առանց ճգանց ու մասնաւոր դրութեան մը, այլ այն բնական սքանչելի ճարտարութեամբն որուն ոչ մի արուեստական կնարք կարող է հաւասարիլ: Իւր բարեպաշտութիւնն՝ որ կը կաթէր իւրաքանչիւր ներշնչումներէն, իւրաքանչիւր գործէն, իւրաքանչիւր շարժումէն՝ կարծես կը շրջապատէր զմեզ՝ այս երկրի վերայ՝ մի երկնային մթնոլորտով: Կը կարծէինք թէ՝ Աստուած իւր ետեւն է և թէ պիտի լսէինք Անոր ձայնն, ու տեսնէինք զԱնի, ինչպէս մեր մօր իսկ թուէր լսել անոր ձայնն, տեսնել զանի ու խօսակցիլ անոր հետ օրուան մէն մի տպաւորութեան միջոցին:

Աստուած մեր ընկերութեան մէջ էր ընդ միշտ: Անոր գաղափարն ծնած էր ի մեզ մեր առաջին և մեր ամենէ անպատում տպաւորութեանց հետ: Զյիշէինք թէ՝ ե՛րբ չէինք ճանչցած զԱնի, անորոշ էր մեզ առաջին օրն յորում խօսուած էր մեզ Անոր վրայօք:

Իբր երրորդ մը՝ տեսած էինք միշտ զԱնի մեր մօր ու մեր մէջ տեղ: Իւր անունն մայրական կաթին հետ եղած էր մեր շրթանց վերայ, և խօսիլ սովորած էինք զայն թոթովելով: Այն արարողութիւններն՝ որք զԱնի ներկայ և նոյն իսկ զգալի կ'ընեն հոգւոյ, քանի մեծցած էինք, կատարուած էին օրը քսան անգամ մեր աչաց առջեւ: Առաւօտ, երեկոյ, ճաշելէն առաջ ու յետոյ ընել տուած էին կարճ աղօթքներ: Մեր մօր ծունկերն երկար ատեն մեր ընտանեկան խորանն եղած էին: Աղօթից ժամուն իւր զուարթագին դէմքն քօ-

զարկուած կը լինէր յարգական և քիչ մը հանդիսական լրջութեամբ, որ նոյն իսկ մեր սրտին մէջ տպաւորած էր զգացումն մեծութեան այն գործին զոր մայրս մեզ կը ներշնչէր: Երբ աղօթած լինէր մեզ հետ և մեր վերայ, իւր գեղեցիկ դէմքն ալ աւելի քաղցր ու խանդաղատիչ կերպարանք մը կ'ստանար: Կ'զգայինք թէ նա հաղորդուած էր այն ատեն զօրութեամբ և զուարթութեամբ՝ զմեզ առաւել ևս համակելու 1 համար անոնցմով:

ԼՍՄԱՐԴԻՆ

Ե. ԱՍՏՈՒԱԾ

Մի է Աստուած, հաստիչ 2 և խնամող տիեզերաց, ամենազօր և անհաս: Արեգակն չէ Աստուած, բայց կրնայ համարուիլ Աստուծոյ յստակագոյն պատկերը: Անոր պայծառութիւնը կը լուսաւորէ զաշխարհ, շերմութիւնը կուտայ կենդանութիւն երկրի արդեանց 3: Զարմանանք անոր վրայ իբրեւ արարածոյ օրով կամեցաւ Աստուած ցուցնել իւր կարողութիւնը, բայց չմատուցանենք նմա պաշտօն: Նմա միայն որ է նոյն ինքն իմաստութիւն և բարութիւն՝ կը վայելեն երկրպագութիւն, գոհութիւն և գովեստ: Ըրաւ զերկինս իւր ձեռամբ, և սահմանեց աստեղաց զնացքը իւր մատուրներով: Տուաւ ծովու սահման ընդ որ 4 չկրնար անցնիլ նա, և բռնութիւնք հողմոց կ'իջնեն ակնարկու-

(1) . Լուսլ — (2) . Ստեղծող — (3) . Բերքերուն — (4) . Ուրկէ:

Թեամբ կամաց նորա: Կը սարսէ զերկիր և կը դողացունէ ազգերը, երբ կ'արձակէ իւր որոտումը: Աքանչելի է իւր բոլոր ճանապարհաց մէջ, և անոր իմաստութիւնն այնչափ առաւել է քան զմերն, որչափ անոր անսահման զօրութիւնն ի վեր է քան զտկարութիւն մեր: Անոր անբաւ զօրութիւնը կը փայլի իւր բոլոր գործերուն մէջ: Աղբիւր է առատութեան և կեդրոն կատարելութեան: Երջանկութիւն յաստիս 1, ինչպէս նաև ի հանդերձելումն, կը կայանայ ի կատարեալ միաբանութեան մեր կամաց նորայոյն 2 հետ, և ուրիշ ամէն բարիք են զաղլիաղլիուն 3 և խարուսիկ 4:

Թարգմ.

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ



Յ. ՅԻՍՈՒՍ Ի ԲԵՔԵԼԱՅ ՍԱՐ

Ձոհիդ ժամ հասաւ. և դու հասար բեթելայ սարին գլուխ, Յիսուս, խաչդ ի գետին դիր, ո՛վ դու խաչի մշակ, արեւակէզ 5 ճակատիդ քիրտն սրբէ, զաչերդ ի վեր ա՛ռ, տե՛ս ահա կուգայ անառակ որդին, մարդկութեան թշուառ զաւակ, վեց հազար տարի է երկրիս վերայ կը թափառի, և այժմ ի սպառ չքաւորեալ անօթի քաղցած կը վերադառնայ հայրենի տունը. ըզքեզ Գողգոթային գլուխը գտաւ և դու երկինքէն մին-


(1). Աշխարհի վրայ — (2). Անոր (կամօջը) հետ — (3). Խախուս — (4). Խարուղ — (5). Արեւէն այրած:

չեւ Բեթլեհէմի մուտ և անտի-մինչեւ այսր՝ զայն կորոնէիր 1 և ահա դուեր: Գիրկս ա՛րկ 2, համբուրէ՛, զի դու երկնից Հօր դորովոյն բազուկներն ես, զքեզ երկինքէն մինչեւ: յերկիր պարզեց որ գրկես անառակ որդին, յուսիդ վերայ բառնաս մուրեալ ոչխարը: Տե՛ս, Տէր կորսուած դրամն ևս ոտքիդ տակն է, ժանդոտած 3 եղծուած և բոլորովին, կը ճանչե՞ս արդեօք, ա՞յդ է քո տիրական պատկերն ու կնիքը:

Տէր, դու այս անգին գիւտերուդ համար զի՞նչ գին կը վճարես. արդէն գիտես Հօրդ կամք, դու նորա ի յաւիտենից 5 պահեալ պարարակ 6 եղն ես, նա կը հրամայէ որ անառակ որդւոյն դարձին համար զենուն զքեզ, խնճոյից սեղան կաղմուի, հրեշտակներ ու մարդիկներ առհասարակ հրաւիրուին, երկինք և երկիր զիրար գրկախառնեն, հաշտութեան աղեղն 7 Գողգոթայի գլխէն ձգէ դէպ երկինք, և հասնի Աստուած-պետական աթոռին առաջ. խռոված Հայրն հաշտուի աշխարհին հետ:

Փրկութեան աւուր երրորդ ժամն եհաս, տարածիր, Յիսուս, պարզէ՛ ամենազօր բազուկներդ քառաթեւ սեղանին 8 վերայ, թոյլ տուր, որ զենուն զքեզ, լուռ ու մունջ բերանդ մի՛ բանար, դու անխօս որոջ 9

(1). Կը փնտռէիր — (2). Գրկէ — (3). Ժանկառու — (4). Աւրուած: — (5). Ի սկզբանէ (մկ.): — (6). Պարարտ: — (7). Որպէս Զրհեղեղէն յեռայ Աստուած ինչան հաշտութեան տուաւ ծիրանի դօտին, նոյնպէս Քրիստոսի փրկագործութեամբ հաշտութիւն եղաւ երկնի և երկրի մէջ, և հաշտութեան աղեղն տարածուեցաւ երկնէ յերկիր — (8). Փոխանակ զանձնական — (9). Էդ գառնուկ —



մի ես քո կտրիչներուն 1 առաջ. ճիշդ այնպէս կա՛ց ինչպէս գուշակեց Նսային:

Զմուսեալ գինի կուտան քեզ, չգիտեմ, քեզ կը կարեկցի՞ն 2, որպէս զի թմրիս և սաստկագոյն ցաւ չզգաս. թէ վասն այն կարբուցանեն քեզ, որ անագան 3 մեռնիս, ընդերկար ողջ մնաս խաչին վերայ, թշնամիներդ վա՛շ վա՛շ կարդան քո դէմդ և զքեզ աւելի ևս զկծեցուցանեն 4: Այսպէս վարեցան ընդ քեզ կատաղի ոխերիմներդ 5, չգիտնալով թէ դու մարդոյն սիրով արբեալ՝ կամաւդ անզգայեալ ես: . . .

Սարեկայ խաչի ծառէն կախուած, ո՛վ ճշմարիտ զոհ, քանի՛ անուշահոտ է ծուխդ որ կը ծաւալի և կը ծառանայ դէպ երկինքը, աշխարհ բովանդակ զոհիդ փրկութեան հոտով լցաւ: Եւ ահա քո Հայր Աստուած Երկինքէն իջեր է Գողգոթային գլուխը, հրեշտակներ ու մարդիկ խաչիդ սանդուղէն ելելէջ կառնեն 6, հաշտութեան կամար կապեր է մէկ ծայրն յԱստուած, միւսն ի մարդիկ, երկինք և երկիրը ի հաշտութիւն կը կապէ: Եւ այսպէս կը լրանայ և կաւարտի, Տէ՛ր փրկաւէտ զոհիդ մեծահրաշխորհուրդ:

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ



Տ. ՉԱՏԻԿ



Զատիկ է այսօր, միտքս կը բերեմ հին օրերը, մեր առեւնի Զատկի օրերը, երբ ողջ էին մեր հայրերն ու

(1) - կտրող — (2) - Մեղքնալ — (3) - Քշ (մկ) — (4) - Տանջել — (5) - Թշնամի — (6) - կեղնեն կիջնեն:

մայրերը: Առջի գիշերուընէ հսկսէին հնչել ուրախութեան ձայները, վառ ձայնը կոչնակին, ու դուռերնուս առջև դաշն 1 ու որոտ 2. ձայն մը որ մեզ եկեղեցի կը հրաւիրէր — վեր կը ցատկէինք. ի՛նչ զուարթ է զարթնումը, և այր ու կին, ծեր ու տղայ, ամենքն ալ եկեղեցի կը վազէին, տուները կը պարպուէին, եկեղեցիները կը լենային. ու կը սկսէր ժամերգութիւնը բարձր ու խորհրդաւոր շեշտերով և հանդիսաւոր նուագօք, որ կարծես թէ ընդ տիեզերս համայն պիտի հնչէին, և այն սեւեցած կամարներուն ներքեւ կը գոռային/ալելուք և օրհնութիւնք ու փառաբանութիւնք, և տաղք ու շարականք իրարու կը յաջորդէին մին քան զմիւսն աւելի հոգեւոր՝ աւելի սրտառուչ 3, և կերգէին դպիրք ու մեր սրտերն ալ կ'երգէին: Ո՛չ մէկ աւետեաց ձայն՝ որ փողերով տաւիղներով 4 հռչակէ մի վեհապանծ թագաւորի յաղթութիւն կամ ազգերու երջանկութիւն, այնչափ հզօր և այնչափ քաղցր չէ հնչած որչափ այս բառերը «Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց», որուն աղաղակը Եկեղեցւոյ գմբէթն ալ կը պատուէր կ'անցնէր: Ու խուռն բազմութիւն մը հեւալով կը մնար ի խոր զմայլման՝ լուսով՝ ու խունկով ողորուն եկեղեցւոյն մէջ՝ Եւ ահա կը դառնայինք եկեղեցիէն ու կը բազմէինք նահապետական սեղանի մը շուրջ: Մեր հայրը կը փառաւորուէր այն օրը, աւելի փառաւոր էր քան աշխարհակալ թագաւոր մը և մեր սիրտերը լի էին անպատում ուրախութեամբ ու բնութիւնն ալ

(1). Մեղմի.— (2) Որոտման պէս գոչող.— (3). Կարօտած: — (4). Քնար:

կը խայտար մեզի հետ որ նա ալ իր վերածնութեան տօնը կը կատարէ այս օրերուս: Մարդիկ ամէն օրուան մարդիկը չէին, տարւոյն մէջ այն օրը միայն այն օրն ալ ըլլար, մեծ և երջանիկ կ'զգային զիրենք: Ա' և մեղաւոր չկար ի միջի, ամենքն ալ առաքինի, և էր որ առյապայն 1 ալ պիտի մնար առաքինի. զի եթէ մարդիկ կան որ բարի կը ծնին և այնպէս կը մնան, ինչ որ են ի բնէ, այլ կրօնքն է միայն որ բարի կ'ընէ ըզմարդ ետքէն ինչ որ չէ ի բնէ, որ յոռի 2 ծնած է կամ յոռի եղած: Ոչ խեռ 3 մնացած էր, ոչ ատելութիւն, այլ ընդհանուր եղբայրասիրութիւն: Իրարու կ'երթային, իրար կը նորհաւորէին, կը համբուրէին: Անհուն սիրոյ ծուղակի 4 մը մէջ բռնուած մոռցեր էին առջի օրուան վիշտերը, հետեւեալ առուր հոգերը և ինչ որ ըստ աշխարհի կիրք է ու շահ՝ զայն ի բաց թողեր էին: Աստուծոյ կիրքը միայն ունէին:

Ա' և, ի' նչ մեծ օր է այս օրը ուստի կը բղխին մշտահոս ալիքներով մխիթարութիւնք ու ներշնչմունք անձնուիրման, սիրոյ, նահատակութեան. և ոչ միայն Քրիստոնէին, այլ ամեն տեսակ հաւատացելոց համար՝ որոնք ի վերացականն ու ի մտացականն յառեալ են, որոնց առջեւ կը պարզի անկապտելի և անկործանելի՝ անհուն իտէականը 5: Ի' նչ կ'ըլլար, դարէ դար ու թէ հազարաւոր ու բիւրաւոր ամաց շրջաններ իրարու յաջորդէին, քանի որ հոսէր ժամանակը անսպառելի՝ մնար նաև խանդն հրաբորբոք՝ մեր հարցն ու նախա-

(1). Ազգային — (2). Գէշ — (3). Կռիւ — (4). Որոգայթ — (5). Այսինքն՝ Աստուած:


հարց, և ամեն տարի, միեւնոյն օրին, աշխարհի ամեն կողմը, ուր մարդիկ կը բնակին, Աստուածորդւոյն չարչարանաց ու խաչելութեան յիշատակը նորոգուէր, ինչպէս կը նորոգուին քիչ-չատ ամեն կեանքի մէջ, ու յարութեան օրն ալ ըլլա՛ր ընդհանուր ուրախութեան օր, աւետարեր յարութեան և փրկութեան հոգւոյ՝ տառապեալ մարդկութեան . . . :

Աւա՛ղ, մնա՛ց արդեօք այն մեր օրերուն հաւատքը : Այո՛, հիմա ալ կ'երթան շատեր եկեղեցի, կը մտնան՝ կ'ելլան . ոմանք կը ձանձրանան այն նուագները, այն շարականները լսելով . կամաց կամաց կ'ուծանան 1 կը հեռանան, և օր օրի վրայ կը բազմանայ անոնց թիւը որք եկեղեցի չեն յերթար : Ուրիշ տեսակ տաճարներ կը կանգնին հիմա, ուր իրար կը խաբեն, իրար կը կողոպտեն, ուր մարդոց բոլոր կարողութիւնք կը ձգտին 2 մի եւթ նպատակի, և որոնց մէջ քահանայներն ու քահանայապետները նոյն իսրայէլի զաւակներն են որ ատենօք Սինայի ստորոտը ոսկի հորդը պաշտեցին : Այլ ո՛ւր Մովսէս, ո՛ւր մարգարէք, ո՛ւր որոտմունք ներշնչմանց : Մարդիկ որ երբեմն գիտէին բարձրանալ հիմա թաւալիւ 3 կը սիրեն : Յուրտ ձեռք մը հպաւ կ'այն հրավառ ճակատուց, բան մը սողոսկեցաւ այն կուրծքերուն մէջ զոր մեծ մտածութիւնք ու սուրբ զգացմունք վեր կը հանէին երբեմն : Ուրիշ բաներու համար կը սկսին վառուիլ մարդիկ քան այն բաներուն համար որ մարտիրոսներ, դիւցազուններ կը յարուցանէին : Յափշտակութիւն՝ եռանդ՝ անձնուիրութիւն,

(1). Պաղիւ — (2). Հասնելու ջանալ — (3). Գլորիւ — (4). Դպրեւ

յիմարութիւն կը համարուին ասոնք. դրականը վերացականին վրայ յաղթանակ կը կանգնէ. շրեայք անդամ մըն ալ զՔրիստոս ի խաչ կը հանեն և երեսուն արծաթի կը վաճառուի ամեն օր արքայութիւնն Աստուծոյ որ ի ներքս ի մեզ է:

Գ. Ս. ՕՏԵԱՆ



Գ. ՕՏԵՂԵՈՒՄԸ ՄԱՐԿՈՑ

Իսկ հրաշագործ ճարտարապետն՝ իբր թէ պահ մը կիսկատար թողլով իր ամենէն զարմանալի շէնքը՝ կու գիտէ անոր չափակցութիւնը, և ծանրութեամբ ու մտածմամբ կուզէ այդ կաւեղէն պատկերին ազդել ողորկութիւն 1, գոյն, շարժումն, շունչ, կեանք, զգացումն, բան և հոգի, և այս ամէն ըսածներս՝ իր գիտելուն և հաճելուն ատեն կ'ազդին, կերեւին իր ձեռակերտին 2 վրայ: Տե՛ս, ի՞նչ շուտ այդոր արտաքին երեւոյթն կակղած կոկած սկսաւ փայլիլ, հետզհետէ մոմագոյն, մոխրագոյն, շուշանագոյն, ծիրանագոյն, վերջապէս մարմնագոյն, և այնքան բարակ ու փափուկ, որպէս թէ թափանցիկ մաշկ 3 մը միայն ծածկեր էր ներքին զարմանալի մեքենայն, և իբրեւ ապակւոյ մը տակէն ցուցընէր կապուտաթել ջղեր և երակներ:...

Ահա յանկարծ բարակ գլխէն ինչուան ուսերը ընձուե-

(1) Փափկութիւն, շիտակ լինելը: — (2) Ձեռքին շինածը: — (3) Մորթ:

ցան 1 արձըկեցան գունդ գունդ խոպ խոպ փուն-
 ջեր, բայց իբրև պղնձի անդրի 2 մը վրայ՝ անշարժ են .
 աղօտ աղօտ արշալուսէ մը ծագած առաւօտու պէս
 յանկարծ կ'երեւին բարակ թարթափք և յօնից 3 կա-
 մարք, որոց ներքեւ երկու մարգարտափայլ գողք կան,
 մէջ տեղուանքը սեւ ադամանդ. — անշուշտ ճանչցար
 աչքերը. բայց անոնք զքեզ չեն ճանչեր, քեզի չեն
 նայիր, չեն շարժիր, սառնամած լճակներ են, ծած-
 կուած ակունք են, որ կուզեն լոյս առնուլ և լոյս տալ . . .
 Եղիցի՛ ուրեմն լոյսն, անհամբերութեամբ կանչես .
 եղիցի՛ լոյս ի վերայ այդ սքանչելի դաստակերտիդ 4 .
 եղիցի՛ դա կենդանի պատկեր Աստուծոյ . . . Եւ ահա
 եղեւ լոյսն կենդանի: — Կու տեսնե՞ս, անդրին մարդ
 կ'ըլլայ . կ'ըլլայ ըսելու չմնար, կաւէ կաղապարն՝ 5 Ա-
 դամ եղաւ . ի՞նչպէս եղաւ, ո՞ւսկից եկաւ այն ճառա-
 դայթն, այն գոյներն, այն շարժումն . . . դեռ վայր-
 կեան մը, ըտպիկ մը, պիկ մ'առաջ՝ պատկեր էր . հիմա
 անձն է: Վասն զի հրաշագործն՝ աստուածային երա-
 դութեամբը դպաւ այդոր ճակտին, և մէկէն արձանին
 մեքենայներն սկսան շարժիլ: Դիտէ՛ դա գանգուր 6
 դիտակներն՝ 7 ի՞նչպէս բարդ բարդ կու ծփան, նայէ՛
 դա շիկորակ շրթանց՝ շարժմունքը, դա զմրուխտէ 8
 աչաց հրեղէն թաւալմունքը, երկխորշեայ ոնգանց
 բարակ շնչառութիւնը, դա գեղեցիկ գլխոյն հեզիկ
 պտոյտքը, դա ջաջուռ թեւոց թափ տալը 9 . դա դը-

(1) . (Բնձուիլ) բուննիլ, ծիւլ: — (2) . Արձան: — (3) . (Յօնք)
 (Կքուի) : — (4) . Շէնք: — (5) . Կաղապար (գալըպ) : — (6) . Ուրած
 (Խըվըռ) : — (7) . Երկայն մագ: — (8) . Զիւմթիւատէ: — (9) . Ուժ
 տալով՝ զարնել:

ույթ 1 տուող ոտից դոփիւնը 2, որ ոչ միայն անդրին
ի պատուանդանէն կտրեցին, այլ բոլոր անձին ներքին
ազդուածքէն ուժ առած՝ այնպէս սաստկութեամբ մը
դետնին թունդ կուտան, որ օղապարիկ գունդէն՝ ա-
ւելի շոյտ և բարձր սիտի ցատկէր յերկնից միջոց,
թէ որ դեռ ճակտին վրայ դրուած չըլլար մատն աստ-
ուածային, որ իբրև ամեհի երիվար մը՝ սանձով,
կամ ծխով հողմով զինուած պատրաստ նաւ մը՝ խա-
րըստով, դեռ բռնեք է զայն, բայց այնպէս մը կ'երևի՝
թէ հազիւ և ոչ ընդերկար կրնայ համբերել բռնուածն:
Իսկ աստուածպետականն 3 յետին հաճութեան ժը-
պիտ մ'ալ տալով, իր անքննելի ծոցէն կու փչէ նո-
րաչէն պատկերին վրայ շունչ մ'այլ. շունչ բանական,
աննիւթ և անապական, որով բոլորովին կ'ըլլայ կու
կատարուի մարդն, և հաղորդ աստուածային զօրու-
թեան, աստուածային երազութեամբ մը ճանչնալով
ինքզինքը, ի'նչպէս և ուստի՝ ըլլալն, միանգամայն
աչքով և շրթամբք, թեւօք և ծնոքօք, սրտիւ և բա-
նիւ և հոգւով կու կանչէ՝ Աստուած՝ իմ:

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ

10. ՓՈՔՐԻԿ ԱՌՈՒՆ

Փոքրիկ առուն կ'ուսգէ ծաղկաւէտ 1 դաշտ մի: Կը խաղայ յառաջ կոյս երփն երփն 2 մարգագետիններու մէջ մանուածապատ 3 չրջանօք, սողոսկելով մեղմով ծաղկանց միջոցներէն և հաղիւ հեռանալով այն հեշտալի տեղերէն: Այն ինչ 4 կը թողու դաշտը, կը թափէ իւր ջուրերն ահագին ապառաժներէ վար: Փոխանակ քաղցր զեփիւռին որ կը խաղար երբեմն անոր խաղաղ ալեաց վրայ, խստաշունչն հիւսիսի 5, փախուցեալ իւր խոր անձաւներէն, կը խռովէ վէտ վէտ 6 անոր բիւրեղեայ երեսը: Յառաջ տանելով առուն իւր գնացն 7 արագութեամբ՝ կը սահի մեծ քաղաքի մը դուռը, կը հոսի անոր հոյակապ շինուածներուն առջեւ, յետոյ կելէ դուրս, և կը կորսուի դարձեալ ծաղկաւէտ աշտոներու մէջ: Ի ճանապարհին կը հանդիպի խաղաղ գիւղերու, և կուռգէ հարուստ այգիներ: Յետ սակաւու կը գտնէ զինքն լքեալ ահեղ ամայութեան մէջ, կանաչագեղ պուրակ 8 մը կելէ անոր առջեւ, առուն կը մտնէ անոր հիանալի հովանուոյն տակ, բայց կը թողու զայն վաղվաղակի՝ երթալ ուռոգել աւաղուտ դաշտ մը, մինչեւ կը կլանէ զնա Ովկիանոսը, և կուտայ վախճան անոր անհարթ 9 ընթացից: Այս է պատկերը որով իմաստուն մը կ'ընծայե-

(1) . Ծաղկալից — (2) . Գոյնզգոյն — (3) . Ոլրած — (4) . Դեռ նոր — (5) . Հիւսիսային հով — (6) . Պէպճացող (տալկա տալկա) — (7) . Ընթացք — (8) — Անտառ — (9) . Զշտկուած:

ցուցանէ մեզ կենաց ընթացքը զոր կը կատարէ մարդ աշխարհի վրայ, երթալով՝ մերթ զուարճալի և ծաղկազարդ շաւիղներով 1, և մերթ դժուարին և գրեթէ անկոխ ճանապարհօք, մինչեւ կը հասնի ի դրունս յաւիտենականութեան ուր կը գտնէ հուսկ ուրեմն 2 հանգիստ:

Թարգմ.

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵՍՆ



11. ՄԱՐԴՆ

Ամենայն ինչ ի մարդն, արտաքինն անգամ, կը ցուցնէ անոր առաւելութիւնն ուրիշ բոլոր շնչաւորաց վրայ: Մարդն է որ կը կենայ և կը գնայ կանգուն և և ուղղորդ 3, իշխանութեան ձեւ է այս: Ունի գլուխ որ կը նայի ի վեր կոյս, փառաւոր կերպարան՝ ուր գրոշմուած է մեծութիւն. գէմք՝ ուր նկարուած է պատկեր հոգւոյն, բոլոր մարմինն հայելի է նորա բնութեան առաւելութեանը, և երկնային իմն հուր կը լուսաւորէ անոր երեսին վրայ ամէն ծիր 4 և խորշ: Պատկառելի կեցուած, հզօր և պերճ 5 գնացք կը ցուցնեն ազնուականութիւն և աւագութիւն 6. մարմնոյն հեռաւոր ծայրովը միայն կից է երկրի, բարձուէն կը նայի ի գետին և կ'արհամարհէ: Բազուկներուն վրայ չէ

(1). Ճամբայ — (2). Վերջապետ — (3). Շիտակ — (4). Շրջան — (5). Փառաւոր — (6). Մեծութիւն:

որ կը յենու 1 մարմնոյն ծանրութիւնը, ձեռքը չեն շօշափեր հողը, և ոչ ստէպ շփմամբ ընդ դետին կը փապարին 2 մինչև կորուսանել շօշափման նուրբ նուրբ ազդումները որ մեծազոյն առաւելութիւնք են մարդուն: Բազուկը և ձեռքը տրուած են մանաւանդ ի պէտս աղնուազոյն գործոց, այն է՝ կատարել կամաց հրամանները, հեռացնել արգելներ, չթողուլ որ ընդհարմունք կամ հարուածք վնասեն մարմնոյն, բռնել և առնուլ ինչ որ հաճոյական է, և տալ վայելել զայնս միւս զգայնոց 3:

Թարգմ.

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

12. ԶԱՆԳԱԿՆ

Ա՛հ, զանգա՛կն, ի՛նչ գործի բանաստեղծական. զանգակն որ հո՛ս, վե՛րն կը կախուի օդոց մէջ՝ անշունչ՝ բայց կենդանի, բայց պերճախօս. անձնիւր 4 մարդոյ մտաց մէջ ի՛նչ և ո՞րպիսի յիշատակներ կապուած են իւր ծննդավայր գիւղին կամ թաղին զանգակին հետ. մինչ մանուկն էր՝ ի թինդ 5 այդ սրբազան սղնձոյն կը զարթնոյր, նորա ձայնով կ'աղօթէր ձեռնամած իւր մօրկան քով ի ծունր, կամ կը դիմէր տաճարն՝ զոր այնքան կը սիրեն մանուկն և կիսն, այդ

(1). Կրթիւլ. — (2). Ծակ բանալ. — (3). Զգայութիւնք. — (4). Առն մէկ. — (5). Թնդալով:

ձայնն աւելի աշխոյժ, կ'աւետէր կիւրակէն և տօնն, երջանկութիւնքն մանուկին. զի ա՞րդ կը տխրէր իւր մատաղ ու քնքոյշ 1 հոգին, երբ զանգակն, տրամաձայն օդոց մէջ կ'ողբայր մահն. կը յիշէ այն գիշերներն ուր զանգակին տագնապափոյթ 2 գանչիւնն 3 ընդոստ զարթուցած էր տունն ու թաղն 4 «Նրդե՛հ» գուժելով, և իւր արհաւիրքն, և իւր արցունքներն. լացա՛ւ իւրեան հետ այդ պղինձն՝ երբ իւր հայրն կամ մայրն եղբայրն կամ քոյրն կը յուղարկաւորէր վերջին անգամ Աստուծոյ տունն և անտի մեր ամենուն վերջին տունը. հռչակեց նաեւ իւր կենաց մէջ այն երջանիկ օրն, ուր նոր փեսայ, սեղանին ոտքը տարաւ իւր հոգւոյն և կենաց ընկերն: Այս ամէն յիշատակներն և նոցա յարակցութեամբ 5 անցած գացած օրերու և դիպաց բոլոր զուարթ ու տխուր պատկերներն կը վերակենդանանան յիշողութեան մէջ. մանաւանդ, երբ մարդ, երկար մի բացակայութենէ՝ յետոյ, կը դառնայ իւր ծննդավայրն և ի հեռուստ կը նշմարէ իւր գիւղին կամ քաղաքի զանգակատանց մէջէն իւր թաղին զանգակատունն. այդ առարկայն մի հոգի է, մի բարեկամ հոգի, որ գոգցես 6 իւրեան կ'սպասէր, որ ամենէն առաջ կը դիմաւորէ զինքն միջոցին մէջէն, որոյ ձայնն կը ճանաչէ բազմաթիւ տարիներէ յետոյ և բազմաթիւ զանգակաց մէջ, զոր գտնելով պանդուխտն կը կարծէ գտնել վերստին բոլոր իւր սէրն, բոլոր իւր ե-

(1). Փափուկ — (2). աճապարելու: — (3). Զանգակի ձայն: — (4). Պարուհակողը փախանակ պարուհակեղջն: — (5). կապ: — (6). կարծես:

բազմերը, բոլոր իւր յիշատակներն, իւր մանկութեան մանաւանդ որ՝ որչափ ապրինք այնքան աւելի մարած օրերու ծուխին մէջէն կ'ընծայէ մեր աչաց իրրեւ երանաւէտ դարնանազարդ Ովասիս 4 անապատին փոթորկայոյղ աւազին մէջէն:

Ռ • Յ • ՊԵՐՊԵՐԵԱՆ

13. ՅԻՊԱՐ ՕՐԻՈՐԴ ՄԻ

Անտիոպէ 2 հեղ է, անպաճոյճ 3 և զգօն: Նա չարհամարհեր աշխատութիւնը, կանխատես է և տնտեսող, գիտէ լուել, և գործել կարգաւ, առանց աճապարանքի միշտ զբաղեալ է, և չչփոթիր երբէք. որովհետեւ ամէն ինչ յարմար ժամանակին կ'ընէ. իւր հօրը տան կարգապահութիւնը նորա պարծանքն է. և այնու աւելի կը փայլի քան գեղով: Ամէն բան կը հոգայ թէպէտ, և պաշտօն ունի մերժելոյ, ուղղելու, խնայելու, բանե՛ր որ անտանելի են իգական սեռի մէջ, այսու հանդերձ սիրելի է իրեններուն. որովհետեւ չունի կիրք, հպարտութիւն, թեթեւութիւն, քմահաճոյք, ուրիշ կանանց պէս: Մէկ նայուածքով նա կը հասկըցնէ, և ամէն անձ կը վախնայ անոր տհաճութիւն տալէ: Ճշգրիտ հրամաններ կուտայ, և միայն գործադրելու հնարաւորներն: Քաղցրութեամբ կը կշտամբէկ, և կըշ-

(1). Անապատներու մէջ բարերէր տեղուածք: — (2). Դուստր, իգամենեայ, արբային կրեաացւոց: — (3). Պարզ: — (4). Անարգել:

տամբելու պահուն իսկ .կը քաջալերէ : Հօրը սիրտը անոր վրայ կը հանգչի , որպէս արեւահար ուղեւոր մը կը հանգչի հովանւոյն տակ դալարւոյն վերայ : Նորահոգին մարմնոյն պէս սնտաի զարդերով չզարդարուիր : Երեւակայութիւնը թէպէտ աշխոյժ այլ ի չափու է . կարեւոր բաներ կը խօսի միայն : Եւ եթէ շրթունքը բանայ , քաղցրութիւն և շնորհքներ կը հոսեն անկէ :

ՅԵՆԵԼՈՆ 1 .

14 . ԱՌ ԱՐԵՎԱԿՆ


Գու որ մեր գլխուն վրայ կը թաւալիս և իմ հարցս վահանին նման բոլորակ ես , ո՞ւստի կուգան քու ճառագայթներդ , ո՞վ արեւ , ո՞ւստի քու յաւիտենական լոյսդ : Կը յառաջես քու մեծավայելուչ գեղովդ , և աստեղք երկնից խորոցը մէջ կը ծածկեն ինքզինքնին , և լուսին՝ թալկացեալ և ցուրտ՝ կընկղմի յալիս արեւմտից : Բայց դու , դու միայն ինքնաշարժ ես : Ո՞վ կրնայ քու ընթացիցդ ետեւէն հասնիլ : Լերանց մայրիքը կ'իյնան , և լերինք անգամ կը կործանին ամաց ծանրութեանը : տակ , Ովկիան կը բարձրանայ ու կը խոնարհի : Լուսինը կը կորսուի երկնից ընդարձակութեանը մէջ :

(1) . Յենեւն Արք եպիսկոպոս Գամպրէի , նշանաւոր մատենա գիր Գաղիացի : Իւր գլուխ գործոցն է «Արկածք Տեղեմագոյ» զոր Հ . Ե . Հիւրմիւզեան թարգմանեց ի գրաբար , նորա «Դաստիարակութիւն աղջկանց» գիրքն ևս թարգմանեալ է յաշխարհիկ բարառ ի ձեռն Հ . Ամբ . Վ . Գալֆաեանի :

դու միշտ նոյն ես, միշտ փայլեալ նովին պայծառութեամբ՝ քու յաւիտենական ընթացիցդ մէջ: Երբոր աշխարհ կը խաւարի մրրօք, երբ կայծակունք կը շառաչեն, երբ կը սլանայ փայլակը, կերեւնաս դու քու գեղեցկութեանդ մէջ ամպերուն մէջէն, և կը ծիծաղիս մրրկաց վրայ... Աւա՛ղ, ի դո՛ւր է քո փայլդ Սփանի համար, վասն զի քու ճառագայթներդ չտեսներ, թէ՛սէտեւ ոսկեղէն գէսերդ ծածանին արեւելից ամպերուն վրայ, թէ՛սէտեւ լոյսդ դողդղայ ի դրունս արեւմտից... Բայց թերեւս դու ալ ինծի պէս մէկեղանակ մը ունիս ո՛վ արեւ. թերեւս քու տարիներդ ալ ունենանիրենց վախճանը: Թերեւս ննջես դու ալ՝ քու ամպոցդ գրկացը մէջ, և չլսես առաւօտեան ձայնը:

(ՈՍԻԱՆ) 1

(Պատմ. Մատենագրութեան Միջին դարու)



15. ԺԱՄԱՆԱԿ ԵՒ ԱՊԱԳԱՅ

Ի՞նչու համար ժամանակը միշտ ծեր մը ձեւացնեմք ու չորցած ձեռքը կործանման մանդաղը տամք:

Ժամանակն որ կը սպաննէ՝ կը կենդանածնէ նաև, այն ձեռքով որ կը կործանէ, նովին նաև կը կանգնէ,

(1) Ռօհան, հռչակաւոր քերթող Սկովտիացի, որ Մակբերոսը՝ նանուն Անգղիացւոյն շնորհիւ յայտնուեցաւ. նորա գիրքն «Կատիք քերթութիւնք» բարձր իմացականութեան և աշխոյժ երեւակայութեան հրաշակերտ մ'է:

հոս կենաց աղբերքն որ կը ցամքեցնէ, գիտցի՛ր որ ուրիշ տեղ ալ յորդահոս Վ կը բղխեցընէ զանոնք: Միթէ՛ թողմած թարշամած վարդին քով չե՞ս տեսներ դեռափթիթ 2 կոկոնը:

Ո՛ր ժամանակ, ծաղկօք պիտի պսակեմ զքեզ, սիրով պիտի պատեմ, և աչքիդ մէջ պիտի դնեմ երիտասարդութեան կրակը, վասն զի բուն անունդ Ապագայ է: Ապագայ՝ որ միշտ առոյգ երիտասարդ է և միշտ գեղեցիկ, Ապագայ՝ որ միշտ մեր աչքին լուսապայծառ քողով մը ծածկուած կ'երեւնայ:

Բարէ՛, ի՞նչպէս կրնամք մեր յոյսերուն պարապ ելնելը մոռնալ: Միթէ՛ ժամանակը չէ՞ որ անսահման, նշուլագեղ և քաջայոյս ակնկալութեանց ընդունայնութիւնը մեզի կը հասկցընէ: Այս փունճ ելած ակնկալութեանց մշտաչարչար տրտմութեամբը կը հալի կը մաշի հոգին, և պատրանքը մէկիկ մէկիկ կը թռչին կանյայտանան՝ սրտերնիս ամայութեան ու ցաւոց մէջ թողլով: Արագ արագ կը փախչի կերթայ երիտասարդութիւնը, շուտով կը յաջորդէ անոր տխուր ու ցաւագին ծերութիւնը, եւ ալ ի՞նչ կը մնայ: Երբոր կանաչագեղ տերեւները կը թափին կիյնան, ի՞նչ կը տեսնեմք, փա՛յտ չոր: Բայց ոչ, հոգին չկորսուիր: Ոչ, իրեն համար Ապագայն իւր մտահաճոյ երազներէն աւելի գեղեցիկ է, երեւակայութիւնը արեւէն աւելի անհուն. և երբոր մարմինը վշտահար 3 ու վաստակաբեկ դէպ ի երկիր կը խոնարհի կիյնայ, դէպ ի երկիր


(1) Առատութեամբ հոտող — (2) Նոր բացուած — (3) Թըշուաւ:

որ իր հողոյն մէջ նորէն ղինքը պիտի խառնէ, այն ատեն հողին աւելի կը զօրանայ, վրան նոր եռանդ նոր աշխոյժ կուգայ: Այն մարմնոյ խոշոր ծածկոյթը ղինքը կը խռովէ, վրան կը ծանրանայ, և երբեմն նաեւ ղինքը կը մոլորեցընէ: Բայց երբոր ցաւերու տակ ընկճած՝ այս աշխարհիս վրայ ապրիլը կը մոռնայ ու անհնարին վշտացը մէջ թեթեւ քուն մը կըլլայ, յանկարծ ձայն մը կը հասնի ականջը որ «ե՛կ» կ'ըսէ իրեն:

Կը ճանչնայ այն սիրուն ձայնը, կը տեսնէ բնագաւառը, կուրախանայ, և նոյն խնդութեամբը կ'արթըննայ. ա՛լ հրաման է իրեն որ ցաւալից բնակարանին չղթաները խորտակէ. կը թողու մահկանացու մարմինը որում այնչափ երկար ժամանակ գերի եղեր էր, և սլացեալ կը վերադառնայ յերկինս: Հոն կիմանայ իր անմահութիւնը:

Կը վայելէ անոր անպատմելի քաղցրութիւնները, և ստեղծողին սիրովն արբած՝ կը վառի կը բորբոքի ու երբէք չհատնիր:

(ՄԱՍԵԱՅ ԱՂԱԻՆԻ)



ԳԼՈՒԽ Բ.



ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆՔ

ԵՒ

ԵՂԵՐԵՐԳԱԿԱՆՔ



1. ՀԱՅ ԳՐԱԳԵՏՆ

Իր բարձր կոչման հետեւելով, իր սուրբ ուխտին հաւատարիմ մնալով՝ կոչեցեալ էակը կը սպտորաստուի ամեն տեսակ զոհողութիւններ ընելով, կը գործէ ցերեկը՝ մատենագրելով ու քարոզելով ու դասախօսելով, կը հսկէ գիշերը՝ խորհելով ու երազելով: Աչքերը կը տկարանան տժգոյն թերթերու վրայ նայելով — քանի՛ լոյսն աճի մտքին մէջ, նոյնքան լոյսը կը մարի աչքին մէջ, կը տկարանայ մարմինը տքնութեամբ ու տարապայման Վ աշխատութեամբ, դիւցազնի մը գործ կատարելով ու թռչունի մը սնունդն հագիւ առնելով:— Ու կը խորհի մերթ ընդ մերթ. երբ շուրջը կը նայի ու հին օրերուն յիշատակը սրտին մէջ կը նորոգի, երբ կը կարծէ տեսնել իւր հայրիկ կամ անոր

(1). Չափազանց:

ճայնը լսել քաղցրիկ, այն ատեն կը խորհի թէ հայ-
րիկն՝ այն տարիքին մէջ՝ ուր ինք կը գտնուի՝ կը ճա-
րէր իւր ապրուստն, իր ու ընտանեաց ապրուստն
անտաղտուկ աշխատանք կը հայթայթէր, առանց
տքնելու գիշերը, առանց տառապելու ցորեկը: Կը
խորհի թէ իւր հայրը՝ դեռ երիտասարդ՝ քանի մը զա-
ւակաց տէր, ու տունի տէր, ու գործարանի տէր ե-
ղած էր ու զինքը՝ վառվառն պատանեկիկ՝ մայրիկովն
ու եղբայրիկներով հանդերձ՝ ամեն կիրակի զբօսանքի
կը տանէր ու շաքար կառնէր, քաղցրաւենին ալ սեղա-
նին վրայ մերթ կը բուրէր ու կը կարմրագունէր...
Հիմակ՝ ինքը կորաքամակ չարդէն՝ թէև անզաւակ
տակաւին, զրկուած զբօսանքէ, զրկուած սիրտանքէ,
իր բոլորտիքը սիրելով գրած թերթերը, երբ հովն
ալ անդին կը թափթփի ծառոց անգիր թերթերը.
տօն օրերը գլխահակ 2 իւր գրասեղանին վրայ, երբ
համատիք երիտասարդք ու երիտասարդուհիք թեւ ի
թեւ կը շրջին, կառքով ու շոգեկառքով կը շրջագա-
յին, կոհակէ կոհակ 3, պուրակէ՝ պուրակ 4, վայելքէ
վայելք կը թռչին, կը բաշխեն արծաթ՝ որով իրենց
գրպանը լցուած է, ու փոխարէն արծաթին՝ իրենց ո-
տից ներքեւ ծաղկափունջեր կը սիրուին՝ որոնց վրա-
յէն կը քայլեն բերկրագին՝ արբենալով բոյրերով 5 ու
երանութիւններով անգին: Այն պահուն ի՞նչ կընէ
ինքը, գրագէտը, ազգին երախտաւորը, լայն կէս
մարմնով և անհամար հոգիներով՝ էակը որուն անու-

(1) Քամակը ծռած — (2) Գլուխը խոնարհած — (3) Մեծ
այիւր — (4) Անտառ — (5) Անուշահոտութիւն:

բանալի ծառայութիւնները կը պաղարերին ամէն օր՝
 թէպէտ օր մ'ալ վարձատրութիւն չընդունին. որուն
 եռանդուն դասախօսութիւններով կը պատրաստուի
 նոր սերունդն ազգին, որուն ոգելից ու իմաստալից
 գրութիւններն ծիծաղներով կ'ընդունուին, — ա՛յն
 գրութիւններն զորս արհամարհանօք կարդացողները կը
 լուսաւորուին օրէ օր՝ կարծելով որ ինքնիրեն այդ
 բարեփոխութիւնն անձերնուն վրայ կը կատարուի.
 Կէ՛գ Վ գրագէտը՝ կըսեմ՝ ի՞նչ կընէ, երբ իր՝ հասակա-
 կիցները իշխաններուն, սեղանաւորներուն, վաճառա-
 կաններուն զաւակները քսակնին ոսկւով ու սրտերնին
 ուրախութիւնով լի՝ կը պատին ծիածաններու 2 տակ ու
 ծաղիկներու վրայ: Կէ՛գ գրագէտն՝ ո՞ւր կը շրջի, ո՞ւր
 կը նայի կէգ գրագէտն:

Ծ. ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ



2. ԱԽԱՎԱՆՑ

Ախավանց՝ Աղթամարայ ջրհանն է. ո՛րքան նազելի
 կը ճեմէ Վ ու կը բազմի Ախավանցն այս եզերաց վրայ.
 Զաղացքներ կը բանին անդադար. ջրեր կը կարկաջեն
 որոտալից, ծառերը բարձրացած են յուսթի 2 տերեւա-
 լից, պտուղներ ի կախ և ի սփիւռս ի դրախտին 3, կլօրն
 ու ձմերուկ հասունցած են, և սուրբ ակժողոյն կրօնա-

(1). Թշուառ. — (2). Մերանի գօտի. — (3). Քաշէլ. — (4). Պրտ-
 զարեր: — (5). Պարտէզ:

ւորներէն ու մոնթերէն 1 կը տեսնուին ի ճեմ, ի զբօսանս, և ընկողմանած կանաչներու վրայ, հովանեաց շուրջը, ջաղացքին վաքդէզը, բուրաստանին մէջը՝ Ուրազի և սղոցի ձայները կը գրաւեն մեր ուշքը, շէնքեր և սենեակներ և վեհարան մը կը շինուի հոս, և Աթոռդիկոսն կայսերական նշաններ ի կուրծս՝ կը հրահանդէ շինողները. ապա կը քաշուի իւր սենեակը, ուր կ'ընդունի շէխեր և քրդեր որք ակնածութեամբ ծնկածալ նստած են նշանակիր կուրծքին հանդէպ, որոյ մէկ կողմը ծով կը ծփայ, միւս կողմէն ժողովուրդը։

— Ասպոյտ ու աղի ջրեր, ի զո՛ւր կը գոռայք, ի զո՛ւր կը թափիք Ախաւանից ափը, ի զո՛ւր կը խառնէք աւազներ, ի զո՛ւր կուռչիք 2 խորերէն, և բարձրակոյտ կոհակներով կը խոյանաք կը զարնուիք ցամաքին։ Ոչ ոք կը հասկնայ թէ ի՛նչ կուզէք դուք, ի՛նչ կըսէք դուք, ի՛նչ կաղաղակէք։ Քո արձագանդը, ո՛ր ջուր, Ախաւանից անդին կը լսուի ժողովրդեան սիրտերու մէջ, տառասպանաց ալիքներով խռովեալ ծփանաց ձայնով, որք ամէն մի շարժմանդ ու զարկմանդ՝ ա՛խ կընէ, և իւր ախը Ախաւանից վրայէն անցնելով կուգայ կիյնայ քո խորերուն մէջ...

Քարին զա՛րկ ալիքդ, Աղթամարայ ժայռին, կղզւոյն հողերուն, գուցէ նա շարժի զգածուի, հոն Աստուծոյ տաճար կայ հոյակապ, հոն սուրբ Խաչն Քրիստոսական. հոն՝ գոնէ կը լսուին մրմունջք աղօթաւորաց. — «Մով կենցաղոյս հանապազ զիս ալեկոծէ»։

Քեզ յուխտ ախտի գայի, ո՛վ Գազկաչէն մեծագործ

(1). Աբեղայ — (2). Ռուիւ։

տաճար, քեզ յերկրպագութիւն՝ ո՛վ Աստուածակիր
աւուրք նշան, քեզ ի զմայլումն՝ ո՛վ ժայռ խորհրդա-
ւոր, ժա՛յռ՝ որոյ վրայ կը կենայ մրրկաց հրամանա-
տուն, ուր Առաքիլն և Ասաղունք ծովը իջնալուն և ծո-
վէն ելլալուն կը հանգչին զովասուն, ուր Արուսեակն իր
քօղը կը ձգէ, և Արեգակն իր պատմունճան կարկանէ
իրիկուն և առաւօտ: Վա՛յր աննման:

Գ. ԵՊԻՍ. ՍՐՈՒԱՆՁՅԵԱՆՑ

Յ. ՀՈՂՄԱԿՈՅ ԱՆՏԱՌ

Ար սիրէի ես յաճախ հողմայոյզ մարգագետնի մը
եղբը նստած, անտառով շրջապատեալ մենաւոր
հովտի մը մէջ տեսնել ծիրանագեղ առուոյտներ 1 և
դալար սէզեր՝ 2 որք կը տատանէին վէտ վէտ ալեաց նը-
ման, և կը պատկերացնէին աչացս առջեւ դալարեօք և
ծաղկամբք յուզեալ ծով մի: Ահա հողմոց շնչով կը
շարժէին գլխոյս վերայ անտառաց վեհաշուք կատար-
ները: Ամէն մին իւր շարժումն ունի: Հաստարմատ
կաղնին իւր ոտերը միայն կը խոնարհեցնէ, առաձգա-
կան եղեւիներ կը տատանէ իւր բրգաձեւ բարձրութիւ-
նը, սէզ 3 կաղամախին կը շարժէ իւր յարայոյզ տերե-
ւակոյտն, և ցարասին կը թողու իւր սաղարթուց շար-
ժին յայերս իբրեւ երկայն գիսակ: Արծես կրիւք

(1). Եօննա — (2). Խոտ — (3). Հոգարտ:

յուզուած են . մին չափազանց կը խոնարհի իւր մերձաւոր ծառայն քով իբրեւ վեհագունի առջեւ . ուրիշ մը դրկախառնիլ կը նկրտի մտերմաբար . ա՛յլ ծառ կը յուզուի խորազգած իբրեւ թշնամւոյ մի քով : Յարգանաց , բարեկամութեան , ցասման զգացումներ կարծես կարգաւ մէկէն միւսին կը փոխանցին , ինչպէս մարդկային սրտերու մէջ , և այս դիւրափոփոխ կրքերը հողմոց խաղերն են որոշակի : Մերթ հինաւուրց կաղնի մը անոնց մէջէն կը բարձրացնէ իւր տերեւամերկ , անշարժ , սաւառնաթեւ ճիւղերը , ծերունւոյ մը նման՝ որ չմասնակցիր իւր շուրջն յարուցուած ամբոխմանց և ուրիշ ժամանակի մէջ ապրած է : Եւ սակայն այս ըզզայազիրկ մեծամեծ տարերք լսելի կընեն խոր և մեւաւաղձիկ շփոնդ : Ասոնք տարբեր շէշտեր չեն . սոքա շփոթ մրմունջք են իբրեւ ամբոխի մը՝ որ ի հեռուստ կը հանդիսացնէ ցնծութեան աղաղակներով տօն մի : Հոն չեն արձակուելր մեծագոչ աղաղակներ , այլ միակերպ ձայներ , յորս կը լսուին համր և խորին աղմուկք՝ որք զմեզ կը լնուն քաղցրախառն տրտմութեամբ :

Պ . ՏԸ-ՍԷՆ-ԲԻԷՌ 2

4 . ՎԻՍՍՈՍ

Վիսպատ ենք . վայրն է գեղեցիկ ու հանդարտիկ — հոս ջրը ծիծաղ մ'ունի , երկինք ծիծաղ մ'ունի , որ անմեղ աղջկան ծիծաղին կը պատասխանեն : Անտառն

(1) . Յուզմուկք — (2) . Պ . ՏԸ-ՍԷՆ-ԲԻԷՆ . հռչակաւոր մատենագիր Գաղիացի . նորա գլխաւոր գործերն են , Դաշնակէք բնութնութեան , Պօղ և Վերգիինէ , Ուսում բնութեան : (1787—1814)

իր գօս 1 տերեւոց խօշիւնն 2 ունի, իր մամուսպատ ծառերն ու ծառի կոճերը 3, իր քարանձաւը, իր սահանքը, իր բացավայրն և իր հովուաց հովիտը: Կը մը-խիս անտառին մէջ, կը խորասուզիս, և նա ի խորոց անհուն մթութեան կերկերածայն թռչնոց վայիւններովն և ահագնագոչ ծառերուն սօսափիւնովը կը պատասխանէ սրտիդ անհուն աղաղակներուն: Քիչ մ'անգին կը տեսնես որ ահագին ապառաժ մը երկնից դէմ կը ցցուի ու կարծես շանթը 4 կ'արհամարհէ, իր լօռուտ կողերուն վայրի կանաչին վրայէն կաթիլ կաթիլ ջուր մը կը մզի 5 վճիտ, փայլփլուն, զովագին, և այն կաթիլը հեղեղ կ'ըլլայ, որ զմայրիս կը խորտակէ ու անհուն հովիտ մը կը փորէ իր ճամբուն վրայ. հոս՝ ջրվէժ, հոն՝ ջրի առուակ, հոս կը դըդչէ 6, հոն՝ կը կարկաջէ, հոն՝ ամպերուն հետ թխադոյն կորոտայ, հոս՝ դալարագեղ ծաղկասփիւռ խոտերուն եզերքը՝ մանուածապատ 7 ման կուգայ, հոն՝ կը փրփրայ, հոս՝ կը փայլփլայ, և արեւուն նախածագ փայլիւններուն առջև կը կարմրի:

Հոն է ներդաշնակութիւնը, կարգը այս անկարգութեան մէջ է, և զի մարդուն ձեռքը ոչ ժպիրհ 8 այլ համեստօրէն խառնուած է բնութեան գործոցը, անոր կամացն ու քմացը հնազանդելով, և զի բնութիւնն է որ կը տիրապետէ:

Գ. Ս. ՕՏԵԱՆ

(1). Չոր (տերեւ ևն.) — (2). Խըրտոց (տերեւի) — (3). Արմատ — (4). Կայծակ — (5). բարակ մը վազել — (6). Ջրի ձայն հանել — (7). Ոլորած — (8). Յանգուզն:

Ծ. ՄԱՂԻՅ

Մովսիկն աչքի ձեւ ունի, կոյսի մը աչքին պիտի ըսէի, բայց ա՛լ ճիշդ մանկամարդ այրւոյ մը նմանէր, խորհրդաւոր գեղեցկութեամբ և շնորհքով զեզուն ապանողի լ մը, զոր արտասուքն աւելի հրապուրիչ կը գործեն լերանց շրջանակի մը մէջ ամփոփուած, և ինչպէս սեւ ոսպ մը, աչքին բիրբը՝ այնպէս կը մնայ և կերեւնայ սեւ ու քայքայուած շէնք մը ծովուն մէջ, կղզեակ-դղեակին վրայ Ս. Նշանի տաճարին աւերակն: Ո՛ր աւերակ, որքան զերկինս բարձր ես և մեծազայելուչ իմ սրտիս վրայ...: Գիշերը անքուն անցուցինք, արշալուսին նաւ նստեցանք կղզին երթալու, աւա՛ղ աչերուս, սեւ ու սպիտակ քարեր ցիր ու ցան, խարխալեալ 2 որմունք և եթ կան...:

Համբո՛յր քարերուն, համբո՛յր հողերուն, համբո՛յր փլատակաց վրայ բոլսած խոտերուն: Լուսատիպ 3 մը պէտք էր ճիշդ այս պահուս, սոյն Աստուածարեանի աւերակին և Աստուածարեալ Մովսիկին տխուր և վսեմ տեսին տպէր, պատկեր՝ զոր աւելի կը կենդանացնէր արեւուն ծագման քնքոյշ ճառագայթն և լերանց ու ծառոց ստուերները կը կախէր երկնափայլ ծովուս բիւրեղեայ ծոցոյն մէջ. այս պահուս՝ երբ ձկունք երամովին կը կայտուէին, երբ թռչունք թիւ թիւ կը թռչէին: Բայց ինչո՞ւ ամենքն ալ անձայն էին լա՛հ,

(1). Աէք — (2). Փլած — (3). Լուսանկար:

երբ լուեր էր ներսէսին քնարը «Չարթիք փառք իմ»
 երգելէն, զոր կը նուագէր զուարթն հոգւով «ընդ-
 զուարթունս նոր երգս առեալ նուագողին» և կը կըրկ-
 նէին այս թեւաւոր ալախօսիկ տիրացուք «Ալէլուիա»
 այն օրէն ալ լուած էին թռչնոցս դայլայլիկք:

Ո՛վ կրնայ բաժնուիլ ձեզմէ, ափ ու աւեր Ս. Նշա-
 նայ: Ո՛վ կրնայ թողուլ զձեզ, քարինք և ալիք Մովկ-
 դղեկիս: Արդեօք որքա՞ն պիտի ապրինք դուք և ես,
 տա՛յր ինձ երկինք այն երջանիկ առիթն կրկնելու ան-
 յագ համբոյրս և անհատ արցունքս ի ձեզ:

Լերինք և եթերք Մովկիկիս, ձեզ, որ զուարթ խայ-
 տանօք ազդած և շարժած էք երկնային Աշուղին և
 զգացմանց քնարին հոգեղէն թեւերը:

Ատեղք և արեգ՝ ձեզ, որ պայծառ և շքեղ ճա-
 ռագայթներով ոգեւորած էք պայծառ հոգին հոգե-
 նուագին «Առաւօտ լուսոյ արեգակն արդար, առ իս
 լոյս ծագեա» գեղգեղողին 2:

Գ. ԵՊԻՍ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Ե. ԵՐԿԻՐ ԵՐԿԻՐ

Ինչո՞ւ համար այնչափ տխուր ու տժգոյն ես, Փեր-
 տինա՛նտ: Անշուշտ գէշ լուրեր ինձ կը բերես:

(1) . Բանաստեղծ արեւելցի — (2) . Շնորհալուցն՝ որոյ գերեզ-
 մանն է Մովկ—ընտկին կղզեակն:

— Տէր, ալ չեմ կրնար նաւաստիքը բռնել. թէ որ ծովեզերքը չերեւնայ, վճարեալ է ամէն ինչ, վասն զի ամենքը մէկ բերան արիւնդ կուզեն:

Դեռ խօսքը բերանն էր և ահա կատաղի ամբոխը հասաւ: Ապստամբաց ազաղակը, խաղաղ նաւահանգըստին մէջ թափուող խռովայոյզ ալեաց ձայնին կը նմանէր:

Մատնի՛չ, դաւաճա՛ն, կը գոչէին, ո՞ւր են մեզի ըրած խոստմունքներդ: Ազատէ՛ զմեզ անօթութենէ՛. հա՛ց տուր մեզի որ ուտենք, և թէ որ չունիս, արի՛ւնդ տուր որ խմենք:

Վսեմախոհ Գոլոմպոս անոնց կատաղութեանը դիւցաղնական քաղցրութեամբ մը պատասխան տուաւ.

— Թէ որ արեամբս կրնաք երջանիկ ըլլալ, ձե՛րն է՛ առէք. բայց թողէք, կաղաչեմ, որ արեւուն իր նուիրական ճառագայթներովը արեւելքն ոսկեզօծելը մէկ մըն ալ տեսնեմ: Թէ որ վաղը բնաւ ազատարար փուռք մը չերեւնայ, այն ատեն ես ձեզմէ մահս պիտի խնդրեմ. բայց մինչեւ այն ատեն նոյն ճամբուն հետեւեցէք և վստահ եղիք յԱստուած:

Դիւցաղին հանդարտ ու անխռով կերպարանքովը նորէն կը հանդարտին:

— Տէր, ըսածիդ պէս ըլլայ, կը կանչեն միաբերան, բայց թէ որ արեգակն առանց մեզի փրկութիւն ցուցնելու ելնէ, անոր լոյսը վերջին անգամ տեսած պիտի ըլլաս:

Եւ արեգակը հորիզոնէն վար կիջնար, վերջալոյսը գիշերուան տեղիք կուտար. և նաւապետին կուրծքը

ճնշուած՝ չէր կրնար հանդիստ շունչ առնուլ :

Նառուն ողնափայտը լայնածաւալ ու անբնակ ամայի ծովը փրփրերախ Վ կը պատուէր կանցնէր. աստղերը մէկիկ մէկիկ անձայն լուսթեամբ կերեւային. բայց աւա՛ղ, որ յուսոյ աստղը բնաւ չէր երեւնար երկիրն ու փրկութիւնը չա՛տ հեռու էին : Տխուր գիչերն անքուն կանցընէր Քոլումպոս, հեռադիտակը ձեռքը և աչուըներն անդադար արեւմուտք դարձուցած :

— Դէպ ի արեւմուտք, դէպ ի արեւմուտք թռիր, տ՛վ նաւդ իմ հաւատարիմ : Դուն ես իղձերուս 2 և ակնկալութեանցս 3 նպատակը. օրհասական մտածմունքս ու սիրտս կողջունեն գքեզ :

Բայց ի՞նչ ոտնաձայն է :

— Փերտինանտ, ինչո՞ւ աւելի տխուր ու դեղնած ես, ի՞նչ լուր կը բերես :

— Տէր, բանդ լմնցած է, ահա արեւը, նուիրական ճառագայթներովը դրօշակնիս լուսաւորեց :

— Հանդարտ կեցիր, այս ճառագայթներն Աստուծոյ ձեռքէն ելած են, որ մէկ բեւեռէ միւսը կը հսկէ, և որոնք որ յոյսերնին իր վրայ դրած են՝ գիտէ անոնց առջեւը վերջին ճամբան բանալ : Մնա՛ս բարով, բարեկամ, անդին ալ կը տեսնուինք :

Թուրերու շկահիւնը օդը կը թնդացընէր, երկաթներն ու շղթաները մշտաշառաչ կ'ը պատրաստուէին : Քոլումպոս անխռով սրտիւ ինքզինքը երկնքի ճամբոր-

(1) . Փրփրայից բերնով (փոխաբերական) . — (2) . Փափաք . — (3) . Յոյս . — (4) . Մեծ նայնով :

դուժեան կը սպարաստէր . և ահա յանկարծ չորս
կողմէն այս ցնծալից ձայնը միայն լսելի եղաւ .

— Երկի՛ր , երկի՛ր ,

Զոր ոչ ոք կրցեր էր գուշակել , և Քոլումպոսի 1 հան-
ճարը համարձակեր էր յուսալու , նորածագ արեւուն
ճառագայթներովը լուսաւորուած կերեւնար . և նա-
ւաստիք այն մեծ մարդուն ոտքն ընկած՝ իրենց շնորհա-
կալուժեան պաղատախառն ձայներն առ ամենակա-
րողն Աստուած կը բարձրացնէին :

(ՄԱՍԵԱՅ ԱՂԱԻՆԻ)




Գ . ԱՂԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԳԱՆՈՑ

Ս . Փրկչի Հիւանդանոցին վերաշինութեան խոր-
հուրդք ու ծրագիրք յոյժ վաւաքելի կ'ընծայէին յօ-
րինումն այդ համակրելի հաստատութեանդ պատմու-
թեան : Արդի պատուարժան ու բարեջան Հոգաբար-
ձութեան ազնուամիտ բարեյօժարութիւնն և բարոյա-
կան ու նիւթական փոյթեռանդն աջակցութիւնն հզօր
խրախոյս մ'եղան ինձ յօրինելու և ի լոյս ընծայելու
Հիւանդանոցի պատմութիւնն : Հոգաբարձութիւնն
ըմբռնեց անցելոյն յիշատակները վառ պահելու օգ-
տակարութիւնն և կարեւորութիւնն : Հազիւ կէս դա-
րու հաստատութիւն , այլ ո՛րչափ ճոխ է յիշատակնե-

(1) . Աշխարհահաշտկ Սպանիացի նաւագետ որ Ամերիկան
գտաւ :

րով Հիւանդանոցի այս հին պատկառելի շէնք, որուն ի հիմանց նորոգման ամենքս ալ փափաքող ենք, և որուն, սակայն, արկածներն այնչափ սրտառուչ, ա՛յնչափ վշտալից կամ համակրալից արձագանգ մը գտած են միշտ մարդասէր և ազգասէր սրտերու մէջ: Ահա շէնք մը յորում կէս դարու միջոցին բիւրաւոր Հայեր պատսպարուեր, խնամուեր, դարմանուեր, կրթուեր կամ յզգաստութիւն բերուեր են: Ո՞րն է Հայ ընտանիքը, Պոլսեցի կամ մանաւանդ գաւառացի, ոյր մտաւոր կամ հեռաւոր մէկ ազգականը, բարեկամը կամ ծանօթը կարօտ եղած չլինի հաստատութեանդ խնամոց: Ի՛նչ խեղճութիւններ, և ի՛նչ վաղանցիկ սփոփանքներ վայելէր են այս բիւրաւոր Հայք, մեր հարք, մարք, քորք և եղբարք, նախախնամական այդ հիւրընկալ յարկաց ներքեւ:

ԲԻԻԶԱՆԴ ԲԵՅԵԱՆ



Տ. Ի ՅԻՇԱՏԱԿ ՍԻՐԵՑԵԱԼ ՄՕՐՍ

ՏԻԿԻՆ ՆԱԶԼԸ ՎԱՋԱՆ

Ողջ էիր, մա՛յր, յորժամ գրեցի զգրքոյկս այս զՍիրանոյշ: Զքեզ ընդերկար ուսումնասիրելէ և քու վրադ անհուն հիացմամբ Վ զարմանալէ վերջը երբ զքեզ տիպ Զ կ'ընտրէի ճշմարիտ մօր, և երբ ի Տիկին Հայնուռ ոչ

(1). Մեծ զարմանք: — (2). Օրինակ:

Թէ քու լուսաւորեալ գաղափարներդ կը ջանայի անձնաւորեալ, այլ միայն մայրենի սիրոյդ գերագոյն բարձրութիւնը, և անձնուիրութեանդ անհուն վսեմութիւնը, ո՞վ կրնայ հաւատալ թէ օր մի այս նոյն գրքոյկը անմեռ յիշատակիդ պիտի նուիրէի, ո՞վ կրնար հաւատալ, մա՛յր իմ: Եւ սակայն ծունր դրած յայն վայր իսկ ուր շունչդ աւանդեցիր բազկացս մէջ, և հանդէպ սրբանուէր կենդանագրիդ, կը ձօնեմ քեզ, ո՞վ մայր իմ, ինչ որ որդիական գործով կրնայ նուիրել սուրբ յիշատակիդ՝ այսինքն սրբազնագոյն տուրքս առ ճշմարտութիւն: Այո՛, քեզմով ճանչցայ ինչ որ մայրութիւնն յինքն կը պարունակէ վսեմութիւն. զի մէն մի օրդ, մէն մի վայրկեանդ, բոլոր կեանքդ վերջապէս քու երկու որդւոցդ պարգեւեցիր ամբողջապէս: Զգիտեմ եթէ քունիդ մէջ անգամ միտքդ կը հեռանա՞ր վայրիկ մի մեզմէ:

Ո՛հ, եօթն օրէ ի վեր բաժնուեցար դու մեզմէ, և և այն աղետալի օրէն ի վեր կը մոռնամ թէ մայր եմ ես ինքնին, յիշելու համար անընդհատ թէ ոչ ևս մայր ունիմ: Ո՛չ ևս մայր ունիմ...

Մահն յօշոտեց սրտիս գրքին ամենէն թանկագին և ամենէն գեղեցիկ էջերէն մին, ի՛նչ դատարկութիւն: Դուցէ հայեցուածքս վարժի օր մի վերջապէս այդ զարհուրելի դատարկութեան. բայց սիրտս պիտի վարժի՞ արդեօք, պիտի ուզէ՞ վարժիլ, պիտի կարողանա՞յ երբէ՛ք, երբէ՛ք:

Մեկնեցար, մա՛յր, ոգիս պատառելով, և թողուցիր ինձ ի փոխարէն օրինակը քու անբիժ կենացդ՝ զոր

գովելի և մեծ գործեր զարդարեցին: Դու գծեցիր ինձ
 ուղին և ուր կը մտնեն աշխատելու, լուսաւորելու,
 օգնելու և ներելու համար: Իցի՛ւ թէ կարողանայի,
 մա՛յր, յառաջանալու այդ գեղեցիկ ճամբուն մէջ՝ ուր
 դու ընթացար անխոնջ յարատեւութեամբ: Իցի՛ւ թէ
 հո՛ն ամրապինդ կենայի և օր մի յելանելս կենաց դըռ-
 նէն վայրիկ մի հո՛ն կանկ առնելով և անունդ հնչելով՝
 հարցնէի քեզ «Հոգի՛դ դու սուրբ, ստո՞յգ չէ արդեօք
 որ քու դուստրդ բոլորովին քեզ անարժան չեղաւ:»

ՍՐԲՈՒՀԻ ՏԻՒՍԱՐ



Չ. ԵՐԿՈՒ ԴՊՐՈՑԱՍԷՐՔ

Մզատանայ ընկուզենի ծառերէն միոյն հովանեաց
 ներքեւ մտահոգ նստած՝ երեսս ի Հիւսիս և միտքս
 յԱրեւել կը նայէր, աչքիս հանդէպ 2 ի հեռուստ տես-
 նուեցան երկու պատանիներ, որք գերեզմանատան մէջ
 անհոգ պառկած մեծ խաչաքարի մը քով կը գտնուէին
 հեռադիտակս ինձ ցոյց տուաւ, որ նոքա այդ քարին
 վերայ կը գրէին և կամ կընթեռնուին զայն ինքնարե-
 րաբար: Աստ մի քահանայ և 3 աշխարհական ունէի
 ինձ խօսակից, իմ թախանձանաց վերայ քահանայն
 կոչեց զոյգ տղեկներն, որք եկին կայտառ և բոկոտն
 մինչեւ ի ծունկ մերկ և կեցան մի կողմ լուռ և մուռնչ:

(1). Ճամբայ — (2). Դիմաց:

ատանիններն իւրեանց բնական ամօթխածութենէն լուխնին խոնարհած կը նայէին յերկիր. դիտեցի զինքնք խիստ լըջօրէն, որպէս ուղեւորութեանս նպասակներէն մին էր. տեսայ որ ձեռքերնին մրտտուած էին, առ այս հետաքրքրուեցայ հարցանելով թէ՛ տըլա՛յք, ձեռքերնիդ ինչո՞ւ այդպէս ածուխի մեղանով մեւցած են: Նախապէս շիտեցան և կարմրեցան, նման սրեան, առանց տակաւին պատասխան մը տալոյ. ինձ այնպէս թուեցաւ թէ ըսածս չհասկեցան, քովս նստողներէն մին կրկին հարցուց միեւնոյն բան. վերջապէս այդ պարկեշտ և գեղջուկ տղայոց լռութեան կապն սղեցաւ և փութացին ինձ ասել թէ. «Մեզ հովիւս 1 կայ էրել կարդալու, մենք երկուքս էինք մէկ դասընկեր, բոր մեր վարժապետը գնաց գիւղէն, մեր հայրերու դուռներէն մեր վարժատան դուռն գոցուեցաւ, մենք էլ 2 երկուքս խելք խելքի տուինք, ամեն օր կերթանք գերեզմաննոցի մէջ մեր պապերու գրուած խաչաքարեր կարդալով կը վարժուինք և մեր կաղամարի մեղան յորցա՛ծ է ու թուղթ էլ չկայ որ գրենք, ասոր համար կտորիկ մը ածուխ կը տանեմք հետերնիս, ՃԵՐՄԱԿ քարի տակ կը փշրեմք «և +եօ՛ւրն և վրան պուտ մը լուր լեցնելով կ'ելնի մեզ համար թանաք, յետոյ կառուումք խորօտ 3 փայտի մը կտոր և անով կը գրենք և մէկ կողմէն էլ խաչաքարերը կը կարդամք, որ չմոռամք մեր դիտցած բաներ. բայց ի՞նչ անեմք շատ տեղեր սխալ կը կարդանք, մէկ չկայ մեզ հետ որ ուղիղ նշանց տայ 4 որ գիտնանք:

(1). Փափաք: — (2). ԼԼ: — (3). Գեղեցիկ (բռ. գաւառապան): — (4). Տղտ տալ:

Այս երկու գեղջուկ, այլ սրամիտ ուսանողաց՝ Տեղադիր-Ուղեւորիս տուած սոյն բնական բացատրութիւնն իմ արդէն փլած սիրտը ազգային սուրբ զգացումներով օծեց և աչքերս ցասկոտ արտասուօք լեցուց մանաւանդ երբ տեսայ թէ գիւղիս ուսումնական մանուկներն իւրեանց դպրոցական կամ ուսումնական փափաքը գերեզմաննոցին մէջ մեռեալ պապերու տապանաքարանց տառերոջն կը ընուն և կը մխիթարուին, այն ինչ մխիթարութիւն մը չեն գտներ իւրեանց կենդանի հայրերէն:

Մ. ՄԻՐԱԽՈՐԵԱՆ



10. ՎԱՐԱԳԱՅ ԼԵՌՆ

Վարագայ լեռը՝ որ լի է զանազան ծաղիկներով պաղորակ աղբիւրներով, էրէներով 1, և ոչխարաց հօտերով, իւր մէկ կողի վրան ունի Քեշէշ Գեօլը, և անոր շուրջը Սուլեան Եայլուին, արքայական հովանոց տեղի դրախտանման: Հոն է Ոսկիրակ գեղը: Վարագայ լեռան գլուխն է Հռիփսիմեանց խաչին սլահուած ու յայտնուած կարմիր ապառաժը, Գուլէլէ անուամբ այն տեղէն պարզ կերեւի Մասիսը, և ուրիշ շատ տեղեր: Ճակատին վրայ է վերին Վարագը կիսափուլ, և այս փլածի շուրջը առուակներ, վտակներ, մարգեր,

(1) . Նախնեաց — (2) . Որսի անասուն:

Հալարիք՝ հողէն շատ, Գրիստոսի աղբիւրը, Կաթն աղ-
բիւր, Խաչ աղբիւր, անմահացուցիչ ջրեր: Մէկ կողմը
ձորամէջ և զառ ի վայր կուգայ յեթնագմբէթ տաճա-
րըն վարագայ միւս կողմը սուրբ Գրիգորի աղօթատե-
ղին և վանքը, նոյնպէս ձորամէջ պրակներով զար-
դարուն. Զառնապատայ ջուրը խխջալով լեռնէն ի վայր
կը հոսէ, և այս տեղերը Ս. Գրիգորն ու վարագ, քառն
ու մաքին, հաւքն ու ճետը, կոճի ու հորթիկ, ուխտա-
ւորն ու տարփաւորը Զ, սերն ու մածուն, եղջուր կա-
րագ, ժամն ու Պատարագ ամենը տեղի կունենան
գարնան կենաց օրերուն մէջ. բարեպաշտներուն և վա-
յելչասիրաց միանգամայն ցանկալի և գոհացուցիչ: Այս
լեռը՝ բոլոր վանեցւոց ինչպէս զբօսանաց, նոյնպէս
բանաստեղծական երգասացութեանց առարկան և
ժն է: Ունի նա իւր հին պատմութիւնը քաղաքա-
ւ սրբազան: Ունի հրասլուրիչ և ազդեցիկ բնու-
թեան վայելչական, որոյ քարերն անգամ ձայն և
բարբառ ունին: Սերովբէից, մուսայից, քաջաց և փա-
րեկաց վայր ճանչցուած է նա: Շուշանիկի Շուշանց
դէկը և անոր գերեզմանը, զոր Շուշան խաթունի գե-
րեզման կանուանեն ցայսօր, Ապարանջան աղբիւրը,
այդ արքայադուստր Շուշանիկին օժիտը, Պղնձէ քա-
ղաքը վարագայ դաշտին մէջ, և յամենայն կողմանց
շէնքով, աւերակով, նշանաւոր անուններով պարփակ-
ուած է այս լեռուն, ամեն կողմէն իրեն կը նայուի, ու
ինքը կենսատու օդ և առատ ջուր կը բաշխէ երկրին:

Գ. ԵՊԻՍ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

(1) . Սիրելի — (2) . Զորս կողմէն պատեալ:

11. ՇՈՒՆՏԱՅԻ ՂԱՌՂՈՐԻՔ

Բայց Շուետացիք չեն շատանար մտաւորական և բարոյական կրթութեամբ միայն, այլ կուզեն որ երկրին զաւակունք ըլլան միանգամայն չարքաշ և կտրիճ, անոր համար մեծ կարեւորութիւն կ'ընծայեն մարմնակրթանաց ամեն ճիւղերուն: Այս օրերս Ստոքհոլմ կը գտնուի Անգլիացի մարմնամարզից ընկերութիւնն. ըՍտոքհոլմի լուղորդաց ընկերութիւնն ուզելով պատիւ մ'ընել Անգլիացի հիւրերուն, հրաւիրեց զանոնք ամսոյս 15 ին ի հանդէս այլ և այլ լողացողական կրթանաց՝ ընկերութեան յատուկ աւազանին մէջ: Քառակուսի աւազանին շուրջը շարուած էին աթոռք՝ հրաւիրելոց և իրենց ընտանեաց համար: Հանդէսն սկսաւ զինուորական երաժշտութեամբ: Նախ և առաջ տասնուհինգ պատանեակք նետուեցան ջուրը և կերպ կերպ ճարպիկ ու ճասուկ 1 շարժմամբք և խաղերով զուարճացուցին զհանդիսականս. յետոյ ջրէն դուրս ելան և իւրաքանչիւրին բաշխուեցաւ մէյմէկ քար՝ քսակի մէջ կարուած. նշանն տրուելուն պէս տասնուհինգն մէկէն նետեցին իրենց քսակներն ի խորս ջրոյն, և իրենք ալ անմիջապէս նետուեցան յաւազանն և աներեւոյթ եղանքանի մը մանրերկրորդ վերջը տասնուհինգ մանուկ խորէջներն ջրէն վեր առին իրենց գլուխն և բազուկը՝ յաղթական կերպով բարձրացնելով իւրաքանչիւրն իւր

(1) • Փափուկ:

քսակը ի տես ամենեցուն, կարգն եկաւ երիտասարդաց: Տասներկու երիտասարդք նախ ձեւացուցին ահագին աստղ մը ջրին երեսը՝ ճարտարութեամբ ընդխառնելով Վ իրենց սրունքներն ու բազուկները. այս մարմնեղէն աստղս հանդարտ հանդարտ կը յառաջանար ջրին երեսը ի հաճոյս հոսանաց, յետոյ մէկ գծի վրայ տողուեցան՝ Չ առաջինն պնդելով իւր ոտիւք երկրորդին դլուխը և այսպէս և այլք մի ըստ միովէ. հուսկ ապա ուղիղ գիծը վերածեցին ի բոլորակ՝ պահելով միշտ նոյն դիրքը և հանդարտօրէն սահելով ի մկանունս 3 ջրոյն. հանդիսատեսք ջերմ ծափահարութեամբ յայտնեցին իրենց գոհութիւնը: Յետ այնորիկ կեղծ ընկըղմում մը ձեւացուցին. երեք երիտասարդք մտան ըզգեստաւորեալ ի նաւակ մի, և իբր թէ ի դրօսանս ըսկրսան թիավարել աւազանին մէջ. յանկարծ շրջեցաւ նաւակն, և երեքն միանգամայն թօթափեցան ի ջուրս, անդէն և անդ և հինգ լուղորդք դիմեցին յօգնութիւն ընկղմելոց, երկուքն ազատեցին զնաւակն, և այլք՝ երեք ընկղմեալները. ասոնցմէ մին՝ իբր թէ անհմուտ լողալու՝ կը թալթլէր 5, ոտիւք և ձեռօք կը տազնապեցընէր իւր ազատարարը, և կը ջանար իրեն հետ մէկտեղ իջեցնել նա ի խորս ջրոյն. բայց սա անվեհեր և անչիտթ՝ մի ձեռամբ գրկելով ընկղմեալը և միւսովն լող տալով հանեց զնա ողջ և առողջ ի ցամաք: Երիտասարդներէն վերջը աւարտահասակ մարդիկ մտան ի հանդէս. խաղերն աւելի դժուարին էին և լողալու

(1). Միացնել. — (2). Շարուիլ. — (3). Չաւրց երեսը. — (4). Իսկոյն. — (5) (Չապալանմադ):

արուեստին մէջ հնցած անձինք միայն կրնային գործադրել զայնս : Ասոնց կտրճութիւնը գլխաւորապէս վտանգաւոր ուստիւններու մէջ երեւցաւ . 15 մէթր բարձրութենէ յիսնամեայ այր մը՝ ալեխառն հերօք և մօրուօք՝ երիտասարդական թեթեւութեամբ կը նետուէր ջրին մէջ, կրնկղմէր և դուրս կելնէր : Յետ այնորիկ ա՛յլ ոմն նոյն բարձրութենէն կը նետուէր նմանապէս, բայց ջրոյն մէջ խնալէն առաջ օդոյն մէջ քանի մ'անգամ զիթկելով 1 . ոմն կը յարձակէր գլխի վայր, ոմն ոտից վրայ, ոմն կողմնակի, ոմանք ալ երեք կամ չորս ի միասին՝ ողկուզօրէն իրարու կպած՝ կը նետուէին նոյն բարձրութենէն և ջրոյն մէջ կը զատուէին մէկ մէկէ : Էին նաև ոմանք որ հագուած կը ցառքէին աւազանին մէջ, և մի առ մի կը մերկանային ի ջուրս իրենց զգեստը, ստորնակը 2, տաբատը 3, շապիկը, այնպէս դիւրութեամբ որպէս թէ անթուի մը վրայ նստած կը հանուէին : Երեք քառորդ տեւեց այս հետաքրքրական հանդէսս, որ փակեցաւ Ապրիլի 2, կէց՝ շրջանէն Անգլիական ազգային երգով :

ՆՈՐԱՅՐ Ն . ԲԻԻԶԱՆԴԱՅԻ

(1) . (Թագլա գլմաք) — (2) . (Ժիւէ) — (3) . Անգրաւարտիք

12. ՎԵՐՋԱԼՈՅՍ


Դուրս նայեցայ պատուհանէն: Նոքա միայն, որք
 րնակած են Հասգիւղի մէջ կրնան ըմբռնել ինչ որ
 պարզուեցաւ 1 յայնժամ աչացս առջեւ: Ամեն աեղէ
 միեւնոյն կերպով չը տեսնուիր վերջալոյսը, զանազան
 կէտերէ դիտուելով, զանազան երեւոյթներ կըստանայ.
 անութիւնը միութեան մէջ իսկ անհուն փոփոխութիւն-
 ներ ունի և անեզր ձեւաշատութիւններ: Եւ այս է
 որ այնքան տարրեր և այնքան ճոխ ներշնչումներ
 կազդէ Պիւֆոններու 2, Պէռնարդէն ՏըՍէն-Բիէռներու,
 Շառոպրիաններու 3:

Արեւը էյուպի բլուրներուն վրայ խոնարհած էր,
 մօտ Բամիզ-Չիֆթլիկին...: Իւր շլացուցիչ ճաճանչնե-
 րը ամիոփելով իւր շուրջը, իբր արծիւ որ թեւերը կը
 ծրարէ երբ պատրաստուի հանգչիլ, բլուրին ետեւ
 կիջնէր տակաւ առ տակաւ: Լոյսի գունագոյն երակ-
 ներ այդ լեռնակներուն վրայ կերկարէին ծայրէ ծայր,
 բաց ներկերէ մութերու անցնելով, առաջին խաւերը
 մեղմ, վերջինները խիստ երանգներով 4: Երկնի կա-
 պոյտ յատակին վրայ, կաթնաթոյր 5 ամպերու և այն
 արծրութիւններուն մէջ շրջանակուած որք դեռ կա-
 նաչ էին, այդ վսեմ պատկերը զոր մի Աստուած կը
 նկարէր վարդ լոյսերով և այն փափուկ գոյներովն ո-

(1) . Բացուել: — (2) . Պիւֆոն, երեւելի բնագէտ Գաղիացի: —
 (3) . Շառոպրիան, Գաղիացի նշանաւոր մատենագիր: — (4) . Գոյն: —
 (5) . Կաթի պէս սպիտակ:

րովք անմեղ կոյսը կը շիկնի 1, մի դիւթութիւն 2 էր
աչքի համար և հոգւոյ համար: Հեռուն, տխուր նոճի-
ներու երկար շարերու մէջ, ուր ամբողջ սերունդներ կը
ննջեն և ուր մի խորհրդաւոր մթութիւն կը տիրէր
միշտ, տկար ճառագայթներ սպրդած կը նուազէին,
մութն աւելի յանկուցիչ 3 քան լոյսն իսկ: Ոսկեղջիւրի
ալեակները կարմրած էին թեթեւ և մի ծիրանի շղար-
շի 4 տակ կը խաղային ծաւալուն. երկու նաւակ ջուրի
վրայէ կը թռչէին: Հոս հոն, մզկիթներու դորշախայտ
գմբէթներուն և ճերմակ մնարէներուն, տուներու ա-
պակիներու վրայ, հեռաւոր լոյսեր կը նշուէին 4: Լը-
ռութիւնը կըսկսէր ծանրանալ աշխարհի վրայ, ստուեր-
ները կ'աճէին, և հեռուն, մինչ յետին ճաճանջը կը
սրբուէր հորիզոնին վրայ և ծովային բազը իւր վերջին
թռիչք կառնուր, մեղմէին 5 լուրջ ձայնը կսկսէր ա-
ղօթքի հրաւիրել բարեպաշտ Մահմէտականները: Ան-
կարելի էր չյուզուիլ այս մեծ վայելուչ հանդիսին
տուջեւ:

Մ. ԶԵՐԱԶ



(1) . կարմրիւ (ամթեւ) :— (2) . Հմայք :— (3) . Հրապուրիչ :—
(4) . Բոշ :— (5) . Փայլիւ :— (6) . Բա . Տաճկ . աղօթքի հրաւիրող :

13. ՈՂԲ (*)

Ի ՎԵՐԱՅ ԲԱՐԵԿԱՄԻՆ

Ո՞վ ինձ բարեկամ, ո՞վ ինձ մտերիմ, ո՞վ ետ պիտի
տայ ինձ իմ մտերիմ բարեկամ:

Ո՛հ առնն:

Քան զպատմական անձինս աւելի կարժէր նա իրեն
նմանը թւրաւոր մարդոց մէջ մէկ հատիկ կը ծնի. շատ
մը վատերու փոխարէն Աստուած երբեմն այսպիսի ոմն
կը ստեղծէ որ մխիթարուին մարդիկ:

Արի արանց էր նա, բնաւորութեամբն արի, արի հան-
ճարով, սրտովն ալ արի:

Մեծ ևս էր, բարութիւնն էր անձնաւորեալ, աղ-
քատին ու հիւանդին բարեկամ, բարեկամ մեծատանց
ու ամենուն բարերար:

Պարտաւորութեան ձայնը իր պատգամն էր և ուրիշ
ձայն չուղեց լսել. առաքինութիւնը իւր բնութիւնն էր
և օր մը չը թուլացաւ իր սիրոյն:

Այլ թէ թուլացաւ, աւա՛ղ, այն իր վերջին օրն
եղաւ:

Ո՞վ ամպեր, սե՛ւ ամպեր, եկան մթազնել քու պայ-
ծառ միտքդ ու առողջ դատողութիւնդ, ո՞վ իմ
բարեկամս:

Զքեզ սիրեցին Պօսֆօրի կրկին ախունք, ծերն ու

(*) Այս ողբն գրուած է անմասաց Տաթ. Բեաթիպեանի
մահուան առթիւ:

աղքատ քեզ օրհնեցին, երիտասարդք սիրեցան ի քեզ
ու մեծամեծք և մեծատունք պատուեցին. ամեն ազգի
մարդիկ ու ամեն աստիճանի մարդիկ քեզի դիմեցին:

Ամենուն հասար, ամենուն օգնեցիր, աննման ար
հեստովդ, աննման խելքովդ, աննման ձեռքովդ:

Ուր որ գացիր՝ շատ անգամ յուսահատութեան
լացը դադրեցուցիր, յուսոյ ժպիտը փայլեցուցիր
սրտիդ բարութենէն ու բնաւորութեանդ կորովէն միշտ
բան մը կը հաղորդուէր ամենուն:

Միայն սիրեցիր, ոչ զոք ատեցիր, ու միայն կեան
քըդ ատեցիր:

Անյուշ և անյոյս զքո ուղիդ ընթացար մինչեւ որ
յոգնեցար:

Ինչո՞ւ արդեօք:

Աստուած է՛ն զօրաւոր իմացականութեանց կայծ մը
միայն տուած է յաւիտենական ճշմարտութիւնը թա
փանձելու համար. դու զայն կայծն առ ոչինչ գրեցիր:

Աշխարհի բաներն ուրիշ մարդոցմէ աւելի պայծառ
կը տեսնէիր, ինչ որ պայծառ չ'տեսար՝ մերժեցիր:

Իրերն իրենց հետեւանքներէն դատելու վարժած
էր միաքդ. երկնից ներքեւ շատ անիրաւութիւն ու
անգթութիւն տեսար, յաւիտենական արդարութիւնն
ու գթութիւնը չըմբռնեցիր, և ուր որ շօշափելի հե
տեւանք չը տեսար՝ հոն իմացականութիւնն ու զօրու
թիւնն ուրացար: Ա՛հ, զի չի ճանչցար քու հայրդ որ
յուշ ածէր քեզի ու անոր սնարին չբազմեցար որ իւր
վերջին վայրկեանին սրտապնդելով զքեզ՝ Երկինքն ու
Երկնքին մէջ ամենուս Հայրը ցուցնէ՛ր:

Չը ճանչցար նաեւ ինչ որ Երկնից երանութեան
գուշակն ու ճաշակն է յաստիս ու բանի տեղ չի դրիր
այն բաներն որ գեղեցկին զգացումը կը զարգացնեն
՝ի մարդ :

Եւ ըսիր . « Որովհետեւ կենաց մէջ իրական բան մը
եթէ կայ այն ալ տառապանքն է , ուրեմն պէտք չ'կար
որ ծնէինք » . իբրեւ թէ յաւիտենական խորհուրդք
պիտէին սահմանափակիլ այս անցաւոր աշխարհին ու
նոցաւոր 1 կեանքին մէջ :

Ու երբ տեսար որ կամաց կամաց օրն ալ իրիկուն
պիտի ըլլար , յառաջ քան զժամը վարագոյրը քաշել
ուղեցիր՝ չնայելով բարեկամացդ որ շուրջդ էին ու
բարեկամիդ 2 որ հեռո՛ւն էր :

Ու առ խարխափ գնացիր կարծր ու պաղ աւագին
վրայ , խիճերուն վրայ , ժայռերուն վրայ , ջուրերուն
մէջ , ոչնչութիւն գտնելու :

Դարձի՛ր , ետ դարձիր րականին պէտք ունինք այդ
ազնուական գլուխդ տեսնելու ուր երբէք վատ խոր-
հուրդ մը չէր յղացած . դարձի՛ր , տակաւին շատ վիշ-
տեր կան սիրտիելու , շատ նկուն 3 սրտեր կան զօրա-
ցընելու , ու նայէ՛ որչափ ձեռքեր երկնցած են քեզի-
դարձի՛ր , չըլլայ թէ Աստուած որ քու կեանքդ պարգեւ
մը ըրաւ ամենուս՝ զքո մահդ պատուհաս մ'ընէ շա-
տերուն :

Այլ չէ՛ , աւանիկ աներկմիտ է կ'ընթանաս ու չես լը-
սեր անհուն աղաղակը որ կը բարձրանայ ետեւէդ ժո-

(1) . կարօտ — (2) . Օտեանի՛ որ Բարեգէն գրեց զայս Ոչը նոյն
ժամանակ ի Մասիս Օրագրի — (3) . Ընկճեալ — (4) . Անկասկած :

զովրդեան ամեն կարգերէն . ալիքներուն աղաղակն ալ
չես լսեր :

Լսէի՛ր գոնէ վերջին վայրկեանիդ Աստուծոյ ձայնը
սրտիդ մէջ :

Ո՞ գիտէ :

Կրսեն թէ այն դժնէ 1 ծովածոցին մէջ դեռ ծովա-
մոյն 2 չեղած , երկար ժամերով շրջեցար , ժամեր ի բուն ,
նայելով անշուշտ ծովուն , նայելով նաեւ երկնքին :
Խորհուրդդ արդեօք նորանորք չ'թաւալեցի՞նք ու միտ-
քըդ այն միջոցին , և արդեօք երկինք չ'իջեցո՞ւց ար-
դէն հոգւոյդ մէջ , 'ի վարձատրութիւն անստգիւտ 1 և
առաքինի կենցաղիդ , իւր յաւիտենական գթութեան
ցօղն անմահարար :

Գ . Ս . ՕՅԵԱՆ

14 . ՉՄԵՌՆ

Տարւոյն վերջի օրերն է , եղանակն տխուր , ժամա-
նակն խաւարին . թողմեալ թմրեալ բնութեան վրայ
տարածուած համապիւռ ճերմակէն՝ լոյս չի ծագեր ,
մխիթարութիւն չեւներ . ձմեռն՝ միշտ ցուրտ , սառն՝
միշտ սոսկումն կազդէ . իսկ այն այսահար 3 սօսափիւնն ,
այն մոլեգին 4 մորիկն զոր կու լսես կէս գիշերուն՝
ճարճատեալ ծառոց կարկամ գրկերէն , և քարանձաւաց

(1) . Գէշ . — (2) . Մովբ իղդուիւր . — (3) . կատարեալ . — (4) . Մու-
լեգին . — (5) . Սաստիկ :

քալից բերաններէն, մարդուս՝ ինչուան ոսկորները կը
արտուեցնէ: Այսպիսի ատեն տաքուկ անկողին մը,
առած թոնրի մը անկիւն արծարծուն կրակարանի մը
պէրք, ի՛նչ քաղցր են ոչ միայն ծուլից՝ այլ օրն ի
տուն աշխատող բանուորի մը, համեստ բարեկամաց,
կամ մենասէր Վ իմաստասիրաց: Երանի՛ անոնց, որ թէև
սղքատիկ, թէև ցօղունասպատ խրճթի մը մէջ, կամ
կիսաթաղ հողէ տանեաց տակ դեռ խոր խորշիկ մը, բու-
սերիկ Չ մ՛ ունին, որոյ մէջ քանի մը տաշերով տաքու-
թիւն և լոյս կու պահեն, և անով իրենց նմանեաց ե-
րեսը կու տեսնեն. ծխանին ծակէն արձրկած ծուխն՝
տակ դիշերուան և քնոյ խորութեան մէջ, կիմացընէ
աղիւ հանդիպող կամ մոլորած անցորդի մը՝ թէ այն
Սեռեղատիպ հողի, քարի, խուռի և ձեան տակ այլ՝
ինդանութեան կէտ մը, ընտանութեան բոյն մը
այ. . . . Ո՛հ, ի՛նչ դժնդակ է այն տեղն, ուր ծխան չի
խեր. ի՛նչ խղճալի անձ, որ այսպիսի եղանակի և
համանակի մէջ՝ բնութեան ամենայն սաստից և ար-
աւրաց մէջ, սառի և սարսուռի մէջ պատած պաշար-
ուան բռնուած ըլլայ, ուր ոչ միայն այդ չարիքն՝ այլ
չարիքներէն ազատելուն ճար ու յոյս ալ չըլլան. —
մանաւանդ եթէ մէկն բռնի և անպարտ դատապարտ-
ուած ըլլայ այդպիսի, և քան զայդ աւելի զրկմանց,
զրից և ցաւոց. . . . Հայկա՛կ, հոս անտարբեր կալ մնալ
ըլլար, այս յիշատակիս՝ ցուրտն և սարսուռն ամեն
ճաթեցնելով ներս կու մտնեն, կրակդ կանցնի, ծուխդ
ու ցնդի, սիրտդ կու սոսկայ. . . Ե՛լ, ե՛լ խրճրթէդ,

(1). Առանձնատէր. — (2). Բա. ումկ. վառարան:

մոռցի՛ր ձմեռ խաւար. հայրենական հողւոյ հրեղէն վերարկուն ձգէ՛ վրադ, թող կրակիկդ, և հասարակ գիշերուան խօլաշունչ մրրկին մէջ՝ անկէ սուր ե՛լ թռի՛ր:

Է. Ղ. ԱԼԻՇԱՆ



15. Դ Ա Մ Բ Ա Ն Ա Կ Ա Ն

ՃԵԶԱՅԻՐԼԵԱՆ ՄԿՐՏԻՉ ԱՄԻՐԱՅԻՆ

Միայն Աստուած է մեծ, եղբա՛րք, մանաւանդ այս մահուան ժամուն՝ երբ աշխարհիս մեծամեծ աշխարհակալներու՝ երբ փառօք պերճացեալ մեծապանծ իշխաններու մեծութիւնը մահուան ցուրտ շիրմին տակ կը սլահի: Հոս, այս մահարոյր դադաղին մէջ ամեն մեծութիւն և ամեն փառք կը մարին և կը լռեն: Աշխարհիս մեծութեան և հարստութեան սահմանը հո՛ս է, ասկից անդին չանցնիր: Աստուած միայն է մեծ, եղբարք և հարք պատուականք, և մանաւանդ այն ատեն կզգանք անոր մեծութիւնը երբ ահա այսպէս մեծեր անշնչացեալ կը տեսնեմք: Հոս աշխարհիս ամեն փառքերովը պերճացեալ Սողոմոն՝ այս տխուր դադաղին մէջէն՝ «Ունայնութիւն ունայնութեանց» կը պոռայ. հոս՝ այս ցուրտ շիրմին տակէն՝ մեծն Արտաշէս՝ «Աւա՛ղ փառացս անցաւորի» կաղաղակէ: Ո՛հ, այս յաւիտենական դրան մուտքին մէջ մարդս ո՛րչափ կը

պղտիկնայ . այս կէտին ամեն ինչ որ Աստուած չեն՝
կոչնչանան Աստուած միայն է մեծ , եղբարք , և
միայն անվախճան : Երանի՛ այն քրիստոնէից՝ որ Աս-
տուածոյ նման մեծ ըլլալու երջանկութիւնը ունին : Այո՛ ,
այս տկար մահացուն , այս հողազանգուած 1 մարմինը ,
որ աշնան հողմերէն տարուբերեալ ազազուն 2 տերեւի
մը կը նմանի , որուն օրերը ստուերի պէս կանցնին
կերթան , որ իր բաղձանքներուն ծայրը գերեզմանին
ցուրտ քարը կը գտնէ , որ ուրախութիւն փնտուելով՝
այս սեւերը և արտմութիւնները կը գտնէ , այս մահ-
կանացուն ալ մեծ է :

Երանի՛ այն մարդոց՝ որ աշխարհէս շատ մեծ են :
Այո՛ , ո՛վ Քրիստոնեայ , աշխարհս քու մեծութեանդ
առջին ոչինչ է , նայէ՛ որ սա յաւիտենական դռնէն
անցած ատենդ փոքրկացած չըլլաս , քու ազնուակա-
նութեանդ կնիքն ճակտէդ սրբուած չըլլայ :

Քրիստոս մեծ էր : անոր սիրտը ահաւոր ժայռ մը
էր աշխարհիս արկածներուն մէջտեղը զետեղեալ՝ ո-
րուն վրայ ամեն ալիք ձախողութիւն և յաջողութիւն ,
հարստութիւն և աղքատութիւն կը փշրուէին ու կը
խորասկուէին , ինքն անշարժ և անխախտ կեցած : Ա-
նոր աստուածային աչքերը անմահութեան կայծակներ
կը ցոլացնէին , ու այն կայծակնացայտ աչքերը միայն
տառապեալ մարդկան հոգեւոր և մարմնաւոր թշուա-
ռութեանց վրայ արտասուաց կաթիլներ կը թափէին ,
անմահ արտասուք՝ որ իր դժուարընտել խաչին վրայ
գլխին փուշ պսակէն , և ձեռացն ու ոտից բեւեռներէն

Թափթփած պատուական արեան կաթիլներուն հետ
խառնուելով՝ շոգին երկինք Հօր Աստուծոյ դահլը բարձ-
րացաւ, ուր մեր կորստեան ձեռագիրն եղծեց:

ՆԵՐՍԵՍ ՊԱՏՐԻԱՐԿ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

16. Ի ՄԱՀ ՄԱՐՏԻ Կ ԳԱՎԱՅԵԱՆԻ

Կը թուի թէ այլ ևս դուն ուրեք անտրտմախառն
Ջբառններ Վ գրելու պիտի բախտաւորիս: Օ՛ր նոր,
վի՛շտ նոր. ի՞նչ ընել պէտք է. ըսե՞նք սրտին թէ ա-
պառաժ եղիր, ըսե՞նք մեր հոգւոյն թէ մի՛ զգար այ-
սուհետեւ: — Տաղանդ, եռանդուն երիտասարդու-
թիւն, որ մե՛ծ ապագայ մը կը պահէր իւր ճակտին ե-
տեւը, դիւրագործ սիրտ, դպրութեանց ճաշակ,
յառաջդիմութեան բուռն տենչանք, որ խանձեց զնա
տարածամ. ա՛յս էր Մարտիկ Գավաֆեան: Թէ ի՞նչ
կարելի է զգալ արդ այդպիսի կորստեան մը առթիւ,
դո՛ւ միայն գիտես, սրտերու Աստուա՛ծ:

Այս շնորհալից բժիշկն իր անձկալի մտերմաց շա՛տ
բան կը թողու. ոսկեղինիկ սրտի մը յիշատակներն՝ որ
իւր թարմ հասակին տարածամ խամրելէն ետքը՝ ան-
թառամելի ծաղկեղէն փունջեր են. հոգւոյ մը երկա-
րածիգ շողն՝ որ իր կենաց մարելէն ետքը՝ դեռ կը

(1). Սոյն խորագրին ներքեւ «Հրանդ» կեղծանուամբ կը գրէր
անցեալ տարի Արեւելքի մէջ Մ. Կիւրճեան ուսեալ երիտասարդն:

ճառագայթէ իրենց մէջ իբրև ճաճանչ մը որ հորիզոնին վրայ կը թափառի ծածանելով՝ արեգական մարը մտնելէն ետքը: Իսկ ի՛նչ կը թողու ինձ հէգ բժիշկն իբրև ծանօթ և սիրելի անձնաւորութիւն: Երգի մը արձագանգն և ձայնի մը գեղգեղն, որ թերեւս յաւիտեան չմարին յիս:

Մարտիկ տակաւին Բարիզ չուղեւորած՝ մէկ օր երգեց Պէշիքթաշլեանի մէկ ոտանաւոր եղերերգն. «Ո՛ւր ես Ազնիւ»: Քերթուածն թէպէտեւ ծնունդ բանաստեղծական ժամերու, եղանակը մե՛ծ ճարտարութեամբ յօրինուած, այլ երգն ու եղանակը շնորհալից բժշկին բերնին մէջ ա՛յնպիսի նորութիւն մը կ'զգենուին, այնպիսի զօրութիւն, արտութիւն, որոց ուժին ու ազդեցութեան դիմադրելն անհնարին էր: Իսկ երբ կը հասնէր այն տեղը թէ՛

«Աւա՛ղ, տեսէք սուգ առաւ ծով,

Ձինքը տանող դարձաւ հովիկ,

Թեւերը կախ փռչէ տրտում,

Ի՞նչ լուր բերիր մեզի հովիկ.

— Այն ձեր սրտին հատորն ազնիւ,

Թըռաւ, գընաց մեռաւ Ազնիւ:»

Այլ ևս սովորական ստեղծուած մը չէր այն այլ երկնաւոր էակ մը, որ կարծես թէ պահ մը յաշխարհ կիջնէր մարդկեղէն ճարտարութեամբ հնարուած նուագարանները խայտառակելու: Առնական բերնէ՛ կանացի ձայն մը կը ծածանէր վէտ ի վէտ օդին մէջ: Գեղգեղանքն հեշտալուր մէկը միւսոյն կը յաջորդէր երկնահոսան դաշնակութեամբ, և դիմացը վրայ կը վառէին գծեր, կը մարէին: Դադրած ատենը կրնայինք ըսել

Թէ Էզմայլեցուցիր զմեզ, վերացուցիր, յափշտակեցիր, հոգւոյդ բոլոր յուզմունքն ու սրտիդ վայնասունը թափեցիր, միմունջ կամ աղաղակ, ի հոսանս երկնանուագ դաշնակութեանց՝ թրթռացնելով մեր սրտերը, և մեր բոլոր զգայութիւնները ողողելով յալիս վէտ ի վէտ հիանալի ձայնիդ՝ որուն փոխ տուած են թռչունք իրենց դայլայլիկն, առաւօտն՝ իւր պայծառութիւնն և իրիկունն՝ իւր նուաղումն։

Ութը տարի է անկէ ի վեր․ բայց այսօր ևս իւր ձայնն ականջացս կը հնչէ․ մատները դաշնակին վրայ դրած փոթորիկներ կը հանէր։ Բարիզէն դարձաւ երաժշտութեան զաւակը փտած նուագարանի մը փոխուած էր, կերկեր ձայն մը կը լսուէր կտրտած ու աղաւաղած թելերէ, ժպիտը մեռած էր շրթանց վրայ, իւր այտերուն վարդերն ալ գունատած։ Ի՞նչ բերիր այն հրաշից քաղաքէն, սիրելի՛ Մարտիկ։ — Որդ մը կրծոցս տակ, մահը կողիս ետին։ — Եւ ահա մեռաւ։

Մ․ ԿԻՒՐՃԵԱՆ



17. ՀԱՅ ՎԱՐՃԱՊԵՏՆ

Հայը ուր որ լինի, հոն մեծ կամ պզտիկ նախնական դպրոցներ հաստատելու նկրտի։ Սակայն եթէ դպրոցի մը ձեղունէն լուսոյ մանանայ կրնայ անձրեւել մանկութեան մաքին և սրտին յագուրդ տալու համար

հարկ է որ այդ փրկարար սնունդը անձրեւել տուող
մը դանուի :

— Ո՞վ է այդ էակը .

— Վարժապետը .

Վարժապետ մի , բայց Հայը միթէ գիտէ՞ այդ բա-
ռին զօրութիւնը և նշանակութիւնը . միթէ մեր մէջ
կա՞ն այնպիսի շուրթեր որք նուիրական սարսուռով մը
կարենան արտարերել այդ լուսոյ դայեկին անունը :
միթէ ունի՞նք այնպիսի ականջներ որք կարենան լսել
այդ մոգական բառին տիեզերական անբաւ դղրդիւնը ,
որ կը հնչէ լուսաւոր աշխարհներու հորիզոնէն դէպ ի
միթին ազգերու ընկերային անդունդներու յատակը :
միթէ ունի՞նք այնպիսի սիրտեր որք կարենան զգալ և
բողոքել յանուն և ի շնորհս այն էակին որու պաշտօնն
է կրթել , միթէ կա՞ն այնպիսի սուրակն Վ դէտեր , որք
կարենան տեսնել թէ անիկա է մանկութեան կաղա-
պարը 2 , մարդկութեան առաջնորդը :

Այո՛ , կը պատասխանենք այս հարցումներուն , եթէ
ներեւի է հաւատալ խօսքերու :

Ո՛չ , կը պատասխանենք , եթէ ներեւի է միայն գործ-
քով համոզուիլ :

Վարժապետ , դաստիարակ ; ուսուցիչ , խմբագիր ,
հեղինակ , ատենաբան , տպագիր , ասոնք օտար ազգե-
րու մէջ ընկերային ստեղծողին բարձրագոյն աստի-
ճանները գրաւած են , ուրիշ երկիրներու մէջ ազնուա-
պետութիւններու ազնուագոյնը կը ներկայեն : Իսկ Հա-
յոցս մէջ ասոնք ընկերական ստորին կացութիւն մը

ունին: Այս ստորին և աննպաստ կացութիւնը չարիք մ'է ազգին, վասն զի իւր հետեւութիւնն է վարժապետներու նուազումը, դպրոցներու քանդումը, և տըզիտութեան մնայունութիւնը:

Դեռ շատ հեռի չեն այն օրերը, ուր վարժապետները Պօլսոյ ամիրաններու առջեւ ոտքի վրայ կը կայնէին: Անցեալը եթէ խառնենք, կրնանք մի առ մի յիշել այնպիսի անուններ որոնք կամ յետին չքաւորութեան մէջ մեռած են և կամ հիւանդանոցներու մէջ վերջացուցած են իրենց թշուառ օրերը: Այս օրուան օրս ի՞նչ յարգ և համարում ունի այդ պաշտօնը: Ահա քեզի Հայ Կրեսոսս Վ մը՝ որու այցելութիւն կ'ընէ վարժապետ մը: Ասիկայ խնդիր մը առաջարկելու կամ այցելութիւն մ'ընելու համար զարդարուն սրահէ մը ներս կը մտնէ վեհերոտութեամբ և աչքերը խոնարհելով: Սրահը լի է բազմութեամբ. պերճութեամբ և պաճուճանօք փայլող կիներու և օրիորդներու խումբ մը թիկնաթոռները և բազմոցները բռնած են: Խեղճը յարգական բարեւ մը կուտայ ամենուն, և առանց հրաւերի սպասելու աթոռ մը կառնու և կերթայ գրեթէ սրահին դրան քով կամ մօտերը կը նստի: Եթէ պարզ այցելութիւն մ'է անոր գալուստը, հազիւ հազ իւր որպիսութիւնը կը հարցուի՝ ոչ թէ հիւրերու կողմէն որոնց համար մէկ նայուածքի անգամ արժանի չէ խեղճը, այլ ասան տիրոջ կամ տիկնոջ կողմէն. անկէ ետք ընկերութեան մէջ կը մոռցուի թշուառը: Կամ եթէ գործի մը համար է իւր այցելութիւնը, կէօ ուն-

(1). Հարուստ (փոխաբերական):

կընդրութեամբ կը լսուին իւր խօսքերը, որոնց միա-
 վանկ կամ երկավանկ պատասխաններ կը տրուին, ան-
 ըստոյդ խոստումներ կ'ըլլան, և անկէ ետք ալ հարկ
 կըլլայ վարժապետին միեւնոյն վեհերոտութեամբ հե-
 ոանալ սրահէն, վասն զի ինք այն փառաւոր ընկերու-
 թեան յարմար մարդ չէ՝ վարժապետ և դուցէ նորձ-
 րլլալուն պատճառաւ:

Գ. ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

19. ՀԱՅ ՕՐԻՈՐԴ ՄԻ


Հազիւ տասն և վեց տարեկան, Սաթինիկ կը թո-
 ղուր դպրոցը, բայց ոչ շատ ուրախութեամբ: Յորմէ
 հետէ խելահաս եղած էր, իւր օրուան կեանքն երկու
 մասերու կը բաժնուէր, մին գոհութեան, միւսը դժ-
 գոհութեան: Զուարթ էր, դպրոցէն երբ ներս մտնէր,
 ձանձրոյթ կ'զգար տան մէջ: Բնութենէն օժտեալ ըն-
 տիր ձիրքերով, Սաթինիկի համար դպրոցն այն գեղա-
 ժպիտ դաշտն էր ուր արեւը, օդը կը նպաստէին նմա
 աճիլ և ուռճանալ: Կը սիրէր գրագիտութիւնը, կը
 սիրէր գեղարուեստները, կը սիրէր ընկերները, կը
 սիրէր ուսուցիչները:

Բայց դպրոցէն երբ տուն կը վերադառնար, դժուար-
 ութեամբ կը շնչէր: Ինչպէս գարնան աղւոր օրերը
 շատ անգամ թեթեւ մէգ մը կը պատէ իրիկունները
 Վոսֆօրն և կ'արգելու շնչառութիւնն ու մենք մեզ կը

(1) • ԱճԻԼ

հարցնենք. «ի՛նչ, միթէ այս իրիկունս շարունակութիւնն է այս աւուր առաւօտուն» . նոյն տարբերութիւնը կը գտնէր Սաթինիկ իւր առաւօտեան և երեկոյեան կեանքին միջեւ : Գորովը բուն դրած էր այդ աղջկան սրտին մէջ, և սակայն սքարտաւոր էր չներել որ իւր սրտէն խանդաղատանաց թռիչ մը սլանայ : Իւր հայրն և մայրը թէպէտ երկար ատենէ ի վեր ի Պոլիս, այլ սակայն գաւառացի էին, և գիտենք թէ գաւառացիք, մինչեւ մէկ սերունդ, ո՛րքան պնդութեամբ հաւատարիմ կը մնան իրենց ընտանեկան աւանդութեանց, սպասելով որ իրենց որդիքն անխնայ ամեն ինչ յեղաշրջեն : Ընտանեկան կենաց մէջ Սաթինիկի ծնողք հաւատարիմ աւանդապահներ էին արեւելեան սովորութեանց : Չենք կարող ըսել թէ չունէին սէր իրենց զաւակաց համար, բայց միթէ խոհեմութիւն էր գուրգուրալ անոնց վրայ գգուանօք, սիրակաթ համբոյրներով : Չէ՛, այդ տունը չէր պարտէզ մը ուր տըզայք ուրախ զուարթ թռչտէին, ճռնւողէին : Այդ տունը զօրանոց մ'էր ուր կը տիրէր խիստ կարգապահութիւն : Գէմքերն անժպիտ էին անդ : Եւ սակայն Սաթինիկ անձնակարծա էր ազատ օդոյ, սիրոյ և գրգռուանոց :

Ա. ԱՐՓԻԱՐԵԱՆ



19. ՆԿԱՐԻՉՆ

Նկարչին բացատրութեան միջոցներն են գիծ, ըստ-
ուեր և գոյն, բայց եթէ մի հոգեչունչ հրաշարուեալ
վրձին է որ կը նետէ զայդս մի կտաւի վերայ, կողե-
ւորի այն, և մարդիկ ծուներ կը դնեն երկիւղած այդ-
քլաստառիւ առջ զոր առ որն կը կոխէին դեռ ճար-
տարին մատն չտպաւորած 'ի նմա երկնային գեղեց-
կութիւնն: Այդ կտաւի վերայ ամէն ինչ կ'ապրի, կը
թրթռայ կեանքով, այդ հորիզոն կը ժմաի 2, այդ դա-
ւարիք օրօրել կը թուին մի քաղցրաշունչ զեփիւռէ:
գոյն չէ դա, այլ զգացումն, և գիծքն ու ստուերք է-
ականեր են որ կը շարժին, կը խօսին, կ'զգան, և ինչ որ
կը խորհին, կը տեսնես դու: Ռափայէլ 3; մի պահ յեր-
կինս յափշտակեալ սչուցիկ, կառնու յանկարծ վրձինն
ու երանգապնակն, ահա Մարիամն է Յիսուս մանուկն
իւր գրկին մէջ. ի'նչ իտէական գեղեցկութիւն, ի'նչ
չնորհ ու փափկութիւն, այդ նայուածքին մէջ կը նը-
կարի գոգցես մայրական սրտին բովանդակ գորովն ան-
հուն՝ խառն այն հիացմամբ, ապշութեամբ, ամօթլեած և
վարանմամբ, և սակայն անբացատրելի հեշտութեամբն
զոր պիտի զգայր մի կոյս որ յանկարծ իւր անարատ
գրկին մէջ մի մանկիկ տեսնէր երկընկեցիկ: Դիցիանի 5

(1). Լաթի կտոր — (2). Ժպտիլ — (3). Ռափայէլ, ամմահ
անուան նկարիչ իտալացի, իւր չքնաղ նկարներէն մին զայլ ակեր-
պութիւննք: (1488—1520) — (4). Պարկեշա — (5). Դիցիանի,
իտալացի նկարիչ:

յիբեար կը խառնէ գոյներն մի մոգական արուեստիւ, և այն վարչամակի վրայ մի կին կը կերպարանի հրաշագեղ 1. խառն 'ի խուռն են մազերն ու հանդերձներն. ձեռքն մի կառափ կայ արիւնշաղախ և իւր դէմքն կը բոցավառէ մի խորին ուրախութիւն: Մեզերա՞ է դա, ոճի՞րն է այդ գեղեցիկ կերպարանին տակ: Ո՛չ, Յուդիթըն է Հողափեռնեայ գլուխն 'ի ձեռին. իւր լանջի տակ մի կնոջ և դիւցազնի սիրտ կը տրոփէ և իւր հայրենիքն փրկած լինելոյ հպարտութիւնն ու երջանկութիւնն նկարուած են իւր երեսին վերայ. — Բուսէն 2 զջրհեղեղ կը նկարէ և կը թուիս ընթեռնուլ Նորտ Պայրընի «Նրկինք և Նրկիրն» և զգալ արհաւիրքն բոլոր այդ արարածոց զոր մահն ջրոյ երեւոյթին տակ կը պաշարէ յամենուստ անողոք: Ի՛նչ կորով բացատրութեան, և կարտասուես սա զոյգ մի տարիածուաց 3 վերայ որք մի երկնաբերձ ծառոյ դագաթն են ապաստանել, անմեղ են անշուշտ — դեռ չ'բացուած վարդի կոկոններ — և այլոց մեղքն է որ կը քաւեն: Կ'ուզեն ապրիլ, սիրե՛լ... բայց ահա կը բարձրանայ տարրն անգիտակից, կոյր գործի երկնային վրիժուց, և զմիմիամբ կը փարին գէթ մահուա՞ն մէջ միանալոյ համար. — ահա մի էջն շնորհալիցն Կուէօզի 4. ընտանեաց հայր մի է որ զՍուրբ Գիրքն կը մեկնէ իւր զաւակաց. մի Անգղիական տան ներքնակողմն կը թուիս տեսնել, Անգղի-


(1). Շատ Գեղեցիկ, — (2). Բուսէն, Գաղիացի Նկարիչ. (1594—1665) — (3). Տարփաւոր, սիրահար — (4). Նշանաւոր Գաղիացի Նկարիչ. (1725—1805):

կան տան որ կարծես ընտանիքի խտէալին իրացումն
անդդիացիք միայն գիտեն թէ ի՞նչ է ընտանիք և
է՞նչ ի՞նչ սուրբ հեշտութիւններ և վսեմութիւններ
այն համեստ ակմբին մէջ ուր տղայք կը ժողովին
ուրեանց հօր և մօր շուրջն, զգալով և շօշափելով ՚ի
ոտս իմաստութիւնն ու նախախնամութիւնն, ընտա-
նեկան յարկի այն մթնոլորտին մէջ որ զմուտուած 1 է
ամենէն սուրբ բնազդումներու խուսկերով: Ահա այս-
պէս ամեն նկարիչ, վեհաշուքն Միքէլ Անճէլօ 2 (գի-
տյա հանճարն արուեստին Պրոմեթէոսն 3 է), ստուերա-
տէրն, Ռամբրան 4 երանգաճոխն Ռուպէնս 5, բնասէրն
Իւյտայէլ 6, պատմագիծն Դաւիթ 7, գեղջկականն
Իէնիէ 8 և ծովու ու երկինքի սիրահարն Այվազովսքի 9,

(1) . Զմեււումով պատած, անուշահոտած — (2) . Միքէլ—Ան-
ճէլօ, իտալացի մեծ անդրիագործ և նկարիչ, անուանի է նորա
վերջին գառառտան»ը . (1474—1564) — (3) . Պրոմեթէոս, որդի
Յարեթի . սա շնեց զմարդն կաւով և ասոր կենդանի շուշ փչե-
ու համար, երկնքէն հուր գողցաւ, որոյ համար Արամազդ զանի
ղթայեց ի կովկաս, ուր անդղ մի նորա լերդը կը կրծէր: Գրագի-
տութեան մէջ, ակնարկութիւն է սա անոնց՝ որ բնութեան, գի-
տութեան ևն. խոր գաղանխքները հեռագօտել կուղեն — (4) . Ռամ-
բրան, Հոլանտացի նկարիչ, իւր գլուխ գործօցներէն է «Տուրիթ,
Սամարիացին» ևն . (1606—1674) — (5) . Ռուպէնս, նշանաւոր Պեյլճ
նկարիչ . (1577—1640) — (6) . Ռիւյտայէլ, նշանաւոր Հոլանտացի
նկարիչ . (1636—1681) — (7) . Դաւիթ, երեւելի Գողթացի նկարիչ .
1748—1825) — (8) . Թէնիէ, Պեյլճ նկարիչ, հայր և որդի Էջմարտար
արուեստագէտք . (1582—1649) — (1610—1694) — (9) . Յովհ . Այ-
վազովսկի, Ռուսահայ տաղանդաւոր նկարիչ, իւր գլխաւոր գոր-
ծերն են, «Չրհեղեղ»ը, «Իսթմու մէջ արեւուն մարը մանկը» 1854ին
«Արեւոյի ու մթնոլորտութիւնը», «Սասկալի նաւարկութիւն մը», ևն:

մի քանի գծերու, ստուերներու և գոյներու միջոցաւ զոր սակայն ինքեանք միայն գիտեն գաղտնիքն միաւորելոյ, խառնելոյ, դաշնակելոյ այնպէս որպէս կընեն կը սլատկերեն մեզ որ ինչ կայ ամենէն գեղեցիկ բնութեան, մարդոյն, պատմութեան, գործոց, կրից և մշտաածմանց մէջ, կը սլատկերեն՝ խտականն ամենայնի գեղեցկութեան որ զմայլմամբ կը համակէ զմեզ և մեր հոգւոյն համար ազնիւ վայելումներու և ազնիւ յոյզերու ազբիւր մի կը վնի:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



ՁՕ. ՀԱԶԱՐԱՆ ԲԻԻԼԲԻԻԼՆ ԵՒ ՍԸՀԱԿ ԹՌՉՈՒՆ

Բաղիչոյ գարունը ունի սքանչելի առանձին ճաշակ մը. այդ ձորը երջանկացոյց զիս տեսնել տալով հազարո՞ն բիւլբիւլն յիշատակեալ հէքեաթներու մէջ, զոր տեղացիք կանուանեն նաեւ՝ «Տուտի խումրի»։ Լսեցի իւր զմայլելի երգերը, զորս կերգէր իւր զուտ ու քաղցրը դայլայլով, որ կը լեցնէր ձորն ու անտառն. արդարեւ հազար եղանակ գիտէ գեղգեղել. սարեկի մը մը մեծութեամբ, աչեղ, լանջագեղ, թիկունք և գլուխը փայլուն սսկւոյ գեղնութեամբ. թեւերը սեւա-

Նայպէս պա ճիւղին մէջ նշանաւոր հանդիսացած են Պալեան Յակոբ Պէյ, Աբրահամ Մաքսեան, Տեղեմուք Էմբերնեան, Ուսեա Պեհլաւ, Պեարոս Արտոյեան, Ամէն Եղաբնեան:

ուխ, ծանր և վսեմ նայուածք մը ու շարժուածք մը
 էնի. Թուիչը արագ է, բայց ոչ մացառի փոքրիկ բիւլ-
 իւլի նման վժիկ վժիկ ու ճըռ ճըռ, և ոչ անոր պէս
 քվզակ ստոստիկ, ու մարդոց անտեսող. սա ընդհա-
 առական հաճոյք կ'զգայ ցուցնել իւր գեղն, և կախոր-
 ի երգել, երբ մարդ կը լսէ:

Բաղչոյ ձորի ծառերուն վրայ, ամէն իրիկունն երբ
 սրկը մար կը մտնայ, Թփերու մէջէն մի ողորմուկ,
 սեղմուկ, ամչկոտ աղջկան մը ձայնի նման, սրտի դըպ-
 ող շքովոց մը կը լսուի. — «Սըհա'կ, Սըհա'կ, Սըհա'կ...»
 Երիցս կը կրկնուի, քիչ մը կը լռէ, կը Թուի Թէ՛ ար-
 նագանքի մը կամ պատասխանելոյ մը կ'սպասէ, ապա
 ննչոյս իւր սպասածէն՝ կը կրկնէ ու կը կրկնէ «Սըհա'կ,
 Սըհա'կ, Սըհա'կ». մինչեւ առաւօտ: Պըաըտիկ, կատար-
 լուխ, վախկնտ, ամչկոտ այս Թուչնիկն ո՞վ է, հար-
 ուցի բարեկամէս, — վա՛, չ'գիտես դու քոյր մը ու
 ողբայր մը եղեր են որբուկ, իրիկունն մը Սըհակ իւր
 քրոջ ծամերը կը սանտրէր, յափշտակուեցաւ յանկարծ,
 Երծի՞ւ էր յափշտակողն Թէ գազան՝ Աստուած գիտէ,
 չէլու ձայնին հետ, սիրտ կելնէ քրոջ, Աստուած, ինձ
 աւքու Թեւեր տուր Թուիմ իմ աղբրուկ գանեմ, Աստ-
 ւած Թեւ տուեր աղջկան, որ դեռ սանտրն էլ վեր
 էլլսուն: Այն օրէն ի վեր ծառեր ու դռներ կը Թա-
 հառի, լեռներ ու անտառներ կը Թուի ու կը կանչէ
 «Սըհակ, Սըհակ, Սըհակ»:

Յ 1 . ԲԵՐԱՅԻ ՀՐԻՆՔ

Երէկ, մի արթուն, զուարթուն հանրութիւն կը ծաղկեցնէր այս վայրերը, Եւրոպական եռանդուն և Ասիացի տոկուն և երիտասարդութիւնները ձեռք ձեռքի կը տային Թուրքիայի Բարիզը հոպ հիմնելու համար աշխատութիւնը իւր անխոնջ բազուկովը, դիւրութիւն և երջանկութիւն կը բաշխէր ամենին: Հոս էր ինչ որ աւելի շուք կը բերէր այս երկրին, ինչ որ աւելի քաղաքակրթութիւն և ճոխութիւն կը յայտնէր: Հոս էր հանրային պարտէզն ալ, ուր կրկին սեռերը իրարի ժամադիր կը լինէին, «Գեղեցիկ»ների թեթեւ շշուկին և նուազարանների շոյտ կամ յամր ձայներին ներդաշնակութիւնը լսելով կ'զմայլէին... Հոս էր նաև թատրը:

Այսպէս, ամեն տեղ կեանք էր երէկ:

Այսօր, մի լայն գերեզման բացուած է հոն: Աւերակների անդորրութիւնը լքում կը պատճառէ ականատեսին: Մի մոխիրի անապատ կը տարածուի քո առջեւ: Այս փլատակների ուկչեանին մէջէն իբր փարոս կը բարձրանան սև և մուր ծխաններ, որք շանթահար տիտանների 2 պէս՝ կարծես դեռ չեն ուզեր խոնարհիլ: Պճնասէրն Բերա մի ահեղ պատանի մէջ է, կուգէ՞ սնգոյր 3 — մոխիրը առատ է: *

(1) . Դիմացիւն — (2) . Հեկոյ — (3) . (Բարթըղ):

Եւ է՞ր այս աւերը :

— Մի օր, անհոգութիւնը մի կայծ ձգեց, հովը
չեց և հրդեհը ծնաւ : Այս ահաւոր հսկային բաւեցին
քանի ժամ՝ ամեն ինչ նուաճելու ամեն բան տապալելու
ամար : Նա Բերան դրկեց իւր կրակէ բազուկներովը,
Խորակոյտների վրայէ վազելով՝ մի դժոխային ծուխ
որտաշնչեց, մինչեւ երկին բորձրացուց իւր բոցէ՝ բա-
երը 1, և իւր նախճիրներուն սպառու մը տեսնելով,
Սլ հանդէիմք մրմռաց. կէտեր էր, կրակը մարե-
աւ, և հրդեհը, իւր մոխրոտ ունը տարածելով, ե-
ացող սալարկին վրայ քնացաւ : Բիւր ընտանիք թըշ-
ւառացած էին, և վրանների քաղաքին տակ կը հե-
էին հետեւեալ օրը :

— Նօթի եմք, մայրիկ :

— Համբերեցէք, զաւակներս. դեռ կանուխ է . . .

— Այս մի օր է որ բան չէ մտած մեր բերանին մէջ :

— Հրդեհը առաւ ձեր հացը, զաւակներս :

Ի՛նչ անգութ անձ է այդ հրդեհը, փախաց վա-
անիկ :

Մայրիկ, հաց տուր մեզ :

— Աղջիկներս, մի քիչ ալ սպասեցէք :

Կը մարիմք ահա նօթութենէ :

— Ո՛հ, մի լաք, աղջիկներս, մի՛ կոտրէք ձեր մայ-
ն սիրտը . . . Աստուած մեծ է :

Միշտ այդպէս կըսես :

— Մի պատառ հաց, մայրիկ :

(1). Մաղեր (փոխարեքական) :

— Հրանտ, Աննիկ, մի՛ յուսահատիք, Երկին պիտ
գթայ ձեր վրայ...

Մինչեւ երբ սպասենք, անո՛յչ մայրիկ:

— Ո՛հ, ձեր հայրը չերեւցաւ դեռ... մի՛ յուսա
հատիք... մի՛ յուսահատիր, եղբայր. երկին պիտ
մխիթարէ զմեզ, Ասաց Աննիկ Հրանդին:

Մայրիկ, է՞ր կըլաս:

— Ձեր հայրը...

Մի՛ լար, կարելի չէ որ մեր հայրիկը կորած լինի
այնպէս չէ՞:

— Օ՛չ թէ, այդպէս լինէր, հառաչեց մայրը՝ սըր
քելով մի արտօսրի խոշոր կաթիլ: Բայց... յարեց նա
վհատ ձայնով:

Բա՛ւ է, մայրիկ, ո՛հ, մի՛ լար... թէ ոչ, մենք ալ
կը լամք...

— Դուք հանդարտ կեցէք, զաւակներս. բայց ան
դրանիկս... ո՞ւր է Երուանդ:

Հոգ մի աներ, մայրիկ, նա դպրոց գնացած է ան
չուշտ. դու չե՞ս ասած մեզ թէ բարի է Աստուած,

— Այո՛, յարեց վշտակիրը մեքենայէս: Եւ սակայն
թաշկինակը ձեռք առաւ:

Երկու զաւակ միատե՛ղ:

— Մայրիկ, ի՞նչ կը փսփսաս:

Օ՛հ, սիրուն Արամ, քաղցրի՛կ Հրանոյշ... այրա՛ծ.

— Հաւատայ ինձ, մայրիկ, պտոյտի դրկած է հայ
րիկս զնոսա, և գուցէ սա երկար կառքին մէջ են:

Ա՛հ, դժոխայի՛ն անմեղութիւն, պոռաց մայրը
տեսներով մահի սև կառքը, զոր մանուկը կը ցուցնէր

9

22. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Գրականութիւնը ժողովրդի մը քաղաքակրթութեան ըզրիտ նկարագիրն է, այնպէս որ եթէ հնար ըլլայ նշել ազգի մը քաղաքական պատմութիւնն՝ անոր գրականութենէն կրնայ դուրս բերուիլ իւր ամբողջ կորուած կեանքը. զի գրականութիւնը քայլ առ քայլ կը փտուի ազգի մ'իմացական, բարոյական և նիւթական արդացման: Եւ յիշուի Հոմեր՝ Ա թէ՛ հին և թէ՛ նոր հատմարաններուն ու գիտնոց լուսոյ անհուն վառան մ'եղած չէ՞ միշտ՝ ուր կը գիմեն անոնք երբ արդևութեան հին կեանքին վերաբերեալ մէկ մթին բոլոր լուսարանել ուղեն: Քաղաքական պատմութիւնը ինչայ ստել. կիրք կրնան զմեզ խաբել հոն. միայն մացականութեան արդիւնքը վեր են ամեն նախանձէ, մեն փոքրոգի 2 կիրքերէ:

Յոյնք կը պարծէին և կը պարծին տակաւին թէ արայից Արքային մէկ քանի միլիոնէ բաղկացեալ բասկին յաղթեցին 3. Նարոյէոն մը եղաւ բաւական միոնաւոր զօրքեր 'ի փախուստ դարձնող Միլդիատի, Սիսդիատի, Թէմիդոկլի, Աննիտասի և գլխէն կորզելու

(1) ՀՈՄԵՐ, տեղեբական Յոյն քերթողահայր, հեղինակ «Իլլական, ոգիսական» գիւցազներգութեանց: Հաւանականաւոր կարէր յամին 900 նախ քան զՔրիստոս: — (2) ՆՍԼԱՍՏ, արգ: — (3) Ահնարկութիւն մարական պատերազմներու՝ յորս նաստան Քոերքարսի զօրութիւնը խորտակեց սահաւաձեռն զօրք: Այս անուններն Յունաստանի գիւցազանց անուանքն են:

իրենց դափնեաց թերթերուն մէկ մասը՝ ցուցնելու թէ անհնար էր Արեաց արքային արքայն զօրք համա խմբել՝ և անհնար ևս էր Յունաց՝ անրոց յաղթել Ապա Մակեդոնացիք, Կեղտեր և Հռովմայեցիք եկամուսուցանելու թէ Տրովա 1 հիմն 'ի վեր քանդողները Ասիոյ խորերէն անթիւ բարբարոս և թշնամի ցեղել կոխկռտելով անցնող Քսենոփոնի 4 ափ մը զինուորները կոչուած չեն իրենց դիցասանուհւ արքայից անուամբ մշտադալար պահելու Արիսի ընծայած մըր տենին :

Սակայն մինչեւ այսօր ո՞վ կրցաւ խլել Հոմերէն իւր բանաստեղծութեան դիւցական գաւազանը. ո՞վ չհամարձակեցաւ յափշտակել Թեմոսթենէն 2 իւր ճարտարախօսութեան շանթը. ո՞վ ժտեցաւ կորզել Փիդիասէն իւր մոգական կտրոցը, ո՞վ մտաբերեց առնուլ Պինդարի 3 և Անակրէտի 4 անմահարար քնարը. — Եւ ոչ ոք Նա աւանիկ անոնք հոն են, վերը ի Պինդոս 5, շանթածիզն Արամազդայ դիցահօր ապարանից քանդուելէն, իւր դիցերամ զարմին և զաւակաց ճաճանչներուն մարելէն՝ և Ուլիմպոսի թափուր մնալէն յետոյ իսկ . . .

(1). Տրովա, քաղաք փոքր-Ասիոյ, որ տասն տարի դիմադրեց Յունաց. (1193—1184, նախ քան զԲս.) :— (2). Քրենոսիոն Յոյն պատմագիր, գրեց ճնահանջ բիւբուն կիւրամարզն. (445—355 նախ քան զԲս.) :— (3). Թեմոսթենէն տնուանի Յոյն ճարտարախօս (395—322 Ն. Ք. զԲս.) :— (4). Պինդար, նշանաւոր քնարերգակ քերթող Յոյն. (520—440 Ն. Ք. զԲս.) :— (5). Անակրէտն նշանաւոր քնարերգակ քերթող Յուն. (559—478 Ն. Ք. զԲս.) :— (6). Պինդոս, լեառն ի Յուլիաստան, նուիրական Ապոլլոնի և Մուսանից :

ո՛ն, հոն է նաև Յուճական փառաց անթարչամ դափ-
ին, զոր ոչ ժամանակին ցրտասառոյց շունչը կրցաւ
դամբել՝ և ոչ աշխարհաւեր պատերազմաց ծովիւր՝ եղ-
անել :

ԵՂ . ՄՈՒՐԱՏԵԱՆ

ՁՅ . ՌԵՄԼԷԷՆ ՅԵՐՈՒՍԱԳԵՄ

Մեկնեցանք Ռեմլէէն, ճամբան Առաւօտ լուսոյն բա-
ղաձայն երգելով :

Աղջամուղջ 1 է : Բայց ընդառօտ Տաճկական դամբան-
ներ կը նշմարուին :

Նորէն մտանք Սարօնեան արգաւանդ դաշտը :
կերթանք ու կերթանք :

Անցնելով կամուրջէ մը, աջ ու ձախ թողլով՝ դա-
աղան գիւղեր, աշտարակաձեւ պահականոցներ, ո-
ոնք Սիւրէյեա փաշայի օրով շինուած են :

Տակաւին լուսոյն ժամանակ կուզէ :

Իջնանք դառ 'ի վայր, և ահա՛ դաշտին ծայրը կը
ծտենանք, ուրկէ կերեւի Աբիմելիք քահանայապետին
այրենիքը՝ Պէյդ-Նուպա :

Այս տեղ ստացաւ Դաւիթ՝ Առաջաւորաց հացը,
ոյն նահատակ քահանայապետէն :

Դիտենք այն բլուրը՝ որուն վրայ կանգնուած է
ադրուն ըսուած կիսակործան գիւղը :

(1) . Մութ :

Երկրորդ կամուրջէ մ'անցնինք :

Աւանդութիւնը մեզ կը հաւաստէ թէ՛ Եգիպտացի Իիմաս աջակողմեան աւազակը հոս կը բնակէր :

Ասկէ կսկսին Յուդայի լեռները :

Ձախակողմը՝ գիւղ մը կը տեսնուի . այս է հին Յամաուսը , որ երբեմն արիւնահեղ ճակատամարտներու թատր հանդիսացաւ :

Վենպասիանոս վերանորոգելով այս քաղաքը , Նիկոպոլիս յորջորջեց :

Իեռ կը նշմարուին յանուն եօթն Մակաբայեցւոց հինաւուրց կործանեալ վանքին նշխարները , որ այժմ Յրանչիսկեանց միաբանութեան ձեռքն է :

Տեսնելու արժանի են այն մասնաւոր ջրի ակերն , որ ճամբուն վրայ կը գտնուին . Պիր-էյուպ կոչուած ջրհորը , և կամուրջէ մ'անդին գտնուած աւերակ տուն մը՝ Տէյր-էյուպ անուն :

Պիր-էյուպ կը նշանակէ՝ Յորայ հորը , և Տէյր-էյուպ՝ Յորայ վանքը :

Ահա Արշալոյսը կայտուելով արեւելքի դռները կը բանայ :

Մօտեցանք ճորադուռին , Պապ-էլ-Ուատիին :

Եւ ահա ճանապարհին կէսը կտրեցինք :

Կառապանը իւր ձիերը պիտի հանգստացնէ :

Մենք ալ օրէւին մէջ քիչ մը ննջենք . . . :

Ժամը՝ մէկն է : Վարդակարմիր արեւուն նախածագ շառաւիղները սկսան երեւնալ :

Ա՛լ ճանապարհ ելնենք :

Մտնենք յուդայաստանի լեռներուն կիրճը :

Սրարշաւ կընթանայ կառքը՝ երկու շարք լերանց մէջտեղէն :

Անտառին մէջ փայտահար Ֆէլլահը, ժանտաժուտ Արարը օրն 'ի բուն կաշխատին . ծառերը կը յօշոտեն :

Արագ արագ կ'ընթանանք :

Հասանք Ապուղոշ, հին Կարիադարիմն ուր միջոց մը տապանակը մնաց Ամինադարայ տան մէջ՝ գերութենէ վերադարձին :

Խոնջ ենք, սակաւ ինչ յոգնութիւն՝ առնենք այս գեղեցիկ հովտին մէջ : Հոսկէ նկատենք այն հեղեղատը՝ ուրկէ ժողվեց Դաւիթ հինգ քարերը, և որոնցմով ըստպաննեց Գողիաթը :

Կառքը իւր ընթացքը կը շարունակէ : Կանցնինք առժամանակեայ տախտակէ կամուրջին վրայէն դողդղալով : Բուն քարէ կամուրջը փլած էր :

Օ՛ն անդր յառա՛ջ : Կառքը դառ ի վեր պիտի ելնէ : Արարը խոնջած, կառապանը կը հրամայէ հետիոտս քաշել մինչեւ գազաթը : Կ'սկսին հեռզհեռէ երեւիլ Ս. Համբարձման լեռը, Խաչավանուց ձորը, և վերջապէս մեր նպատակակէտն եղած Ս. Երուսաղիմայ շինութիւններն, որոնց մէջ պարծանօք կը փայլին մեր Ս. Յակոբայ երկնակամար Կաթողիկէն, շրջապատեալ հովանուն յաղթ մայրիներով, նոյնպէս ազգային հոյակապ Ատորիարքարանի և Ջեմարանի բարձրայօժ գմբէթները :

ՅԷ. ՎՈՍՐՈՐԸ 1

Քանի՛օն գեղեցիկ և վսեմ է Վոսրորն, երբ միապաղաղ Չ կը հայլիանայ նա հանդէպ երկնից, ոյր կապոյտէն, որպէս Աստուծոյ ճակտէն լուսածիծաղ կ'ժպտին ոսկերիք աստղունք ամրան գիշերոյն: Գո՛գ 3 աղամանդեայ թագ մ'է այն, զոր պարգեւած են Պոնտոսն ու Մարմարան, պսակելու համար երիտասարդ Եւրոպան ծերունի Ասիոյ հետ:

Քանի՛ մոգական, հոմերական են այն բիւրազան և գեղատեսիլներ, զորս այցորդին ընդ առաջ ի հանդէս կածեն իւր ամրանց նկարէն 5 ամփիթատերք. նա առաւել յորժամ գարունը կը ծաղկազարդէ, ամառն կ'ոսկեմրդէ և բնակութիւնն կողբելորէ զայնս, զորս բնութիւնն և արուեստն ևս, թուի թէ, օր աւուր, նախանձընդդէմ միմեանց նորանոր պճնիւք 6 և ձօնիւք կ'օժտեն:

Ո՛րքան մեծավայելուչ կը հանդիսացնեն զԱյն՝ վեհափառ փատիշահներու այն փառայեղ Սերայներն, որք ծովուց և ցամաքաց աշխարհակալներու նման յաղթապանծ կ'բարձրանան նորա փառանց վերայ. և որոց ահեղ ու չքեղ դէմքէն աւելի ահեղ ու չքեղ նշանա-

(1). Վոսրոր - եզանցք - բոկլէ Յոյն՝ Վոս - եզն և Պորոս - անցք, բառերէն բարդեալ է. իբր թէ Վոսրորն այնքան նեղ և այնքան լայն է, ընդ որ եղ ջմը կարէ մէկ եզրէն միւսն անցնիլ: — (2). Միակըտուր (եկփարէ): — (3). Կարծես թէ: — (4). Բիւք զանազանու թեամբ: — (5). Գոյնզգոյն: — (6). Զարդուք:

յուլթիւնն, ո՛րքան զքեզ դողացնեն վսեմ զմայլմամբ,
վսեմագոյն զմայլմամբ մ'եւս կ'դղրդէ զքո հոգի այն
ճարտարապետ հանճար՝ 1 որ արարչագործած է զայդ
կիակերտներ 2: Որքա՛ն շլացուցիչ, հրապուրիչ կ'գոր-
ծեն փայլն ու շուքն Վոսբորին գեղեցկակերտ ապա-
րանք, հիանալի ամարանոցք նախարարաց, դեսպանաց
և մեծատանց և նոցա վսեմ բնակչաց պետական, պաշ-
տօնական ճոխապանծ ներկայութիւնք, խրախճանք,
շուայլութիւնք և նոցա տիպար առաքինութեանց հետ
և յաճախ նոցա տարախոխիկ մոլութիւնները: Իսկ ո՛րչափ
հմայելի կ'առնեն մեզ Վոսբորն՝ այն սիրուն գիւղօրէք:
Ոմանք ջրարբի 3 հովտաց մէջ թաղուած, այլք առ ստո-
րոտս պրակագեղ բլրակի մի տարածուած, մի քանին
արծւոյ բոյներու նման մամուռ ժայռերէ կախուած,
ուրիշներն հրուանդանի մը կամ սարաւանդի մը վերայ
սլացած: Հոս բուրաստան մի փթթինագեղ, հոն պար-
տէզ մի պտղաշատ: Աստ անտառ մի, անդ՝ բլուր մի,
այլուր մարգ ու մարմանդ: Քիչ մ'աւելի հեռին գե-
ղածիծաղ զառիվայր մի, ոյր կողերէն, իբր յստեանց՝
կ'ծորէ լուսաղբիւրն: Դէպ ի վեր՝ լերին արտեւանէն և
կ'խոյանայ սարաւոյթն 5 կամ դղեակ մի: Քայլն ան-
գամ մի հասարակաց զքօսավայրեր: Ամենուր ճեմու-
ղիներ, ծառուղիներ, ուր կ'զեռայ զքօսասիրաց թա-
քօրը: Եւ երբ ամրան լուսնկայ գիշերն՝ իւր ստուեր-


(1) Գրագէտն կակնարկէ Պալեանց գերդաստանին՝ յորում նը-
շանաւոր հանդիսացան շքեղ գաստակերաներու: շինութեամբ, Յա-
նոր Պէյ Պալեան, Սարգիս Պէյ — (2) Հիանալի շէնքեր — (3) Ջը-
տոտ — (4) Լերան գլուխ — (5) Բարձր պալատ:

ներն իբրեւ շուք կ'ձգէ Վոսթորի այս հիատեսիլ համապատկերին վերայ, ու երկնից ջահերուն հետ՝ երկրի ջահերն ալ վազուելով մէն մի տուն կ'լինի աստեղատուն մի, ո՛րքան կ'ըլերապատկեն Վոսթորայ ասիունք իրենց դիւթն 1 ու հմայք: Ապարանէն սկսեալ ցհիւղեակ կը պարպուի, և Վոսթոր իւր ալեաց ու աւազուց չափ խառն ու ծփուն հողիներ կը համրէ իւր գեղազուարճ ասիանց վերայ: Թող խելառն 2 անդ խենեշանայ 3. Թող ցոփն անդ պակշտի 4, շողփաղփն Թող շողակրատէ, Թեթեւօլիկն Թող երերայ, սնապարճն Թող փքայ, ծերն Թող դաչէ 5, մանուկն Թող կայտնէ, պատանին Թող խայտայ, երիտասարդն Թող ճոխայ 6, կոյսն Թող նազի, կինն Թող սիքայ, ամբոխն Թող յորդէ, պաշտելով անձնիւր իւր զբօսանաց և տարփանաց կուռքը: Իսկ ես, բարեկամ, որ ամբոխէն աւելի միայնութիւնը, աղմկէն աւելի լռութիւնը ու ժխորէն աւելի դաշնակութիւնը կ'սիրեմ, կերթամ ման գալ մենիկ, մերթ սա հեզասակ առուակին եզրը, սիզուտին 7 վերայ, ոյր Թաւշին ի ծոց կ'նիրհէ լուսնեկին դողդոջ նշոյլը: Մերթ կերթամ հանգչիլ դա վարսադեղ ծառոյն ներքեւ, ոյր տերեւոց մէջէն, անհատնում ու անպատում ճլվլումներովն՝ իւր և իմ յոյզերն կ'երգէ մեղամաղձօտ Ծիլումելը 8. երբեմն յասմկեայ սարբինայով քօղքուած պատշգամն կ'քաշուիմ, երազուն աչքով կ'հայիմ ծովուն և երկնքին, և փոշիէն

(1). Յափշտակութիւն: — (2). Յիմար: — (3). Ապականեւ: — (4). Սերահարիւ: — (5). Յնորիւ: — (6). Ճիւալ: — (7). Կանաչաւեա տեղ: — (8). Սոխակ:

ու նորա վրայ սողուն խուժանէն վեր կը սլանամ ար-
ծուէթուիչ հոգևով մի դէպ ի գեղեցկին ու վսեմին ի-
տէալներու լուսաշխարհներն, փարատելու համար կե-
նաց և աշխարհի վերջին պատրանքը. և, երբ ա՛լ դադ-
րած է վերջին ոտքը խուովելէ զծովային, և վերջին աչ-
քը՝ պղտորելէ զալեակն, կ'նետուիմ դա ծիրանեծած-
կոյթ մակոյկին մէջ, և ցյադուրդ կ'ըջադայիմ արծաթ
ծաղիկ Վոսբորը: Մովակն յայնժամ իմ տաճարս է,
երկինքն՝ ինձ ձեղուն, աստղունք՝ կանթեղք, հող-
մունք՝ խորհրդակից, ստուերս՝ ինձ ընկեր: Անդ միայ-
նակ կ'սիրեմ ծովուն ու աստեղաց Աստուածը և կ'ա-
ղօթեմ նմա: Կ'ծրարեմ իմ դրօսանաց յիշատակը՝ գիշե-
րոյն ստուերաց, լուսթեան, ալեակին, նշուլին, սիւ-
քին և թեւճակաց Վ ներդաշնակ ճողփիւնին մէջ, որ
սլահեն զայն մշտաթարմ, և երբ ամեն անգամ որ նշին
ծաղիկ, գաղթական ծիծառն ի բոյն վերադառնայ, և
մարդիկ ալ, նոր ի նորոյ, և քան զիս յետոյ, գան
Վոսբորի գեղազուարճ օփանց վրայ դրօսնուլ, երգել,
և սիրել զեփիւռն ու ստուեր, ալեակն ու ճաճանչ,
վկայեն և ըսեն նոցա թէ՛ «Ես ալ դրօսայ, աղօթեցի,
երգեցի Վոսբորայ դրախտավայր օփանց վերայ»:

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ



Գ Լ Ո Ւ Խ Գ

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

(Նամակ Ամեն. Տ. Մկրտիչ Խրիմեան Սրբազան Հօր ան.
Արժ. Յովհ. Աւագ քահանայ Մկրեան, նորա Յակոբիկ
որդւոյն մահուան անփխ.)

Որդեկորոյս Հայր.

Գարնան զուարթաբեր առաւօտ է, Մաղկազարդի
տօն էր. մինչդեռ աշխարհ կը ծաղկազարդէր, քո ծա-
ղիկդ խամրեցաւ, ո՛հ, և մինչ մանկտին ձիթաստան-
եայց լերան վրայ Ովսաննայ կ'երգէր, մինչ եկեղեցին
կը հրճուէր, դու Յակոբիկդ կուլաս և ինձ գոյժ կու-
տաս, որ իբրեւ զՀայրդ կը սիրէի զինքն, և ո՞վ չէր
սիրեր այդ աննման Հայ զաւակդ, որ իւր ամենազնիւ
ձիրքերով սիրելի եղած էր ամենուն: Եւ գիտեմ, դու
անհնարին կը վշտակրիս և կը խռովիս թէ ինչո՞ւ հա-
մար շուտ խամրեցաւ նորաբոյս գարնան ծաղիկդ: Դու
կը հաւատաս, Հայր, թէ ծառերու և ծաղիկներու
զարդարիչ մշակը՝ երկնից նախախնամութիւնն է. և
նա է որ մահկանացուաց աշխարհէն կը տեղափոխէ
անմահութեան աշխարհին և դրախտին մէջ կը տնկէ.

ո՛վ կարող է կամ իրաւունք ունի նախախնամողին
եռ.ք բռնել, որ իսկապէս ծաղիկներուն դարմանիչ
ոէրն է:

Աի քանի օր առաջ զՅակոբիկդ տեսայ, օրահասին
տա էր, նա գիտես թէ կռուէր իւր անձին դէմ և
ըրկնից դէմ կը ոգորէր. հողին ներքուստ կը հեծէր,
ըթունքները կափկափելով կը պաղատէր. «Տէ՛ր իմ,
յասէր, դեռ մատաղ մանուկ եմ, նոր եկայ աշխար-
քը, թող որ տեսնամ թէ ի՞նչ կայ. ես լոյս կը սի-
նեմ, առաքինութեան ասպարէզ նոր մտեր եմ, ի բո-
լոր սրտէ յառաջդիմութիւն կը սիրեմ. ո՛հ, մըր-
ցանակս մնաց, թոյլ տուր ասլրիմ, նպատակիս հաս-
ցիմ, մրցանակս առնում և ասպա մեռնիմ»: Յառաջդի-
մութեան սիրահար Յակովբ, ա՛հ, մինչեւ քու տաղ-
նապիլ և մահուն օրը գիր սիրեցիր, ու գրիչ սիրեցիր
և յառաջդիմութեան կարօտով մեռար: Յակովբին գը-
րիչը՝ ձեռք տուէք, այնպէս դրէք ի գերեզման: Թո՛ղ
ըթոյս Նրկնից դպրութեան մառանը, հրեշտակներու
հետ պարապի, երգէ ու գրէ:

Հա՛յր, կաղաչեմ, Հայրիկէն ողջոյն տուր Յակոբի-
կիդ, ես չեմ կարող ժամանել և չեմ հանդուրժել
որա դագաղը տեսնալ: Համբուրէ՛ այն պայծառ ճա-
կատը, որ յառաջդիմութեան նշան կուտար և մահ-
ուան ժանտ ձեռք եղծեց զայն: Համբուրէ՛ այն գրա-
սէր աչերը որ ընթերցմանէն լուսանուաղեր էր. և գի-
տեմ թէ քանի՛ անձկութեամբ կ'սպասէր, որ իւր վաս-
տակաւոր մատանց երկասիրութիւնը Վ տեսնայ և այնպէս

(1). Նախաշուիդ գիտութեանց և արուեստից:

մեռի և միթէ ուխտե՞ր էր, Հայոց մանկաւոյն ընծայ մը տալ և մնաս բարով ասել:

Սորա համար, Հա՛յր, քո վիշտն անկշիռ է և ո՞վ կարող զքեզ և քո ցաւերդ սփոփել:

Այլ մխիթարեա՛ց, մխիթարեա՛ց, դու Քահանայ Տեառնն ես, Քահանայ ես Բրիստոսի եկեղեցւոյն, անմահութիւն և արքայութիւն կը քարոզես, ձեր մեծ կոչումն է, որ սգաւորները մխիթարես: Ուստի դնա՛ սեղանւոյն առաջ զոր կը պաշտես դու, քու ձեռներդ վերամբարձ տարածէ՛, լի հաւատով գոչէ՛ Ոսկերեքանին վերօրհնութիւնը:

«Փա՛ռք քեզ, Աստուած, փա՛ռք քեզ, յաղազս ամենայնի»: Դարձի՛ր ի տուն, սփոփէ՛ Յակոբիկին սգամեռ մայրիկը, որ քան զքեզ առաւել կաղէկիզի և կը մորմոքի: զի մայր է, և մօր գորովն անհուն է: ✕

Վշտակից Ձեզ

ՀԱՅՐԻԿ

1876 Մարտ 28

Handwritten signature

(Նախակ Գրիգոր Օտեանի, առ Գ. Եղիսկ. Սրուանտեանց):

Handwritten Հա՛յր Ենօրհնատեալ:

Եւր դաւառին մէ՞ջ ծնաք որ այդքան շատ ունիք եռանդ և աւիւն 1, և այն որչափ բան գիտէք հայութեան վերաբերեալ: Կը շրջիք կը շրջիք ու միշտ նոր

(1) Եռանդ:

ան մը կը գտնէք. նոր համ մը կ'առնուք, նոր հոտ
ը կը բուրէք:

Ձեր զրկած գիրքն է իրաւցնէ համով հոտով լիք-
ամն անուշակ՝ Արտամետու խնձորին փափուկ կաթ-
նորակ, հոտն անուշահոտ, ուռցուն, գաղձուն, ձի-
թենւոյն:

Ձեր ոճին մէջ՝ Հայոց կուսակաշտական դարերու մո-
տութիւնն ու դիւթութիւնը կայ. ձեր զգացումներն
ու մտածութիւնը՝ քրիստոնէական դարերուն սրբու-
թիւնն ու կուսութիւնն ունին:

Գլխացող առուններէն, խոնաւ հողերէն, թուփին
ու տերեւին մէջ սօսափող հովէն կը քաղէք արտօսը
ու հառաջ — մնջիկ աղպնւոյն աղու մրմունջներն. ա-
ղու Եղիշեայ նախանձընդդէմ պայքարաւ:

Դուք ոչ իրրեւ բնագէտ ու բնալոյծ կը պարտիք
ու կը դատէք ծառն ու քարը, հողն ու ջուրը, դուք
հողի կը տեսնէք ամեն բանի մէջ. և եթէ բան մը հո-
գի չունի՝ դուք հողի կուտաք անոր:

Գ. Ս. ՕՏԵԱՆ

ՉԵՐԱՋ ԱՌ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Յ. Հասգիւղ 12 նոյ. 1874

Շատ ուշ ստացայ նամակդ, Եղիա, և կը փութամ
պատասխանել:

Յուսացած էի թէ կեանքիդ մէջ փոփոխութիւնը
կարագրիդ մէջ ալ փոփոխութիւն պիտի բերէ: Մեծ
ողաւ վիշտս երբ նամակդ կարդացի, զի զքեզ այնքան

դառնացած գտայ որքան էիր երբեմն . թո՛ղ , եղբայր
 թո՛ղ այդ մեղամաղձոտ վերացումները որք անյագ են
 մահին պէս և որք կրնան թուենել երիտասարդ ամե-
 րիդ ծաղիկը : Ապրէ՛ այնպէս որպէս կապրին ուրիշնե-
 րը , հաստատութիւն տուր գաղափարիդ , ամոքէ՛ զգա-
 ցումներիդ բոցը , անդորր պարգեւէ հոգիիդ որ կ'ա-
 լեծփի անդադար : Ես , որ անհուն կարեւորութիւն կը
 տամ կեանքիդ , զոր աւա՛ղ կը սպառես և դու անխիղճ
 պիտի փորձեմ դնել նամակներիս մէջ այն խաղաղու-
 թիւնը որում պէտք ունիս դու . թերեւս ընտելանա-
 լով նմա , հեշտալի գտնես զայն . թերեւս մի օր , փո-
 թորիկներէ ձանձրացած , սիրես նաւահանդիստը :

Երկու բան , խիստ կարեւոր ինձ համար , կը պակ-
 սին քո նամակէն : Չես գրած որպէս ես և թէ ի՞նչ
 կ'անես : Ոչինչ այնքան անհրաժեշտ է ինձ լսել որքան
 առողջական վիճակիդ և ուսումնական ընթացիդ լուրե-
 րը : Կը յուսամ թէ չ'պիտի մոռնաս իմ այս դիտողու-
 թիւնները երկրորդ նամակիդ մէջ :

Գալով այն նամակին զոր գրած էիր Պուրունսուզ-
 եանի ես նմա յանձնեցի զայն : Խնդրեց յինէն կարգալ
 սրտայոյզ տողերդ . ամբողջ ընտանիքը փղձկեցաւ , ծե-
 րունի Յակոբ աղան լացաւ :

Օտեան , որում տուի կարդալ քո նամակը , պատ-
 ուիրեց ինձ պատասխանել թէ ինք չը պիտի գրէ այ-
 սուհետեւ . (դա ալ մի վշտակիր էակ է) և թէ իւր ձայ-
 նը ենթադրէ՛ լսել ամէն անգամ որ իմանաս հովին
 աղմուկը , որ կը խուժէ և թաւալումը հեղեղին անդըն-
 դախոր 2 :

(1) . Հասցնել — (2) . Անգնդին մէջ խորտուզուած :

Հետաքրքիր ես դիտնալ թէ ի՞նչ նոր բան պատա-
ած է կեանքիս մէջ բաժանուամէ՞ դ'ի վեր: Իրաւագի-
տութիւն կ'ուսնիմ: Ուրբաթ և կիւրակէ օրերէն զատ,
յմեն օր կերթամ կայսերական լիկէոնին և մէջ ուն-
ընդրեւ իրաւագիտական հրապարախօսութիւնների:
Ի Յռանսացի կը ճառէ հռովմէական իրաւունքի վրայ,
Թ թուրք կը բացատրէ Օսմանեան օրէնները:
Բոլոր այն բարեկամներդ ու բարեկամուհիներդ ո-
րոյ ողջոյն զրկած էիր, կը բարեւեն զքեզ փոխադարձ
գացումներով: Պատրիարքին մայրը մի բաւական յու-
սկից վիճակ ունի: Ընտանիքս առողջութիւն կը մաղթէ
եղ:

Դարձիդ տենչացող

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ



ԴՈՒՐԵԱՆ ԱՌ Գ. Ա. ԱԴԱՄԵԱՆ

Բարեկամ

հասկէ

Հոս ձիւնը բաւական եկաւ, ծածկեց հիւղերը՝ ո-
ուն ներքնակողմը մտող թշուառը ըսաւ. «Ահա մեզի
ածկելու համար Աստուծոյ զրկած վերմակը», և դո-
սց. պատանքի մը պէս ցուրտ էր այն: Տաքցի՛ր այն
սուարանին քով և մի՛ նախատեր զայն թէեւ նժդեհ
լ ըլլայ. եթէ անչքաւորութեան մէջ այդ նժդեհու-

(1). Լիսէ, համալսարան:

Թիւնն ալ չըլլայ, ո՛ւր կը մնայ մեր ճակատագիրը այն ճակատագիրը՝ որ զմեզ միացուց մանկութեան մէջ՝ այն ընկերական վառարանին շուրջը որ դպրոց կըսուի. միշտ ձանձրալի է առժամեայ աշխարհը անող համար որ ուղեղին մէջ ջահ մը շունի, աշխարհի քաղցրութիւնը վայելելու համար այն դարին մէջ շնչելու է որ քուրճ կը հագնի և կը սիրէ. փիլիսոփայ աշխարհը ըսել կուզեմ որ արդէն ուղեղներու մէջ կը սաղմունի... բայց հիմա սրտի ծալքերը թղթատելու ժամ է:


Քու սիրալիր թերթիդ վերջը «Վարդան» կըսես և հառաչելով կը գոցես: Բարեկամ, երբէք պէտք չէ յուսահատիլ մեր անջնիւ բարեկամին կացութեանը վերայ՝ որուն վրայ երեւցածն լոկ բնութեան մէկ ժամանակակից ներդործութիւնն է, ինչպէս երբեմն Տ. Եղբայրն ալ ունեցած է վաղանցիկ կերպով: Ասի իրենց ցեղին մէջ մէկ անվնաս օգերեւոյթն է... շատ մեծ յոյս ունիմք որ քաջաուող կը վերադառնայ:

Այլ քու վերադարձդ ե՞րբ պիտի ըլլայ, պէտք է որ իմացնես եթէ գիտես կամ որոշած ես, արդեօք ե՞րբ մեր նսեմ ճակատները պիտի միանան... քիչ մը առաջ նժդեհութիւնը ծաղրեցի. այլ անոր դառնութիւնը կ'զգամ հիմայ. ա՛հ, բարեկամ, միթէ մեր համազգած սրտերուն յարայոյզ փոթորիկները իրարու հաղորդելու համար կը բաւե՛ն այս տկար թուղթերն որոնք կրիայի մը չափ յամրընթաց են մեր մազնիսացեալ սրտերուն կայծերը յեղափոխելու համար սրտէ՛ի սիրտ... իմ վիճակս եթէ հարցնես դեռ անորոշու-

Թեան մէջ կը ծփայ, կը տեանեմ յուսոյ աստղեր՝ որ
 կը շողան. շատ լաւ, եթէ ճակատագրիս Թեւերը չը
 փութան զանոնք պարածածկելու: Առ այժմ այսչափ:
 չեմ ցաւիր իմ վիճակիս և յուսահատ ապագայիս վրայ
 որչափ առաջ. այլ ոչինչ փոյթս է, մի միայն ընտան-
 եացս բեռ չըլլալ. այս որ կը կորացնէ քամակս... դեռ
 խօսեցիքներս ուրիշ ատեն. 'ի տեսութիւն:

1869

Պ. ԴՈՒՐԵԱՆ



ԱՌ ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Մեծապատիւ և սիրեցեալդ Տէ՛ր,

Կրկին և կրկին կարգացի Ձեր Մայիսի 25 ին գրած
 սրտադրոշմ նամակն, որով վիքթոր Հիւկոյին հետ
 ունեցած սիրասնունդ մտերմութեանս վրայ այնպիսի
 ոգւով ու սրտով կը խօսիք որ դարձեալ հառաչելով
 հառաչեցուցիք զիս և աչքերս գերարտօսքով լցու-
 ցիք...

Աւա՛ղ որ Ձեր ոգին, սիրտն ու հանճարն ունեցող
 Հայ մի չգանուեցաւ հոս որ այս բացառիկ պարագայէն
 օգուտ քաղելով՝ աշխարհիս տարիողէր որ իւր այնչափ
 ողբացած տիեզերահռչակ Հիւկօ Հայ զաւակաց օթե-
 ւանն ութ տարի իբրեւ հիւր սիրամեծար հանդէք,
 հոն հրաշակերտներ արտադրեր և հոն իւր անմահ վե-

հազն հոգին իւր սարսափեցանք ընդունելու էր :

Եթէ ուրիշ ազգ մի ունէր այս անզուգական բաղդըն , արդեօք ինչե՛ր պիտի չընէր ու չհրատարակէր ևս քան զևս աշխարհածանօթ սուներոյ համար զայն : Եթէ մեր Փարիզարնակ ազգայինք կարող լինէին գեղեցկահիւս , սրտառուչ և սրտարուղիս Ուղերձի մի մէջ բացատրել այս չքնաղ դէպն , տարակոյս չկայ որ բոլոր Փարիզեան օրագիրք կը փութային հրատարակել զայն և նոցա արձագանդը կուտայր համայն աշխարհիս մամուլն : Ի՛նչ փառք լինէր այն Հայոց ազգին , փառք մի որ նորա անունն ու համբաւն՝ ընդ ոլորտս տիեզերաց կը տարածէր՝ համայնից համակրանքն ու մեծարանք իւր վերայ հրաւիրելով . . .

Արդարեւ օրագրաց շատերն հրատարակեցին թէ Քերթողահայրն Լուսինեան իշխանին և իշխանուհւոյն տունը կը բնակէր , և այսպէս նորա անմահ անուան մշտայուչ լծորդեցին Լուսինեան անունն . սակայն յանհունս ուրախ լինէի եթէ այս չքնաղագիւտ առթով սիրելի Հայոց ազգիս անունն հռչակուէր , և ազգաց և ազանց զինքը նախանձելի հանդիսացնելով՝ Վիքթոր Հիւկօին հետ զնա յաւերժայիշատակ կյացուցանէր :

Մահաբեր հիւանդութենէն քանի մի օր առաջ այս վեհապանծ բարեկամս ձեռքս բռնած քառորդէն աւելի դրանս առջեւ հետոս խօսեցաւ , և որպիսի՛ մտերմութեամբ : Սիրակցորդ հարազատիս Խորէն . Սրբազանի վրայ մեծ սէր ու համարումն ունենալով՝ որպիսութիւնն հարցուց , հանճարն ու անձնուէր հայրենասիրութիւնն գովեց վերստին , խնդրեց օր իւր սիրալիր

ողջոյնն նմա հաղորդեմ և ասլահովեմ զնա որ իւր հետ
անմոռաց կը յիշէ նաև իւր Հայոց ազգն զոր այնքան
սիրելի և մեծարելի ըրեր էր իրեն իւր սիրայորդոր ան-
ձին և դերասլանծ բարեմասնութեանցն հետ :

Գանդատեցաւ դառնապէս երկնահանճար ծերունին
որ իւր սիրայեղց սրտին փափաքածին չափ իշխանու-
հին և ես չեմք երթար ստէպ զինքը տեսնելու : Եւ
դուշտիկելով անշուշտ իւր մտաալուտ երկնասլաց թը-
ռիչն՝ ուժով մը ձեռքս՝ սեղմեց և «Այո՛, մեր բնակա-
րաններն դալարագեղ քաղցրաբոյր սլարտիզով բաժնը-
ւած են, ըսաւ, բայց մեր սրտերն անբաժան պէտք է
լինին միշտ : Յիշեցուցէք զայս հրեշտակատիպ իշխա-
նուհւոյս՝ յոտս նորա դնելով սիրալիր մեծարանքս, և
եկէ՛ք, եկէ՛ք զիս տեսէք...» : Ո՛հ, քաղցրատխո՛ւր
յիշատակ...

Ի՞նչ որ Գաղղիացիք և օտարազգիք երանի՛ր կուտային
մեզ և կուտան ցարդ որ վեհանունն Վիքթոր Հիւկօն
այնչափ տարի վարձարնակ տնակից ունեցանք և նորա
սերտ մտերմութիւնն վայելեցինք : Իշխանուհւոյն վերայ
ի՛նչ հայրագութ սէր ու դորով ունենալն կարող էք
ըմբռնել այն նամակով իսկ՝ որով Տ. Լերմինա նորա կեն-
սագրութիւնն կը վերջացնէ այս օրերս՝ կնիք անմահու-
թեան օւզելով տալ նմա անմահ Հիւկօյին հետ...

Այս՝ ազգապանծ անդառնալի առթին կորուստն կըր-
կին ողբալով ի սէր ազգիս,

Մնամ ազգասէր սիրելոյդ

Անձնուէր

(Վիքթոր Հիւկօյի նամակն առ Մեծաշուք Մարիամ
Իշխանուհին Լուսինեան) :

25 Յունուար 1880

Մեր երկոցունց տարեաց ընդմէջ, Տիկին, Էռնանիի
յիսնամեակի մը կայ տեղն : Իմ ութսուն ձմեռներս յար-
գանք կը մատուցանեն ձեր երեսուն դարուններուն, և
իմ մեռելոտի շրթունքն ի համբոյր կը մատչին Ձեր գե-
ռատի թաթերուն :

ՎԻՔՏՈՐ ՀԻՒԿՕ

ԱՌ Պ. ԱՆԴՐԱՆԻԿ ՔՕՀԱՖՃՅԱՆ

1876 Օգոստոս . . .

Ազնիւ Անդրանիկ .

Շնորհակալ եմ քեզմէ : Վսեմ թուղթդ, իբրեւ ա-
պագային հորիզոնէն ծագած մի զուարթ ճառագայթ,
իմ մուայլամած ճակատս լուսաւորեց, և խօսքդ՝ անոյշ
և սրտաբուղխ՝ տրտմալուռ հոգւոյս խորչերուն մէջ
սպրդեցան իբրեւ մի բարբառ երկնային մխիթարու-
թեան :

Մինչ իմ շուրջ զատամուռս կը կրճէ խաւար, մինչ
տգիտութիւն կը հալածէ զիս, և կը խածնէ զիս ապե-

րախտութիւն, օ՛ճ դրուժան, դու սիրտդ կուգաս ըն-
ծայել ինձ, քա՛ղցր ապաւէն:

Սիրոյ պատկերն ես որ կը ժպտիս ինձ, երբ կը խո-
փոռի ինձ ատելութիւն սեւադէմ. և մինչ անցեալն՝
կոյր և տգէտ՝ մագիւլ Ա կը նետէ յիս, դու, ապագա-
յին ներկայացուցիչ, բարեկամական ձեռն մի կը կար-
կառես առ իս:

Ենորհակալ եմ քեզմէ:

Մեծ հոգի մ'ես ամէն վսեմութիւններով կազմեալ:
Ամէն մեծ դաղափար, ամէն մեծ զգացում մուտ ու-
նին հոգւոյդ մէջ, ինչպէս մեծ տաճարի մի մէջ ամէն
ճաճանչք երկնից:

Հոգիներ կան զորս Արարիչն կը յօրինէ մասնաւոր
մի տարփմամբ և նպատակաւ, և զորս գոգցես չև ար-
ձակած յերկիր՝ կը սիրէ առ իւր պահել յերկինս անդ
առ ժամանակ մի, իբր զմայլած յիւր ձեռակերտն:
Աստի՛ այն երկնային ճաճանչն որ թուի թրթռալ այդ-
օրինակ արարածոց ճակատուց վերայ. աստի՛ այն հը-
զօր տիպն տեսլական գեղեցկութեան զոր յինքեանս
տանին այդ հոգիք. աստի՛ դարձեալ այն յափշտակու-
թիւնն անբացատրելի որով նոցա աչկունք՝ անտարբեր
երկրայնոց՝ յար յերկինս պշուցեալ կան խոհալից:

Այս հոգիներէն ես դու:

Միտքդ արծուի մի է նորափետուր որ արդէն կը
խոյանայ, սիրտդ՝ վարդ մի նորարողոջ որ արդէն
իւր բուրմամբն կ'օծէ զայերս:

Կը սիրեմ զքեզ, յաճախ զմայլած եմ քո վերայ,

(1) Ճիրան:

երբ դիտած եմ պատանեկան միտքդ վաղա՛հաս ծանր
ու խորին խօհիւք, երբ մատաղ հոգւոյդ հրաթե սը-
լացքն եմ դիտած ի գեղեցիկն, ի բարձրագոյնն, յե-
թեր, յանհունն . . . Անդունդք կը յանկուցանեն գրեզ,
անսահմանութիւնն կը յափշտակէ գրեզ: Պատանեկան
անամպ ճակատուդ ետև արդէն իսկ փիլիսոփայի մի
մտածութիւնք կը յուզին: Մուսայից փաղաքչեալ զա-
ւակ, նոքա իւրեանց քնարն տղայական ձեռացդ յանձ-
նեցին իբրու խաղալիկ:

Երջանիկ և հպարտ եմ որ բախտն ունեցած եմ նը-
պաստելու մի այդպիսի հոգւոյ փթթման, մի այդպիսի
հանճարոյ նախկին թռչանաց: Մի գեղեցիկ ու մխի-
թարիչ տեսարան է դաստիարակին համար տեսնել
թեւածիլ զիւրև, ազատ օդոյ՝ լուսոյ՝ միջոցին մէջ,
հանճարոյ նորաթեւ թիթեռանց որոց օգնած է խոր-
տակելու զիւրեանց պատեանն:

Յւ երբ կը տեսնէ թէ կոյս, անբիծ և նոր հոգինե-
րու խորոց մէջ յիշատակ մ'ունի, երբ այլք կը մոռ-
նան զինքն, կը մխիթարի մարդոց խտասարտութեան,
ապերախտութեան վերայ, և աչքն յապագայն՝ կը շա-
րունակէ քայլել, ցորչափ իւր ոտից վերայ ուժոյ մի
մնացորդ կը գտնէ:

Թուղթդ պիտի պահեմ անկորուստ իբրև կենացս
անապատին մէջ փթթած մի երկնաբոյր ծաղիկ: Օրհ-
նե՛ալ լինիս դու:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Ազնուափայլ Տիկին Դ. Ս. Փափազեան

Ի՛նչ դառն ու անբերեկի հարուած. ներեկի էր ուշակել պատահարներ որ մերթ ընդ մերթ կը խռովեն և կը վրդովեն հոգիներ, այլ չէր հնար երեւակակել անգամ տարածամ բաժանումն ազնուափայլ ամուսնայդ, որ ունէր կեանք զօրեղ և հոգի կենսալի: Ասան զի, ոչ միայն սիրոյ շղթայով կապուած էին ասոնք որ ազնուասուն ընտանեաց հետ, այլ և բարեսիրութեան և ազնուագոյն զգացմանց ամուր օղակով միապած էին ազգային կենաց հետ:

Եւ սակայն, անագորոյն մահն քակեց այս սիրայօդ կապերն և կարծես թէ ընտանեկան և ազգային շըրաններու քայքայում և ծիրանեզոյն յոյսերու անկումն ընդժեց:

Ուստի դուք, ազնիւ Տիկին, եթէ կ'ողբաք իրամբ չնաշխարհիկ ամուսին մը, գորովալիբ Հայր մը, կզգը կ'արտասուէ պատուական Հայու մը վրայ, իր անկէ անձնուէր զաւակին վրայ, որ միշտ պատուոյ, սրդարութեան և յառաջդիմութեան շաւղին մէջ՝ ազատսիրութեան, անձնազոհութեան օրինակ հանդիսաւած և շահած է իր անունն ու յիշատակն սիրելի և ակամեկի ընող անգնահատելի դասիններ:

Անշուշտ՝ տղալի են այսօր այդ դասիններն և կը օղեն արտասուաց կաթիլներ, բայց այդ կաթիլներ, որ սիրելեաց և Հայութեան համար պիտի լինին առ յա-

պայս մեր սիրելի Փափազեանի հոգւոյն աստղերն որ վհատ ու յուսահատ միտքերու սրտերը պիտի յորդորեն ընտանեկան և ազգային պարտաւորութեանց անթերի կատարման :

Եւ եթէ Ազգին հետ լալ մեծ աղետին վրայ նուիրական պարտաւորութիւն մ'է մեզի համար, ոչ նուազ նուիրական իրաւունքը պիտի լինի պատմութեան դասել մեծահոգի ամուսինդ այն նշանաւոր արանց կարգըն որ ընտանիքի, Ազգին և Եկեղեցւոյ սիրոյն մէջ գտած են իրենց գեղեցիկ գործոց շարժառիթը :

Խորին յարգանօք և վշտակիր սիրով

Մնամ անձնուէր

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Զմիւռնիա, 26 Մարտ, 1888



ԱՌ ՏԻԱՐ ՏՕԳՏՕԲ Ե. ՌՈՒՍԻՆԵԱՆ

ի Թագսիմ Բերայի .

Հոյակապ Վարպետ և գերզգօն Վարդապետ

1860 ի սերունդն արդէն ծափահարած է զՁեզ և անմահացուցած՝ իբրև հեղինակ Սահմանադրութեան : Վսեմ Յակոբ պէյ դեռ անցեալ օր շեշտելով կ'պատմէր թէ, ամբողջ երկու տարիներ յամառաբար բանա-

ճարտեցաւ վզրուկներու Խօնաստանին մէջ Տ. Ն. Ռուսիներէն, Օսմաներէն Նիւշահան-Բարեկարգ-Բէն բառին տեղ Սահմանադրութեան բառն ընդունել տալ :

Սակաւագիւտ հանճարոյ գործ է մեծ գաղափարն յղանալէն յետոյ, գտնել բառն ալ որ ճշդապատկեր հայկիացնէ իմաստն :

Գրական անտերնչութեան մէջ վաղարշակն եղէք այդու :

Այսօր ևս կը հաստատէք Արմէնաբանից կաճառն, որ ազգային գեղատառից և գեղարուեստից ոսկի թըւականը պիտի սկսի : Գրական վերածնութիւնն է որ կ'քաղաքակրթէ Ազգերը և կ'բարգաւաճէ Ժողովուրդները :

Եւ որքան լակոնալեզու է օրէնքն որով կ'սահմանադրէք կաճառն : Երկու հակիրճ յօդուած : Օրէնսդրաց իմաստասիրագունին մենաշնորհ է + լավ շահն հասկցնել : Օրինական նրբութիւնք կ'սպաննեն յաճախ ազգերն և նոցա վարչական ոգին :

1873 ի սերունդն ալ կ'յայտնէ իւր աւագագոյն երախտագիտութիւնը առ մեծանուն հեղինակն Արմենաբանից կաճառոյն : Հանրային երախտագիտութիւնն տեսակ մի Բանիէծն է ուր կ'ստորագծայի հանրօգուտ մեծ մարդը : Եւ Հայկաբանին ի'նչ աւելի գեղեցիկ հակունչ հնար էր ոսկերչել քան զԱրմենաբանն, ճշդիւ գտակաւ սահմանելու համար, առաջնովն հին և վերջնովն նոր լեզուին բարեկարգիչ դպրոցները :

Քանիօն վսեմ է նաև այն գիւտ, որով կաճառի անդամոց և նոցա գահոյից թիւն Հայոց 38 գրերու թը-

և այն չափ որոշեր էք: Անձնիւր կանոնադրէ խորհրդանիշ
տալով տառ մի, որ փորագրեալ պիտի լինի մէն մի
կանաւագահի ճակատ:

Վսեմ. Յակոբ պէյ ցցուց ինձ երէկ ձեր անուան
փորագրեալն ընտիր տօսախի վերայ: Ճարտարար-
ուեստի ծաղիկ մ'է. որքա՛ն խանդաղատուն գորովա-
նօք կ'գուրգուրայ Նորին Վսեմութիւնն Ձեր վերայ.
կ'անսայ ձեզ որպէս կ'անսար Տելեմաք Մենտորին: Եր-
կու մօրմնոյ մէջ մէկ սիրտ և երկու սրտի մէջ՝ մէկ հո-
գի էք: Զերմեռանդ Արմէնաբան մ'է և ինքն որ՝ Օշկն
ժպտանունոցն Մասսի մէջ ճարտասանօրէն փաստա-
բանեց նոր լեզուին դատն ընդդիմախօս յարուցանե-
լով Հայոց նշանաւոր հանդիսին՝ Զմիւռնախ Ա. Մամ-
լոյն մէջ Սէնէն որ Մերէնց կեղծանուան մի այլ ծպտումն
թուի: Յակոբ Պէյ մեղամաղձոտ քերթողի հոգեջիւղ ալ
ունի: Ընթերցաւ ինձ ոտանաւորն՝ որ կ'սկսի՝ «Երջան-
կութեան քնարին թելը լռին է» . տողով: Հիւկօի Ռիւյ
Պլաի ձեռագիրն հնգիցս ընթերցաւ, ըսաւ. և վաղն
պիտի յղէ ի տպագրութիւն: Արք զայն պիտի ընթեռնուն
յետ սակաւուց, արդեօք կարողանա՞ն պիտի թափան-
ցել թարգմանութեան բուն շարժաւիթը թէ երբեմն-
ուան Ռազախօսութեան սրբագրեալ այլ դեռ յեռօգիւ
քերականութեան մի կիրառութիւնը ներկայացնող ար-
ժնեքն ի մատենագրութեան մի նմոյշն է այն, որ հին
և նոր լեզուն կ'ճգնի հաշտեցնել և միութեան գիծ մի
հանդիսանալ ընդ մէջ երկոցունց:

Յակոբ պէյի ժողովրդասիրական ոգւոյն վերայ ան-

ուևնապատկած է հիացումն : Ո՛րքան զեղուն տենչանք
տածէ ժողովրդականացնելու , հանրացնելու համար
եղեցիկ Դպրութեանց և գեղեցիկ Արուեստից ծանօ-
թութիւններն : Որքան վեհագի մտածմամբ յղացուած է
բատարակումն այն մեծ Լրագրին , որ Մասիսի ծաւա-
ռէն աւելի ընդարձակ , 20 փոքնով պիտի լինի Արմէ-
տարանից Կաճառոյն գործին : Աղքատիկ Հայ Թաղերու
և գիւղորէից և այլ ազգային հանրագուտ հաստատու-
թեանց ճրիարար պիտի բաշխուի . օրական պարզ լը-
նոց հետ տեսակ մի գիտական իմաստասիրական և
դպրական հանրագիտակ պիտի լինի այն : Կաճա-
տորդք պիտի լինին խմբագիրները , ինքն Յակոբ պէյ
Մեկենասն է : Երբ Ազգին ազնուական և մեծատուն
բան իւր գանձուն տաղանդին և ժամանակին մէկ կա-
ռուէր մասն կ'ընծայէ ազգին իմացական զարգացման ,
բայնժամ ճշմարտապէս կ'ապացուցանէ թէ իրօք իր
տիտղոսին և իր ստորոգելեաց տէրն է : Երբ ոսկին և
զաղափարն իրերաց հետ միանան աննախանձ , յառաջ-
գիմութիւնն և արդիւնաւորութիւնն իրական են և
բրաշխաւորեալ : Սակայն լրագրին անունն Արտ-եղ զը-
տելու գաղափարը խեթկիչ կ'թուի , զի ասիական ա-
նաղային անշարժութիւն կ'ըուրէ : Փոխան Տ . Յ . Եիշման-
անի Գերաշնորհն Նար Աէյ կ'փառասիրէ , իրաւամբն ,
ինեւ Տնօրէն լրագրին : Կարծեմ ձեզ հետ Յակոբ պէյ
և Նար Աէյեան է , այս մասին Նորին Սրբազնութիւն
սրդէն իբրեւ Տնօրէն , արտօնած է ինձ բանակցիլ տը-
գազրաց հետ :

Ենորհակալ եմ , որ Կաճառորդ և մշտական խմբա-
գիրներէն մին կարգել հաճեր էք և զիս , այն մտած-

մամբ որ իբրեւ նոր սերնդեան մի զաւակն ժառանգորդ և շարունակող լինիմք ձեր սկզբանց և գաղափարաց ինձ նման այլոց հետ :

Այն միակ նպատակովն զանձն իմ արժանի կը համարիմ այդպիսի գիտական և դրական Աւագածողովոյ մի յօդանալ, զի այնինչ աւարտած Ն. Շահ. Վարժարանի աշակերտութիւնս պիտի աշակերտիմ աւելի մեծագոյն Համալսարանական դպրոցի մի : Կ'մաղթեմ որ Կոնստանտնուպոլսոյ ընդհուպ գործնապէս հռչակուին :

Ահա, Հոյակապ Վարպետ և գերզգօն Վարդապետ, տածումներս զոր խնդրած էիք :

Յարգական զգացմանցս հետ մնամ

ցմիշտ բոլորանուէր Ձեզ

ԱՐՄԷՆ. ԼՈՒՍԻՆԵԱՆ

1873 Յուլիս 17

Սամաթիա

~~ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱՐԱՆ~~

ԱՌ Տ. Ֆ. ՄԿՐՏԻՉ ՍԻՄՈՆԵԱՆ

Հրատարակիչ Ֆիզիզայի Տրամաբանութեան

Անտիական հասակի մէջ զՁեզ ճանչցայ : Դաստիարակ էիք յայնժամ, տեսած եմ զՁեզ շրջապատեալ մանուկներէ, շրջապատեալ գրքերէ :

Կը շարունակէք դեռ ձեր նուիրական պաշտօնն, որոյ կատարման մէջ այնքան խղճամիտ և այնքան ե-

անդուն էք այսօր ալ՝ որքան էիք երբեմն։ Տարի-
ներն, և նոցա հետ այն դառն անձուկներն, որոնք
անխուսափելի են յոյժ բարեպետ սրտի մը համար, տա-
րիներն խորշոմ բերին Ձեր ճակտին, այլ ոչինչ կրցած
է մարել այն սրբազան հուրն որ կը վառի ձեր հոգւոյն
մէջ։

Ամեն անգամ որ տեսնեմ զձեզ, սփոփանուէր խօսք
մ'ունիք ինձ համար. — և այնքա՛ն կարօտ է սփոփա-
կաց մեր սերունդն՝ որ անանուն և անողոք հիւանդու-
թեամբ մը կը տառապի . . . :

Այս անգամ ինձ գիրք մը նուիրեցիք, երկասիրու-
թիւն ձեր եղբօր, ում «Յիզիգա» պատուանունն է
է տուած Հայ ժողովուրդն։ Արդարեւ, այնպիսի ժա-
մանակի մը մէջ՝ ուր խաւարն ազգային հորիզոնին վը-
րայ կը տիրապետէր՝ ձեր եղբայրն եղած է գիտութեան
անձնուիրութիւնն։

Եւ ա՛յս է պատճառն այն հալածանաց, զոր նա կը-
րեց իւր հայրենակցաց, յաճախ, աւա՛ղ, յանուն գի-
տութեան։ Իւր հալածիչներէն մէկ քանին կ'ապրին
տակաւին, սակայն ձեր եղբայրն աւելի կենդանի է
քան իւր թշնամիներն։ Երի՛ցս անմահ է նա, զի դաս-
տիարակ եղած է, հեղինակ և նահատակ։

Օրհնութի՛ւն իւր յիշատակին, և շնորհակալութիւն
Ձեզ։

Ե. ՅԵՄԻՐՃԻՊԱՆԵԱՆ

19 Դեկտ. 1876

Իւսկիւտար

Մեծ . Խմբագրութիւն «Արթարան» հանդիսի .

Ազնիւ սիրելիք

Ձեր երրորդ տետրակն ալ ընդունեցայ , ուրախ եմ : Ի սկզբան չփութացի բան մը գրել . առթին կ'սպասէի , և ահա ունիմ զայդ :

Թերթերն ու պարբերական հանդէսք այլ և այլ նըշանաբանիւ հրապարակ իջնեն : Ձեր նշանաբանը համետ ու ազգային է , և , իբրեւ առաւելութիւն , ձեր խումբը նորատի երիտասարդութիւնը կը յօրինէ : Ես չեմ դատապարտեր այն մատաղ լուսաւոր միտքեր՝ որք յանգործութենէ իբր իզնդանէ խոյս կուտան , այլ ընդհակառակն՝ կը վանեմ այդ արհամարհոտ կարծիքը , կը նայիմ ամեն նշանաբանի , և երբ տեսնեմ որ հոն Ազգկայ , Ժողովուրդ կայ , լուսոյ և գիտութեան անուն կայ , կը ծռիմ երկիւղածութեամբ և կօրհնարանեմ զայն իբրեւ սրբանուէր ինչ : Ուստի օրհնեալ է , ըստ իմոց հաւատոցս , ձեր խումբն ու նշանաբանը :

Մեք շատ գործեր ունինք և ա՛յնչափ անկոխ վարեր՝ ընդ որ տակաւին գրչի ծայր անցած չէ բնաւ : Այլք իրենցն և դուք ձերն ունիք . ո՛չ միայն հատորներ , այլ և թերթ մը թուղթ , տասը տող՝ որ իր վերայ հոգւոյ և սրտի դրօշմ ունի և գրական հաւատք մը կը տանի ապագային , ազգային ծառայութիւն է , գրական նպաստ է :

Գուք այս առաւելութիւններն ունիք ձեր անդրա-
նիկ հանդիսին մէջ. լաւագոյն լեզուաւ դրելու ջանիւք՝
լսին բողոք մը կ'արձանագրէք, մեր արդի գրականու-
թեան քրքրորոտութիւնն դէմ. մամլոյ տակ ճակտին քըր-
տինքով թրջած թուղթեր դնելով՝ ցոյց կուտաք յան-
ձին թէ՛ ամեն հասակի գործ կայ, ամեն տարիք իւ-
րովսանն պարտաւորութիւն ունի իւր Ազգին:

Արթարանին ի սրտէ յաջողութիւն կը մաղթէ՝

Մ. ԿԻՒՐՃԵԱՆ

Ապրիլ 1888


Սիրեցեալ դուստր իմ.

Ահա սոսկալի օր մը, ես ալ կ'զգամ թէ չեմ
կրնար հանդուրժել այլ ևս: Արցաւիմ մանաւանդ թէ
զքեզ այդպէս թողուցի. կը մտածեմ և կը թուեմ քու
ամեն քայլափոխները, կը թուեմ այնպէս իմիններս և
կարելի՞ է որ այդպիսի դնացիւք իրարու հանդիպինք:
Գու քովդ միայն սիրաս անդորր է, հոն՝ իւր բնիկ
վայրն է, և այն միայն սիրելի է իրեն: Ինչ որ եղաւ
այս առաւօտ ինձ սաստիկ ցաւ կազդէ, և սիրաս կը
կեղեքէ, որոյ պաճառը դու կրնաս իմաստասիրել: Ես
իմ վերայ կրեցի զայն և երկար ատեն պիտի կրեմ:
Սիրաս և միտքս դու գրաւած ես ամբողջ, անթաց ա-
չօք չեմ կարող քու վրադ մտածել, և միշտ քու վրադ

կը մտածեմ, այնպէս որ կրածներս անտանելի են. այլ որովհետեւ ծայրն հասած եմ, կը յուսամ թէ երկար չեն տեւեր նոյն սաստկութեան մէջ. Ամէն տեղ միշտ զքեզ կը խնդրեմ, և ամէն տեղ ամէն ինչ կը պակսի ինձ, զի դու ինձ կը պակսես: Աչքերս՝ յաճախ քեզ հանդիպելու վարժ՝ այս տասն և չորս օր է որ ըզքեզ չեն գտներ: Անցեալն քաղցր և սիրելի՛ ներկայն ցաւազին կընէ, մինչեւ որ տակաւ առ տակաւ վարժիմ. բայց ոչ՝ մինչեւ այն ատեն՝ զի ոչ ևս պիտի կարօտիմ տեսնել զքեզ վերստին և գրկել զքեզ: Անցելոյն նման չունիմ յոյս մի և ապագայէն. գիտեմ որչափ բան կրեցի բացակայութեանդ ատեն, և անով աւելի թշուառ եմ, զի յանխորհուրդս ինձ սովորութիւն մի ըրի անպատճառ զքեզ տեսնել: Կարծեմ թէ բաժանման պահուն պէտք եղածին պէս չ'փարեցայ քեզ: Եւ ի՞նչ հարկ ինձ խնայել, ըստ բաւականին քեզ չըսի թէ որչափ գոհ եղայ գորովանացդ, ոչ ըստ բաւականին յանձնարարեցի զքեզ Կրինեան տիկնոջ, և ոչ բաւական շնորհակալ եղայ նմա բոլոր խնամոց և սիրոյն համար՝ զոր խոստացաւ ինձ:

Անձկութենէ կը մաշիմ, և ոչ տեղէ մը մխիթարութիւն կ'սպասեմ, բայց միայն քու նամակներէդ, որոնց հառաչանօք կ'սպասեմ. և պիտի սպասեմ տակաւին: Վերջապէս, դուստր իմ, քեզ համար միայն կապրիմ:

ՅԻԿԻՆ ՍԵՎԵՆԻԷ



Յարտանել, 20 Օգոստ. 1888

Սիրեցեալ քոյր իմ (*)

Աստ գալէս ի վեր մտադիր եղած եմ գրել քեզ
 ըստ խոստմանս, այլ մտքի և մարմնոյ, չգիտեմ ի՛նչ
 տարօրինակ ծուլութիւն մը արգիլեց զիս մինչեւ ցարդ
 քեզ հետ, դէժ ի հեռուստ, տեսնուելու հաճոյից։
 Դու գիտես, քայրիկ քոյր իմ, թէ՛ ո՛րքան կը սիրեմ
 քեզ, արեան կապերէն աւելի անձուկ կապերով կապ-
 ուած եմ քեզ հետ, այն է մտքի և սրտի հզօրագոյն
 կապերով, թշուառութեան ամրապինդ հանգոյցն ալ
 ո՛չ ապաքէն միացուցած է զմեզ առ յաւէտ։ Դու, սի-
 րեցեալդ իմ, դու շատ կանուխ, աւա՛ղ, աշակերտե-
 ցար տառապանաց դպրոցին, ու քու բնածին յատկու-
 թիւնքդ ստացան այդու այնպիսի ազնուութիւն մը՝ որ
 կը հրապուրէ բարեկամացդ սրտերը և համակրելի ըզ
 քեզ կ'ընծայէ յաչս նոցա։ Կը սիրեմ քեզ անկեղծաբար
 և կը հաւատամ թէ՛ դու ևս ոչ նուազ կը սիրես զիս,
 քանզի միեւնոյն զգացումներն են որ զմեզ կողեւորեն։
 սէրն է մեր սրտին սնունդը, այն օրն ուր ոչ զօք
 ունենանք սիրելու, այն օրն ապրելէ պիտի դադրինք,

(*) Օր. Սեղբոսեան, Խոսեղիւզի Ներսիսեան Վարժարանի
 Կատարակուհին ուղղած է զայս գիրը ընտանեկան պարզ և յան-
 կուցիչ լեզուաւ։

քանզի մեր կենաց նպատակը պակաս պիտ' ըլլայ մեզ
 և այս չէ՞ միթէ բնութեան կնոջ տուած դերն աշխար-
 հիս վրայ. սիրե՛լ, սիրե՛լ միշտ. սիրել իւր ծնողքն,
 իւր հարազատներն երբ ամուրի է. սիրել ամուսինը,
 զաւակներն երբ ամուսնացած է, սիրել գէթ աշակերտ-
 ները՝ երբ ինձ նման վարժուհի է և երբ այս ամենն ալ
 պակսին իրեն, այն ատեն սիրե՛լ միայն սեւ հողն և
 մտնե՛լ անոր տակ... Այսպէս կը հասկնամ ես կնոջ
 կեանքն յաշխարհի աստ. թուի ինձ թէ առանձինն
 կենօք չապրիր նա, այլ իւր շուրջն եղող սիրելի էա-
 կաց շնչովը կ'ոգեւորի, անոնց հանդիստն իր հանգիս-
 տըն է, անոնց խինդն իր խինդը և անոնց վիշտն, ա՛հ,
 իր տառապանքն է:

Դու կ'զգաս այս ամենը, քոյր իմ, և թերևս լա-
 ւազոյն ևս ոճով մը հաղորդես ինձ զգացումներդ այս
 մասին նամակիդ մէջ՝ որուն պիտի սպասեմ անհամբեր.
 Բայց կը խնդրեմ որ նախ քան զամեն Մ. Էֆէնտիին
 առողջութեան վրայ ինձ տեղեկութիւն տաս զի կը
 բաղձամ վերստին տեսնել զինքը քաջառողջ, որպէս էր
 երբեմն:

Ընդանեացս և իմ անկեղծ յարգանաց հաւաստիքը
 կը նուիրեմ առ ազնիւ Տիկին մայրդ, ևն. ևն:

Անձնուէր քոյրդ

Ս. Յ. ՍԵՂԱՌՍԵԱՆ

Handwritten signature

ԳԼՈՒԽ Գ.

Handwritten text in Armenian script, possibly a title or reference.

ԲԱՐՈՅԱԿԱՆՔ ԵՒ ԱՌԱԿՔ

Ա. ԽԱԶ ՕԳՆԵԱ՝ ԻՆՁ

(Նուէր ծնողասէր մանկանց)

Օրորանիս մօտ նստած՝

Մայրըս անոյշ երգելով

Ինձ շատ անգամ քուն էր արած՝

Խաչանըչան կընքելով:

Աջն ու խաչը քեզ պահապան՝

Անթիւ անգամ կրկնէլ էր:

Խաչն իւր սիրոյն միշտ ապաստան՝

Ամեն ժամուս 1 կանչէլ էր:

Երբոր թոթով լեզուս բացաւ,

Խաչի դասըն աւանդեց:

Խաչ օգնեա՛ ինձ, կըրկնի՛ր Ձ, ասաց

Գրթոտ սիրով պատուիրեց:

(1). Ետէ էն — (2). կքերէն (բացաւ)

լովմամբ) — նոյնպէս բացաւ տեղան էն՝ ստիպեցից, աշգաներից, ագէտներից ևն:

Քանի՛ տարի էս Վ սիրուն դասն
Ես շարունակ կըրկնեցի .

Մօրս հետը ժամ գընացի՝
Խաչելութիւն սիրեցի :

Ուխտատեղի թէ մատուռներ
Ուր որ ես ուխտ գնացի ,
Համբուրեցի ես խաչքարեր ,
Խաչ օգնեա՛ր ձ , կրկնեցի :

Երբոր փոքր ինչ ես մեծացայ
Մայրըս տուաւ քերական ,
Խաչ օգնեա՛ր ինձ կըրկնի՛ր , ասաց .
Խաչն է ուսման օգնական :

Խաչն օգնական ինձ կանչելով՝
Այբ ու բէնէն ըսկըսայ .
Ամեն դասում միշտ կրկնելով՝
Շուտով կարդալ սովորեցայ :
Քերականն աւարտեցի .

Յետոյ մըտայ վարժարան ,
Եթէ տարի ես կարդացի ,
Ուսմունք առի զանազան .
Քանի՛ քանի՛ շարադրածներ
Որ ես ինձէն գրեցի ,

Իեռ չսկսած՝ ճակատներըն
Խաչ օգնեա՛ր ինձ դրոշմեցի :
Աստուածաշունչ՝ Աւետարան .

Որչափ սիրով կարդացի,
Այնքան խաչին սիրոյ նըշան՝
Սըրտիս մէջը ըզգացի:

Ձգացի որ խաչի ճառըն
Մեծ ուսմունք է մարդկութեան,
Մեր փրկութեան դըրօշն է նա,
Ճըշմարտութեան ս լրբ նըշան:

Ձգացի որ նախատանքով
Գողգոթայում տընկուեցաւ,
Իայց և յետոյ անհուն փառքով՝
Գըմբէթներում փայլեցաւ:

Ձգացի որ խաչեալն Աստուած
Սիրոյ համար խաչ շալկեց
Մարդկանց սիրով խաչը գըրկած՝
Խաչ վեր առնուլ քարոզեց:

Ձգացի որ խաչ կայ պատրաստ
Ամեն մարդու առաջին,
Ով կը ցանկայ լինիլ ըզգաստ,
Գընալ ըզհետ 1 մեր փըրկչին:

Ձգացի որ ես էլ ունիմ
Իմ շատուկ խաչն աշխարհքում,
Որ անտըրտունջ պիտի տանեմ
Սիրով ամեն դիպուածքում:

Խաչ կայ մարդուն իր կըրքերից 2,

(1) . Ետեւ էն : — (2) . Կըրքերէն (բացառական՝ ուստահացոյց հա-
լովմամբ) , — նոյնպէս բացառական էն՝ սոսիներից , ազէաներից , յու-
գաներից , ազէաներից ևն :

Խաչ ամեն տեղ, ամեն ժամ,
Խաչ կայ անքուն և սոսիներից,
Դաւ, հալածանք յարածամբ
Խաչ կայ կենաց աղէտներից՝
Խաչ դը ժուարին, ծանրատար :
Խաչ կայ անմիտ տըղէտներից՝
Իմաստասէր հանճարին,
Խաչ կայ աշխարհ պաշտողներից՝
Աշխարհի հետ մըրցողիմ :
Խաչ կայ անշարժ Թոյլ Վատերից՝
Յառաջադէմ ձըգտողին,
Խաչ կայ մուլար կարծիքներից՝
Ճըլմարտասէր դիւցազին :
Խաչ կայ նենդ ժոտ Չ խարդախներից՝
Պարզ և ուղիղ սըրտերին,
Խաչ կայ ըստրուկ ոգիներից
Պարտք իրաւունք խընդրողին :
Զգացի որ, էսքան խաչերն
Էն խաչի մօտ ոչինչ են,
Որ մարդասէր գըթոա Տէրըն
Բարձաւ իւր ուսն հեզօրէն :
Նա է սիրոյ անհուն նշան,
Խաչեալըն Սէր գըլիտովին :
Սփոփանաց մեծ ազգստան,
Աիրով իր խաչ բարձողին :

Չգացի որ Փրկչի խաչն էր ,
Որ օգնական ինձ կոչեց
Երբոր մայրըս , հեզ , որդեսէր ,
Խաջ օգնեա ինձ , դաս տուեց ,
Քանի՛ քանի՛ նեղութիւններ
Որ իմ հանդէպ դուրս եկան ,
Միտքըս բերի մօրըս պատուեր
Կոչեցի խաչըն օգնական :
Քանի՛ քանի՛ հեշտութիւններ
Որ ես ինձէն գըրկեցի ,
Թափեցի յորդ արտասուքներ
Խաջ օգնեա ինձ , գոչեցի :
Վիշտ ու վրտանգ փարատեցան ,
Չգացի մեծ ըսփոփանք .
Բուք փոթորիկ կուտակեցան ,
Անցի մէջէն անվրտանգ :
Օրհնուի՛ քո գերեզմանը ,
Որդեխնամ մայր գըթոտ ,
Որ դու խաչի փըրկարար դասն
Ուսուցիր ինձ համառօտ :
Թէ որ մանուկ թարմ հասակէս
Չագդէիր ինձ խաչին սէր ,
Ի՞նչպէս պիտի լինէի ես
Մըրըրկաց մէջ անվեհեր :
Թէ որ խաչի անյաղթ ոյժը
Ինձ յարածամ չըսփոփէր ,
Ի՞նչպէս պիտի տանէի ես

Մուտ, անիրաւ զըրկանքներ։
 Մա՛յր իմ, դասըդ չեմ մոռանալ
 Քանի որ ես կենդան եմ,
 Նեղութեանց մէջ չեմ թուլանալ
 Խաչն ինձ պարծանք կ'անուանեմ։
 Ուրախութեամբ ես կը տանեմ
 Ամեն զրկանք, ամեն խաչ
 Քանի՛ սիրով ես կը տեսնեմ
 Փրկիչն՝ ի խաչ բարձրացած։

ՄԵԼԻՍԵԳԵԿ ԵՊԻՍՄՈՒՐԱՏԵԱՆՅ (Գ. Մ.)

2. ԱՐՏՈՅՑ ԶԱԳԵՐՆ ԵՒ ԳԻԻՂԱՊԵՏԸ

Դու քու ձեռքէդ ի՛նչ որ կուգայ
 Աշխատելով՝ ի գլուխ տար։
 Դուռ դրացուէ օգնութիւն շահ
 Ուզած ատենըդ չես գըտնար։
 Տաճիկ առակն կը գրուցէ։
 «Այլոց ձեռքով օձ բըռնէ»։
 Արտուտիկներն միշտ կը շինեն
 Իրենց բոյներ, ամառ ատեն
 Կանանչ ցորենի
 Դաշտերուն միջի։
 Հոն ձու 1 կածեն
 Հոն կը թըլտան 2։

(1) - Հուլիս — (2) - Չափեր կը ծնին։

Այլ ցորեններն դեռ նոր դեղնած ,
Թըռչին ձագերն թեւաւորած :

Մի թըխսամայր Արտուտիկ
Մինչեւ շինեց իւր բունիկ ,
Տաքուկ դարունն առաջ դընաց .
Երբ լոյս տեսան նորա ձագեր ,
Ցորենն արդէն հասունցած էր :

Արդ՝ որպէս զի չըլլայ յանկարծ ,
Ցորեն հնձող մըչակներուն
Մատաղ 1 լինին մանգաղներուն .
Մայրիկ Արտոյտն ամէն առտու ,
Երբոր կ'երթար հունտ ժողվելու ,
Պատուէր կուտար ձագուկներուն
Որ միշտ կենան պատրաստ՝ արթուն .
Թէ՛ Գեղապետն , թէ՛ իւր որդին
Հունձքի մասին ինչ որ խօսին
Պատմեն տեղովը 'ի դարձին :

Այսպէս , օր մի , ժամը տասին ,
— Մարիկ արտոյտը , բունը չէր .—
'ի դաշտ իջաւ ցորենին տէր .
Որդւոյն ասաց .— « Այս ցորեններ
Բոլորովին են հասունցեր .
« Պէտք է շուտով հընձելու :
« Ուստի այսօր դընա՛ դու
« Բարեկամաց իմացու ,
« Որ դան ամէնք վա՛ղ առտու

«Իրենց մանգաղով

«Գերանդիներով 1 :

«Օր մի առաջ ժողովենք երթայ ,

«Ըսպասելու ատեն չ'կայ» :

Իրիկուան դէմ դարձաւ մարիկ .

Ձագերն վեր վար ճիւղիկ ճիւղիկ ,

Մէկը կասէ , — «վաղ պի' դան

կանո'ւխ , կանո'ւխ առաւօտեան» :

Միւսն այն դիէն . — «Կորա'նք , Մարիկ ,

Պիտի աւրեն մեր տուն բունիկ» :

Երրորդ մի թէ — Մե'ղք , մե'ղք , ինչո՞ւ

կուզեն ըզմեզ մեռցընելու :

Տակն ու վրայ սիրտ մայրենի ,

— «Լռեցէ'ք , կ'ասէր , մինդ թող խօսի» .

Չորրորդն ճըւաց . «Գեղին աղան

«Որդւոյն ասաց որ երթայ

«Բարեկամաց իմաց տայ ,

— «Թէ ցորեններն հասունցան

«Հունձքի թո'ղ դան» :

— «Թէ ա'յդ միայն» , —

Հարցուց որդւոց մայր Արտուտիկ ,

«Դուք լըսեցիք ,

«Ճիչ 1 վայնասուն հարկաւոր չէ .

«Դեռ հեռու է հունձքը մեզմէ :

«Օրը գայ բարին .

«Ձեռքով օտարին

(1) . Մեծ մանգաղ . — (2) . Ձայն , աղաղակ :

«Զըլլար հունձք շուտով
«Նղիք ասահով» :

Մայր և ձագերը միամիտ
Անցուցին այն դիշերը հանգիստ) :
Առտու կանուխ դարձեալ արտոյա
'ի դաշտ գընաց քաղելու հունտ :
Կալուածատէրն եկաւ նորէն .

— «Բարեկամներս չեկան , ասաց ,
«Զիա՛ն Վ կըլլայ , մեղք է ցորեն .
«Պէտք է ձայն տալ ազգականաց» :

Արտոյտին ձագերն այս որ լսեցին ,
— Վա՛յ մարիկ , կորանք , վա՛յ մեզ , ճըւացի՞ն
«Հանդա՛րտ կրկնեց , մայր Արտուտիկ
— Տեղերդ խելո՛ք , խելօք կեցիք» .

Ասածը եղաւ .

Երկրորդ օր ընաւ

Ոչ բարեկամ , ոչ ազգական
Ցորենին քով չը մօտեցան :
Երրորդ անգամ մեր Գիւղապետ
Դաշտ իջնելով իւր որդւոյն հետ ,
Այսպէս որոշ՝ ասաց որդւոյն
— «Թէ մեր հունձքեր , վերջապէս
«Զը մանգաղենք դուն և ես .
«Նկած է վայը մեր դըլխուն .
«Արդիւնքէ ձեռք պէտք է լըւանք ,
«Փուճը կ'երթայ մեր վարուցանք .


«Լոյսը մըթան՝ վաղը առտու
«Գանք ըսկըսինք աշխատելու» :
Այս որ լըսեց մայր Արտուտիկ,
«Եկաւ, ասաց, ատեն որդիք,
«Պէտք է կըրուինք մենք տներնէս
«Որ ազատենք մահէ կեանքերս» :

Մայրն արտորալով

Չագերը լալով

Հըրաժեշտի բարեւ տալով
իրենց բունին խանձարուրքին,
Ուր որ աչքերն բացած էին,
Թըռչըտելով, գըլորելով,
Հեռո՛ւ, հեռո՛ւ գընացին .
Հոն նո՛ր բունիկ շինեցին :

Հ . Բ . ԲՈՒՇՆԵՐԵԱՆ



Յ . ԿԱՊԻԿ ԵՒ ԱԿՆՈՑ

Կապկին մէկն որ ծերացաւ՝ աչքին զօրքը 1 պակսեր էր
Բայց մարդկանցմէ լըսեր էր
Թէ այն չարն ալ ունի ճար,
Ճարն էր՝ ակնոց դնել աչքին անպատճառ .
Կերթայ իրեն հինգ վեց հատ ակնոց կ'առնէ .

(1) . Զօրութիւն, ղյժ :

Աստիս անդին կը դարձնէ

Մէկ մը կառնու գըլխուն վըրայ կը դնէ,
 Անկից կիջնայ պոչին վըրայ կանցընէ,
 Կը հոտուըտայ ու կը լըգէ ապակին,
 Բայց ակնոցէն շահ չը տեսներ իւր աչքին:
 «Գետինն անցնի — կըսէ յանկարծ զայրագին —
 «Խենդ է ով որ հաւտայ մարդկանց ըսածին»,
 «Ահա ինչ որ գովեստ ըսին ակնոցի՝
 «Սո՛ւտ է եղեր, ես ալ խե՛նդ որ հաւտացի»:

Երգք որ շատ անգամ նաեւ մարդկանց մէջ այս կը
 պատահի
 Մէկ բան մը ո՛րչափ օգտակար լինի և կամ գովելի,
 Երգէտն ու տխմար անոր յարգն արժէքը չը գիտնալով
 Տիշտ վար կը զարնեն զայն յանիրաւի իրենց ծուռ
 խելքով,
 Եւ մի՛ արասցէ, թէ որ տգէտներն ոյժ՝ ալ ունենան՝
 Եարւոյն փոխարէն չարիք չարչարանք՝ մեծ վընաս
 կուտան:

Քն.իլով 1

Հ. Գ. ԱՅՎԱԶԵԱՆ



(1) • Քն.իլով, Ռուս առ.տիպիոս հանճարեղ:

4. ԱՐՏՈՅՑ ԵՒ ԽԱՅՏԻՑ 1

Առաջուանց կանուխ բոյներնին թողած
 Արտոյտն ու խայտիտ մէկ ընկեր եղած ,
 Արեւուն պայծառ հառադայթից մէջ
 Կընէին զուարթ հազար ելեւէջ 2 :
 Ձայներնին թողած կ'երգէին հանդարտ
 Ինչուան որ հասան մէկ դաշտ մը պարարտ :
 Ափսո՛ս խեղճերուն , հազիւ թէ իջան՝
 Որսորդին լարած որոգայթն ընկան .
 Որ բըռնեց դըրաւ մէյմէկ զատ վանդակ ,
 Դիմացէ դիմաց կախեց պատին տակ :
 Արտոյտը կատղած ի՞նչ ընելն չիյտէր ,
 Ըրածն ալ բոլոր պարապը կ'ելնէր :
 Թէպէտ խեղճ խայտիտն ալ շատ նեղացաւ ,
 Բայց ուրիշ ճարակ չըլլալն իմացաւ ,
 Ըսկըսաւ ուտել , խմել ու երգել
 Եւ վանդակին մէջ վեր վար ցատքըռտել :
 Արտուտին սիրտն այս բանըս չէր քաշեր ,
 « Ես ըզքեզ , ըսաւ , խենդ չէի կարծեր
 Ասանկ նեղութեան մէջ ի՞նչպէս կ'երգես ,
 Ի՞նչպէս չես ճաթիր աս անիծած տեղս » .
 Ըսաւ ու զարկաւ գլուխը վանդակին ,
 Մահը հեռու չէր , փըռուեցաւ գետին :

(1) . (Խայտիտ) . — (2) . Ելեւէջ իջեւէջ .

«Ախո՛ս քու խելքիդ, խայտիար կանչեց,
 Թէ որ առաւօտանց երգածներուս պէս,
 Հիմա ալ մէկտեղ ձայնըդ ձրգէիր
 Թէ համբերութեամբ հիմա կ'ապրէիր
 Եւ թէ՛ աւելի լաւ ժամանակուան
 Յոյսըդ կըրնայիր պահել ինձ նըման»:

Թարգմ.

Գ. ԱՐԲԵՊԻՍ. ԿԻՒՐՄԻՒՋԵԱՆ



Ծ. ԱՍՅՈՒԱՆ

Մայրիկ, նայէ՛, ի՛նչպէս սիրուն
 Են այս ծաղիկներ.
 Կարմիր, ճերմակ և ոսկեգոյն,
 Դաշտն է լեփ լեցուն:
 Ի՞նչ ալ անոյշ հոտ ունին, մա՛յր,
 Սիրե՛մ ես զանոնք,
 Մին է զմրուխտ 1, միւսը գոհար,
 Գոյն ունին վառվառ 2:
 Մա՛յր, ս՞՛վ արդեօք զանոնք ըրաւ.
 Ո՞վ ցածեց այսպէս:
 --Աստուա՛ծ, տըղաս, նա որ տըլաւ
 Մեզ բարիք անբաւ:

(1). (Զիւմրիւտ) Թանկագին քար — (2). Փայլփլուն.

Մայրիկ, նայէ՛, ի՛նչպէս աղուոր
Են այս թռչուններ,
Ունին փափուկ թև գունաւոր,
Հանդերձ փառաւոր:
Ճիւղէ ՚ի ճիւղ կը թռչըտին,
Անտառն է բուներ
Իրենց ճիւղ ճիւղ, ու երբ կամին՝
Կը թևեն յերկին:
Մա՛յր, ո՞վ արդեօք զանոնք ըրաւ
Այսպէս գեղեցիկ
Աստուած՝, տըղաս, նա՛ որ տըլաւ
Մեզ բարիք անբաւ:

Մայրի՛կ, նայէ՛, ի՛նչպէս պայծառ
Են այս աստղիկներ.
Կը փայլիլին յերկնից կամար,
Ու են անհամար:
Մին քան զմիւսն է լուսագեղ,
Եւ մթութեան մէջ
Իբրեւ մէյմէկ վառին կանթեղ,
Քանի՛ են շքեղ:
Մա՛յր, ո՞վ արդեօք զանոնք ըրաւ.
Ո՞վ վառեց այսպէս:
Աստուած՝, տըղաս, նա՛ որ տըլաւ
Մեզ բարիք անբաւ:

Ե. ԲԱԺԻՆԵՐ

Քանի մը վարպետ
 Վաճառականներ
 Սիրով միմեանց հետ
 Գործ էին բըռներ ,
 Լաւ աշխատեցան
 Քրտինք թափեցին ,
 Լաւ ալ շահեցան
 Մեծ փող դիզեցին :

Ատենն եկաւ , սէտք էր հաշիւ տեսնելն ,
 Եղած վաստակը մէջերնին բաժնէին ,
 Բայց ո՞ր գտնեմ ես ընկերներ այնպիսի
 Որ բաժնուին առանց կըռւոյ վիճմունքի .
 Այն պարոններն ալ վէճ մը հանեցին
 Որ ծայր ճոթ չունէր , կանչն Վ էր ահագին :

Եւ ահա դըրսէն
 Ձայներ կը լըսեն .
 «Մարդիկ , դուրս ելէք ,
 Կըրա՛կ կայ , կըրա՛կ . . .
 Շո՛ւտ ըրէք , փախէ՛ք ,
 Մընաք նէ կորա՛ք » :

Պարոններուն մէկը կանչեց ,
 «Ելէ՛ք տեսնեմք ի՛նչ կայ , ի՛նչ»
 Միւսն անդիէն աղաղակեց ,
 «Առաջ սա իմ հազար ոսկիս տըռէք ինձ» :
 Մէկն ալ կըսէր , «Մըկէ հունա չեմ երթար ,

(1) . Պոռալ :

Երկու հազար է առնելիքս . իմացա՛ր) :
 Անդին ուրիշ մը կանչւըռտէր «Ձէ՛, չըլար) :
 «Հաշիւն անանկ չէ՛)» «Ի՞նչ կըսես՝ պէ՛տողբար) :
 Խեղճ մարդիկը մոռցեր էին
 Որ բըռընկեր է տըներնին ,
 Այնպէս իրենց կըռուին էին ըզբաղած
 Որ մուխն եկաւ խըղդեց ամէնքն՝ ալ յանկարծ ,
 Իսկոյն կրակն ալ հասաւ պաշարեց ,
 Ապրանք ու Տէրերն էրէց տոչորեց :

Աս առական ալ դու չ'կարդաս առանց խըրատ առնելու
 Շատ մեծամեծ գործերու մէջ վընասն ինչէ՛ն գայանայ
 Երբ փոխանակ հասարակաց փորձանքին դէմ կենալու
 Ամէն մարդ իր շահուն համար հին ու նոր կռիւ կը բանայ

Գ . ԱՐԻՅՊԻՍ . ԱՅՎԱՋԵԱՆ

+

Գ . ՀԱՅԵԼԻ ԵՒ ԿԱՊԻԿ

Օր մ' օրիորդ Շիմփանդէն՝
 Իւր տիրոջը դահլըճին մէջ ,
 Պատճառը լաւ չը գիտեմ
 Ինչո՞ւ մինակ արխուր ու խեղճ ,
 Կընճռոտած ճակտով՝
 Անճողանի գէճքով՝
 Նըստէր խոր խոր կը մըտածէր՝

Կարծես խելքին տակ դըտել էր Վ
Հոն ճիշդ նորա դէմ՝ յանդիման՝

Մի ջինջ մաքուր հայելի

Դըրուած չըքեղ՝ ի պատուանդան

Լոյս՝ ոսկեզօծ կը փայլի .

Դարձաւ նայեցաւ կապիկը յանկարծ ,

Ելաւ կանգնեցաւ հայելւոյն դիմաց .

Տեսաւ իւր դէմքն ու սոսկաց

Կարծես ամօթ մ'իսկ ըզգաց .

Վատըն զի ինքզինքն այդչափ պըժգալի 1

Այնչափ անճոռնի սև ու զազրալի

Նա ոչ երբէք չէր կարծեր ,

Մըտքէն անգամ անցած չէր :

Եւ ճշմարիտ ո՞վ կայ մեղմէ

Դէմքը ճանչցող՝ սիրտը քննող ,

Մեր երեսին մուր միշտ ծածկէ՝

Եթէ ունիմք ոսկի և փող

Կապիկն այսպէս չը հաւտալով իւր տեսքին՝

Նա հայելւոյն ամէն մէկ դին նայեցաւ ,

Ուր որ ալ նայէր՝ նոյնը տեսնէր եղկելին 2 ,

Զը դիմացաւ կըրակ դարձած կատղեցաւ .

Թաթը վերցուց ուժով խըփեց՝

Զարդ բուրդ արաւ հայելին ,

Խոշոր աչքերըն խոժողեց .

Կորաւ պաակեր իւր դէմքին .

Նըստաւ մըտածեց՝
 Իւր խիղճը մաքրեց .
 Յանցանքը հայելոյն
 Թողուց ու դատեց :

Բայց քիչ վերջը արթըննալով՝
 Անոնցմէ էն մեծկակը վեր առաւ .

Նայածն այն էր՝ դարձեալ իւր գէմքն հոն տեսաւ .
 Ճըւաց խըփեց
 Զայն ալ ջարդեց .
 Փոքր ինչ լրուեց՝
 Նորէն զըննեց .

Որչափ ջարդէր , որչափ նայէր
 Նա էն փոքրիկ կըտորին մէջ ,
 Դարձեալ տըզեղ գէմքն իւր տեսնէր ,
 Որուն չը կար վըճար ու վերջ .
 Մինչ այն կէտին որ ասն տէրը
 Վըրայ գալով՝ գութն ու սէրը
 Մէկդի դըրաւ , լաւ մը ծեծեց
 Ու վըռընտեց :

Այսպէս ահա կան շատ մարդիկ
 Սըրտերը չար , հոգւով կապիկ ,
 Ճըջմարտութեան հայելին
 Որչափ ջարդեն ու ջընջեն
 Որչափ ջանան իրենց գէմքին
 Մածկել մուրն ու աղտն ամէն ,
 Դարձեալ անոր մանրուքին մէջ
 Իրենք զիրենք կը տեսնեն . . .
 Մինչեւ չըզայ մահը անզեղ՝ 1
 Զը վըռընտէ աշխարհքէն :

ԱՌԱՌՅԷ ԱՆՏՈՆԵԱՆ ՆԱԼԱՆԴԵԱՆ

(1) . Անգարմ :

7. ԱՇՆԱՆ ՀՈՎԻԿ

«Որո՞յ վրայ, կուլաս հովիկ,
 «Ինչո՞ւ ցաւիս, դադրէ՛ հերիք» :
 — «Մէկուն վըրայ, բընաւ չեմ լար,
 «Ես ոչ մէկուն չեմ մեղքընար» :
 — «Ինչո՞ւ համար սուգ տրտմութիւն
 «Ողւոյս վըրայ կու բերես դուն,
 «Ողբ երգելով եղերական,
 «Տըխուր ատեն կէս գիշերուան» :
 — «Ինչո՞ւ համար. — «Օր պիտի գայ,
 «Գերեզմանիդ քարին վըրայ,
 «Գիշեր ատեն՝ դարձեալ ա՛յսպէս,
 «Եւալ ողբալու պիտի գամ՝ ես» :

Թարգմ.

Հ. Գ. ԳՈՒՆՆԵՐԵԱՆ

8. ՓԱՐՈՒԼԻՆ ԳԱԼԱՃՕՇԸ

«Հօգիդ սիրես, կընքահար,
 Անուշ ըրէ՛ 1, հրամէ՛, կե՛ր» :
 — Խիստ շատ կերայ, սանահար,

(1). (Ռմկ.) աւտել :

Մինչեւ սրտեղս է հասեր .—

«Հօգ չէ, պընակ մ'ալ հրամէ .

Ասի չուտելու բան չէ» :

— Բայց օանահար, գիացածըս,

Երեք պընակ է կերածըս .—

«Թո՛ղ մարդ, համրել ի՞նչ պէտք է,

Բանն ախորժիդ վըրան է,

Կեր կերածիդ չափ անուշ,

Ասոր կըսեն Է-լ-ճօշ :

Եղն երեսին կը ծըփայ,

Տես՝ սաթի պէս կը ցոլայ :

Կե՛ր կընքահար, մի՛ քաշուիր,

Այսպիսի բան միշտ չ'գըանուիր,

Սա սոխը կե՛ր, սա միսն ալ,

Մէկ կտոր մ'ալ, մէկ դըգալ :

Օրհնեալ է ձեռքն եփողին,

Օրհնած լինի Տանտիկին» :

Այս կերպերով Թաթուլը՝ խեչօ աղբօր շարկիք և կընէր,

Աչք բանալու ատեն չէր տար, երկու խօսքին մէկն էր՝ կեր :

Խեչօճ վաղուց արիւն քրտինք էր մըտեր,

Բայց ի՞նչ ընէր, պէտք էր պնակ մ'ալ ուտել,

Բոլոր ուժը մէկ ըրաւ,

Ետքի պընակն ալ կերաւ :

«Ապրի՛ս, կանչեց Թաթուլը, աչքըդ սիրեմ՝

Ես բարեկամս ահա այսպէս կը սիրեմ՝

Իսկ կոտորտուող նազեփն

է իմ առջի ատելին,

Մէկ պընակ մ'ալ կընքահայր» :

Խեղճ Խեչօ աղբար

Այս որ լըսեց, ի՛նչ ընելը չը գիտցաւ,

Գըտակն սւ գօտին առնել փախչելը մէկ ըրաւ .

Շուենչը հաղիւ տուենն առաւ

Կ թաթուլին տուենն սաքը մէկ մ'ալ չը դըրաւ :

Գ . ԱՐՔԵՊԻՍ . ԱՅՎԱԶԵԱՆ

(Քօիլով)

Ծ . ԻՄ ՄԱՀԸ

Եթէ տըժգոյն մահու հրեշտակ
Անհուն ժպտով մ'իջնէ իմ դէմ,
Շողիանան ցաւքս ու հողիս,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթէ սընարըս 1 իմ տիպար
Մոմ մը վըտիտ 2 ու մահադէմ
Ո՛հ, նըչուլէ ցուրտ ճառագայթք,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:

Եթէ ճակատվս արտօսրագօծ
Զիս պատանի մէջ ցուրտ զերթ վէմ
Փաթթեն, դընեն սև դագաղը,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:

(1) . Գլխու կողմ — (2) . Բարակ:

Եթէ հընչէ տըխուր կոչնակ՝
 Թրթռուն ծիծաղն մահու դըժխեմ 1,
 Դագաղս առնէ իւր յամբը քայլ,
 Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:
 Եթէ մարդիկն այն մահերգակ՝
 Որք սև ունին և խոժոռ դէմ՝
 Համասըփոեն խունկ ու աղօթք,
 Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ:
 Թէ յարդարեն իմ հողակոյտ,
 Եւ հեծեծմամբ ու սըգալէն
 Իմ սիրելիքը բաժնուին,
 Գիտցէ՛ք որ միշտ կենդանի եմ:
 Իսկ աննշան եթէ մընայ
 Երկրի մէկ խորչն հողակոյտն իմ,
 Եւ յիշատակս ալ թառամի,
 Ա՛հ, այն ատեն ես կը մեռնի՛մ...

Պ. ԳՈՒՐԵԱՆ



10. ԳՈՒԼՊԱՅԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Տեսէք, ձեզ պատմեմ մի կարճ՝ պատմութիւն:
 Գոյր մի ունէի, քաղցրիկ զուարթուն,
 Որբ էինք անտէր, նա եղաւ ինձ մայր,

(1) Գէշ:

Նրէց էր քան զիս, գործէր անդադար,
Հիւսէր և մանէր, մանէր և հիւսէր.
Նրդեւով երգէր որ բուրելին սէր,
Պատուհանին քով ունէր մի թաղար
Որոյ մէջ սեհան կար մշտադալար,
Ռեհանի բոյրն էր քաղցր ու խնկաւէտ,
Նւ վարագոյրն երբ ծըփայր վէտ ի վէտ
Թեթեւ հողմիկէն որ ի ներքս հոսէր,
Մեր սենեակ գողցես լուսոյ դըրախտ մ'էր:—
Արդ, մի օր ասէր ինձ քոյր իմ լալով
Թէ պիտի երթար ընդ ցամաք, ընդ ծով,
Նւ թէպէտ թողուր արդ զիս աւանձին,
Մի օր պիտի դար զիս գտնել կրկին
Նւ յայնժամ պիտի լինէինք զուարթ,
Բիւրիցըս զուարթ և ուրախ քան արդ:
Նւ գնաց, յանձնելով զիս մեր դըրացւոյն
Որ աղքատ կին մ'է մեզ յար և հանգոյն:
Գընաց, տալով ինձ մի գուլպայ տաքուկ
Ձոր նորա մատներ հիւսեցին փափուկ:
Երկար ամիսներ անցան գընացին,
Նւ ես տակաւին մընամ առանձին.
Գուլպաս ալ հինցաւ և քոյրս դեռ չի դար,
Ի՞նչ պիտի ընեմ, ես հէզ ապիկար:—
Ամեն անգամ որ գուլպային նայիմ,
Յիշեմ դառնութեամբ բացակայ քոյր իմ.
Նւ ասեմ յայնժամ որ եթէ գիտէր
Թէ իւր խեղճ եղբայր, որբիկ և անտէր,
Աստ ինչե՛ր քաշէ գուլպային ձեռքէն,

Անշուշտ նա փութար դառնալ առ ժամայն
 Ըսփոփել եղբօրը վըշտերն համայն :
 Այո՛, զնա յիշեմ և յիշատակին
 Ուղղեմ ի հեռուսա ժըպիտ տրտմագին :
 Անցեալ տարիներն յիշեմ և զիմ քոյր ,
 Ռեհանի թաղարն , ճաճանչ , վարագոյր ,
 Թըռչնոց դայլայլիկ մօտ պատուհանին ,
 Հացի փըշուրներ զոր ճնճղուկք տանին .
 Այս ամենն յիշեմ և ինձ կը թըլի
 Թէ ահա քոյր իմ դրան մօտ կերեւի :

8 . ՍԵՔՅԱՆ

11 . ՄԻՐԵՅԻՔ ՉՄԻՄԵԱՆՍ

Վարդակարմիր Գողգոթային վեհ գագաթ
 Միշտ փայլփլող սիրոյ անշէ՛ջ ճառագայթ ,
 Գեռ կըսպասե՞ս թափել սըրտից քու սըլաք ,
 Ձո՞վ կը հըսկես , վի՞հ և անդո՞ւնդ թէ կըմախք .
 Որ սև ժայռից մէջ մարեցաւ այն բեկ բեկ 1
 Բարբառն վըսեմ թէ՛ «ըզմիմեանս սիրեցէ՛ք» :

Մածկէ՛ ամպով կարմիր կողերդ , Գողգոթա՛յ .
 Եւ թող խայտան ցաւոտ ոսկերք սև Յուդայ . . . :
 Ժանգոտ ու գուլ 2 թուրերն առին կարմիր փայլ ,

(1) . Նուաղեալ . — (2) . Բթայած :

Նոր կըրօնին հեա արեան ուղիք առին քայլ . .
Թընդանօթին առջի բոմբիւնն Վ խեղդեց սէգ
Ձքաղցր հագագ թէ՛ ըզմիմեանս սիրեցէք :

Մարդազոհով Վատիկանի մըխացին
Մխնելոյդքը 2, կամարքը «փա՛ռք» գոռացին,
Փոխ-Քրիստոսք խաչն ըրին դաստակ 3 կացինի՝
Սեւ դըրօշ մը ատելութեան արիւնի,
Դարուց մոխրէն կամ ամպերէն յուսայ հէք
Ձըրկեալն լըսել թէ՛ ըզմիմեանս սիրեցէք :

Տընանկին դամբանը կանհեաի ոտնակոխ,
Տընակին մէջ մարի առկայծ 4 կանթեղն հող
Այն մութին մէջ նօթի տըղեկք կը հեծեն
Դըղեակըն խրախ մինչեւ լոյս ջահք կը հիւծեն .
Հարուստին կառք ժխորով 5 կանցնի սըրարչաւ
Հէքին դագաղն իւր գերեզմանն լուռ իջաւ :

Գեթսեմանին իջնող հրեշտակն դալկահար՝
Որ գեղ՝ ծալիկ՝ արցունք ու փառք չը ճանչնար՝
Նորա ցուրտ դողն աղքատը սոսկ կ'ըսփոփի,
Ճոխն և տընանկ պատրանքին մէջ կ'ըլլան մի,
Կայծակնաթեւ թէ՛ մըռընչեն մըրըրիկներ
Թէ՛ «Սիրեցէ՛ք զիրար», հէգն հոս չե՛ն սիրեր :

Պ . ԴՈՒՐԵԱՆ

(1) . Ձայն :— (2) . Մխնէք :— (3) . Թաթ :— (4) . Նուաղեալ :—
• Մեծ աղմուկ :

13. ԿԱՏՈՒ ԵՒ ՇՈՒՆ

Երբոր Ադամն ու Եւան
 Դրախտէն վըռընտուեցան
 Շինեցին մի փոքրիկ տուն,
 Կանչեցին շուն ու կատուն,
 Որ պահապան
 Դընեն այն տան .

— Ինծի նայէ, ըսաւ շանը, մեր նախահայրն Ադամ,
 «Քեզ արտաքին թշնամիները վանելու պաշտօն կուտամ,
 «Իսկ դուն կատու, ուշադրութիւն, չըլլայ որ այն չար
 «Գան և ընեն այս տանը մէջ հազար վընաս խում ու կեր :
 «Եւ փոխարէն
 «Իմ քսակէն

«Ձեզ կերակրել պարտքս ըլլայ
 «Եթէ կուղէք՝ կինս ալ վըկայ :

Թէ գտնուի մենէ՛ մէկը ձեզ դէմ երբէք անիրաւ .
 Թէ անօթի թողուն դձեզ՝ թէ պատճառեն պզտի ցաւ,
 Շուտ մը ինծի բողոքեցէք զանոնք աղէկ մը պատժեմ
 Ձի ես այս տան գործածեցի արդարութիւնն իբրև վէմ :

Պէտք է նաև սա ալ յիշել,
 Մնած էին Կայէն Աբել .
 Թէպէտ դեռ փոքրիկ
 Բայց «Տես աղբարիկ»

Ըսաւ Կայէն ուրախութեամբ Աբելին ,

«Մեր ծնողքը +—ը—ի, բիւիկ հոս բերին
Յկուր խաղանք զուարճանանք նոցա հետ
Եւ վերջէն ալ քաշենք տըփոց ծեծ ու փետ .

Բիչ մ'ըզբօսնունք, եղբայր արի :
Բայց կայենին սիրտը բարի

Չուզեց ընել այդ կենդանեաց չարութիւն :

«Էհ, ես կընեմ» ըսաւ կայէն «մըներ դուն»
Գնաց շանը քիթին բերնին ու ժով մէկ հատ մը զարկաւ
Եւ կատուին պոչէն սըխմեց որ խեղճը պոռաց «Բա—» :

Դեռ շատ տեսակ փորձանքներ

Նոցա գլխուն կը բերէր .

«Աղբար քեզի ի՞նչ ըրինք

Որ դու կընես մեզ չարիք

Հիմա կ'երթամք, անողոք !

Հօրդ կընեմք մեք բողոք» :

Ըսին նոքա և գընացին

Գանդատեցան մեծաւորին :

«Վա՛յ անզգամ»

Ըսաւ Ադամ» .

«Գացէք հելէ դուք այս անգամ,

Ես այն չարին հօտէն կը գամ» :

—«Ողջ ըլլաս Տէր որ մեզ պաշտպան

կըլլաս» ըսին ու ետ դարձան :

—Մի՛ թողուր որ անկիրթ մեծնան, վերջըն ըրածիդ
կը զղջաս,

Գուցէ որ մը այս չարիքէն մեզ ալ ելնէ մեծկակ մաս,
Ուստի պատժէ սա չար կայէնն, ըսաւ Եւա իւր էրկան :

—Թէ կնիկ, հոգիդ սիրես դեռ տղայ են, թող խաղան,

Բայց վախնալով որ չեւայ
Եւայ իրեն վըշտանայ .
Մէկէն կանչեց «Մօ՛՛ կայէն ,
Չե՞ս խըպնիր դուն անօրէն ,
Ասկէ վերջը ասոնց վընաս
Նրբէք չընես հօ՛ տղաս :
Կայէնի սիրտն անգութ
Այս խրատներն ի՞նչ օգուտ .
Հանդարտ սրտով շարունակեց
Այս կենդանեաց քաշել նա ծեծ :

—Մորթի կտոր

Կամ չոր ոսկոր

Հացի փըշուր

Մեզ կերակուր

Եւ վրայէն այոջափ զրկա՞նք

Տէ գլխունուս ճարը գըտնանք :»

Ըսաւ կատուն իւր անձկութեան ընկերին ,

«Ահա գտայ ես մէկ միջոց և դիւրին

Կեցիր պատմեմ քեզի ես ,

Տեսնեմ ի՞նչպէս կը գտնես .

Հիմա երբոր մեզ ծեծել գայ այն կատաճ ,

Ես ձեռքը ճանկեմ և դուն ոտքը խած :

Ձի ահա տես թէ՛ Ադամ և թէ՛ Եւայ

Չեն նկատեր որ մեր «հալը» ո՞ւր կերթայ :»

—Չէ համբերէ , բարեկամ ,

Նոքա ունին մեզ խընամ .

Ականջովդ չի լսեցիր ապերախտ

Որ մեր տէրը տուաւ տղուն ի՞նչ խըրատ :

Բայց կայէն դեռ տղայ է :
Անշուշտ չընեք մեծնայ նէ :

Պատասխանեց խելօք շունը կատուին :

— «Ի՞նչ համբերութի՛ւն

է՛յ խենդեցար դուն» .

Ըսաւ մեր կատուն .

Եւ դեռ խօսքը բերանն էր

Որ կայէն , հոն էր եկեր ,

Մտաւ անոց մէջերնին

Կը կըսամտէր միսերնին :

Շունը հեզօւկ է խօնարհ՝

«Մընէր , կըսէր «Պէ՛ աղբար» ,

«Հազար ըրէ՛ դուն հ-՛վ , հ-՛վ

Իեզ մտիկ ընողը ո՞վ ,

Ըսաւ կատուն ինքնիրեն ,

Եւ կամիթին փոխարէն

անկ մը զարկաւ կայենին , ձեռքըն ըրաւ արիւն լուայ ,

տոյ փախաւ ու ելաւ , խոշոր ծառի մը վրայ ,

այէնն ըսես այս ցաւուն , չը դիմանար ու կուլայ .

Ի՞նչ կարծեցիր , ըսաւ կատուն , այն մեծ ծառին վրայէն

ուն ուզածդ մեզի ընես , մենք չը խօսի՞նք , ո՛վ կայէն :

Կատուոյս վրայ կ'երդնում , ահա ամենքը թ'ո՛վ վկայեն

երբ ընես դու ինձ չարիք , ես պիտի դամ քու հ-իէն -

Դարձեալ կօւզես

Որ առջի պէս

Երթամ հօրդ բողոքեմ

Եւ գամ քենէ ծե՞ծ ուտեմ .

Ո՛ւշ մնաց ո՛ւշ

Ալ չեմ ապուշ

Պիտի ճանկեմ, գիտցած ըլլաս,
 Նայէ որ ալ հետըս չիյնաս :
 Այս՝ կայէնին խըրատ եղաւ
 Եւ անկէ վերջն ալ բնաւ
 կատուին չէր մօտենար
 Բայց շունին շարիք հազար,

Երբոր կատուն քովէն անցնէր, նա կը պօռար հէմն բիստ
 Բայց այս ոճով գործը գիտցող կատուն եղաւ շատ
 հանգիստ :

Մամիկըս կը պատմէր որ
 Այն օրէն մինչեւ այս օր
 կատուները ազատ կապրին,
 Իսկ շները ըստորին

Յ . Ղ . Ճ .

18. ԳՂՈՒՄ

Լըսէ, եղբայր, թէ գըղմենին
 Ի՞նչ խօսեցաւ օր մը ինքնին,
 Է՞ր ինչո՞ւ մարդիկ ամէն
 Անխելութիւն գըղում ըսին :
 Է՛հ, ուրեմն՝ ըսել է
 Թէ գըղումն անխելք է...

Քննենք, անխելքն ո՞վ է, ե՞ս եմ.
Թէ մարդիկ են, ո՞ն հաստատեմ:
Նայէ մէկ մը տեսակ տեսակ
Սա մեծ խմբին ձըմերուկաց.
Նայէ մէկ մ'ալ մարդկանց խելքի
Որ ըրեր է դոքա յարգի:
Գէթ մէկ օգուտ իրենց ունի՞ն,
Թող ինձ ցոյց տան, եթէ ունին.

Հիմակ շատ լաւ

Միտքըս ինկաւ:

Քեզ զովութիւն մարդկանց ամէն
Կուտան եղեր ամրան տանն:

Թէ լոկ այդ է

Այդ ալ բա՞ն է:

Բայց իմ օգուտ համրեմ այժմէն,
Ամէն տեսակ անուշեղէն
Ու կերակուր ես կը լինիմ,
Թող որ ամեն տեղ կը բուսնիմ.
Եւ ձմերուկէ դիմացկուն եմ
Էլել համեղ, խոշոր ալ եմ:
Քիչ մը դըղում հոս կանկ առաւ.
Թերեւս զուր կը մեղադրեմ,
Մարդիկներուն սանկ նանկ կըսեմ,
Կարելի է տեղս է պատճառ,
Որ ինձ նոքա պատիւ չեն տար:
Դարու վեր տեղ մը բուսած՝
Միս մինակ հոս եմ մընացած՝
Եթէ երթամ

Ու միանամ

Խառնըւիմ մէջ ձմերուկներին .

Գուցէ մարդիկ ինձ ալ նային

Փորձեմ

Տեսնեմ :

Ըսաւ , բրդաւ իր արմատէն

Գըլտոր մըլտոր դէսզ վար դարէն

Գալով մըտաւ զետեղեցաւ

Բայց ի՞նչ վախճան հոն ունեցաւ .

Գըդմին երես նայող չեղաւ

Հոն լըխկեցաւ ոչընչացաւ :

Վ. Լ. Մ. Վ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ



14. ՏԵՐԵԻՐԻ

« Բու ճիւղէդ բաժնըւած ,

« Իեղձ տերեւ չորացած ,

« Ո՞ր կ'երթաս . Ձեմ գիտեր :

« Հո՞ն շըրջեց արմատէն

« Կաղնին իմ ապաւէն .

« Անհանդարտ քամիներ

« Մըրըրիկն և զեփիւս

« Ձիս տանին հողմավար 1

(1) . Հոգէն քշուած :

«Դաշտերէ ի յանտառ
 «Լեռ հովիտ ի ըսփիւռ .
 «Կերթամ լուռ անդանդատ
 «Ի թափառ ուր քամին
 «Կը տանի միասին
 «Սարդենին | և ըզվարդ :»

Արնուտ 2

ՅԱՐԳՄ . 2 . Բ . ԲՈՒՇԵՆԵՐԵԱՆ

~~•••••~~

16. ԵՁՆ ԵՒ ԳԵՂՁՈՒԿ

Ըստէս ըստէս մարդկանց մէջ
 Շատ դանդաւաններ կը լսուին
 Որոնք՝ իբրեւ միշտ անվերջ,
 Անդու թ բաղդէն հալածուին .
 Բայց բաղդն ինչո՞ւ յանցաւոր
 Դատեն մարդիկ՝ չեմ գիտեր .
 Երբոր իրենք են բոլոր
 Իրենց յանցանքներուն տէր :

Ո՛ւշ գիք խընդրեմ առակիս ,
 Չէք մեղադրեր յուսամ գիտ :

(1) . Դափնի . — (2) . Արնուտ , ողբերգակ բանաստեղծ Գաղբա .
 — (1766—1834) :

Եզն իւր լուծին տակ ճնշուած,
Գըլուխը կախ՝ յուսահատած,
Գանդաղ դանդաղ յառաջ դիմէր
Իւր ծընընդեան օրն անիծէր.
Այլ գեղացին սայլին վերայ
Նըստած՝ հո՛ւ հա՛ կանչելով՝
Ձեռքը երկար խըթանով՝
Խայթէր եզներն անխընայ,
Մէյ մ'ալ տեսնաս դէմ յանդիման՝
Կառք մ'երեւցաւ սըրընթաց,
Խառնէր փոշին ամպի նըման,
Ձոյգ մը խըրոխտ ձի լըծած,

Կ'ընթանան սաստիկ
Իբրու փոթորիկ
Արծիւներ անթև
Հողմոց պէս թեթեւ:

Տեսաւ եզը զայդ հանդէս՝
Սըրտին նախանձ բորբոքէր.
Գըթին տակէն համրապէս.
Իւր լըծակցին զայս ասէր:

— «Թըշուառ վիճակ՝ ո՛վ ի՛նչ դառըն գերութիւն
Մարդիկ մեզ հետ ի՞նչպէս անդուլթ կը վարուին,
Ահա ձիանքն 1 ի՞նչ փառքերով զարդարուն.
Թեթեւ կառաց լըծին սուլեն և թըռչին.
Այլ մեր վըզերն միշտ կը ճընչեն կոճղին տակ.
Ո՛հ անյարմար լուծ կրելն է դըծընդակ... »

Եթէ ինձ ալ տային ձիուն զարդն ու փառք
նթանայի արագ իբր ըզնապաստակ :

Մինչդեռ եղբ խօսէր այդպէս՝
Լաւ մ'ուչ դրաւ Գիւղացին .
Օր մը տեսնաս նա 'ի հանդէս
Լըծեց եզն իւր՝ ընդ ձին

Լըծեց միատեղ :
Զարդարեց չքեղ ,
Բոժոժներ 1 փայլուն՝
Ճարմանդք 2 պըսպըղուն 3 ,
Զարդարեց ըզնա
Իբրեւ նոր փեսայ :

Տեսնաս եղբ վեհ և հըպարտ՝
Կախ գլուխը վեր բըռնած ,
Սիրտը ուրախ՝ դէմքը գըւարթ՝
Խեղքը խաղցուց ի հիմանց :

Իսկ Գեղացին կառքը հեծաւ փութապէս ,
Սանձն 'ի ձեռին՝ մըտրակն ի կուշտ կը շարժէր ,
Գոչեց , սուլեց , ոստոստեց ձին քաջապէս ,
Այլ խեղճ եղբ ընդ յետըս կոյս ընկըրկէր :

Ուժ մէկ առաւ ամօթահար
Վեր վեր կ'իյնար կը ցատկէր
Զանար վազել ձիուն հաւսար ,
Մեծդի և փոքով տատանէր :
Քանի մը քայլ փոխեց գնաց՝

(1) . Փղբրիկ զանգակներ :— (2) . կոճակ :— (3) . Փայլուն :—
(4) . Մեծկակ :

Հասաւ հօգին կոկորդին,
 Լեզուն բերնէն դուրս էր կախուած՝
 Թըռչէր շողիքն ընդ հողմին .
 Չը դիմացաւ խեղճը երկօր
 Տարածուեցաւ շքնչասպառ ,

Մաղր և ծանակ

Խաղք խայտառակ ,

Նոյն դաշտին մէջ ուր լըծակիցըն խոհեմ
 Վիճակէն գոհ կը ճարակէր խոտ դալար .
 Երբ զայդ տեսաւ սիրտը մարէր խընդալէն
 «Վա՛շ վա՛շ — կ'ասէր — ինչո՞ւ չափըդ մոռացար -
 «Քեզ ո՞վ է ասեր ձիուն՞ հաւսարել
 «Եւ ճակատէդ բուսած եղջիւրքդ անարգել ,

«Մարդիկ անոնց կը դընեն սանձ ,

«Այլ մենք ազատ և անսանձ .

«Ա՛ն քո լուծը , տա՛ր հեզիկ

Ահա քեզ կեանք՞ երջանիկ

ԱՌԱՔԵԼ ՎՆՏՈՆԵԱՆ ՆԱԼԲԱՆԳԵԱՆ



17 . ԳՈՐՏ ԵՒ ԿՈՎ

Գորտ մը տեսաւ կով մեծդի ,
 Ան ի՞նչ աղուոր կ'երեւնար ,
 Ինքն որ ճըթլոզ , շատ պըզտի ,
 Հաւկըթի չափ հաղիւ կար ,

Աչքը տընկեց մեծնալը ,
 Վերէն վարէն կ'ուսենար ,
 Կոզուն կուզէր հասնելու ,
 Կըռկըռաւով անդադար .
 «Քուրիկ, կըսէր, ինձ նայէ՛
 թէ սա կոզուն չափ եղա՞յ» :
 «Ձէ, ի՞նչ կըսես, ան ս'ւր է» :
 «Ձէ՞ մի, հիմա... զայն չանցա՞յ» :

«Ո՛հ, շատ հեռու ես .
 «Նա քեզ մէ՛յ մըն ալ
 Հիմա ի՞նչ կըսես ,»
 «Եւ ոչ մտախկցար» :

Անմիտն այնչափ ոյժ տուաւ ,
 Որ վերջապէս ճաթեցաւ :

Ո՛վ քանիք կան աշխարհքիս մէջ անհամար
 Որ խելքով^ա անմիտ գորտէն վար չեն մնար .
 Հասարակ քաղաքացին աչքը մեծի
 Կուզէ իրեն տուն շինել մեծ պարոնի ,
 Ամէն պըզտի թագաւոր
 Ունի իրեն դեսպաններն .
 Ամէն իշխան սինըքօր
 Կուզէ զոյգ զոյգ ծառաներ :

Լաֆոնթէն

Հ. Գ. ՀԻՒՐՄԻՒԳԵԱՆ



527

19. ԵՆ ԳԾԳԱՋ

Շատ խորհեցան թռչունք բոլոր
Թէ զո՞վ կարգեն տէր թագաւոր
Ոյր ձայնն լինի շատ խոշորիկեկ
Բարձրէն ձայն տալ գիշեր ցերեկ . .



Աերջապէս ընտրեցին
Ադուաւիկն սեւածին

Իշուկ աղբարն այս՝ որ լսեց,
Զարմանքն առաւ «օհօ՛» ձայնեց,
Աստուած վկայ կերդնում կրկին

Եթէ թռչունք ըղեղ ունին
Զի թագաւոր լինելու համար
Եթէ խոշոր ձայնի պէտք կար
Քան զիս հզօր ձայնեղ ո՞վ կար
Յիմար թռչունք, թէ շինէիք
՚ի բարձր տեղ ինձ վրանիկ
Պիտի տեսնէիք թէ ի՞նչպէս ես

Որտա կը ձգեմ ահեղապէս:
Ի սաստիկ ահ ու սարսափ
Աշխարհի առ հասարակս:

Խեղճ իշուկ խելք չէր ըներ:
— Խելք ունէ՞ր —

Թէ թռչուններու իշխելու համար
Թեւերու էլ անհրաժեշտ պէտք կար:

Վ. Հ. Ն. Ծ. Վ. Ս. ՄԻՆԱՍԵԱՆ

Handwritten scribbles in the left margin.

Handwritten scribbles in the bottom left margin.

20. ԱՂՈՒՅՍ ԵՒ ԱՔԼՈՐ

«Վարդավառի տօն է այսօր
 Իջիր ծառէդ սիրուն աքլոր,
 Ինձ հետ կարգա երգ շարական
 Մատաղն օրհներէք տէրունական» :
 Աղուէս այսպէս գէպ ծառն 'ի վեր,
 Մինչ համոզկեր խօսք կը նետէր,
 Որուն աքլոր պատասխանէր .
 «Ուրեմն նախ հարկ է աղուէս
 Որ ժամկոչի ձայն ձրգեմ ես

Ապա իջնել

Ու ժամ երգել :

Կուկուլիկ կու, տօն է այսօր .
 Սուրբ Կարապետն է փառաւոր» :
 Աքլորիկին այս նուրբ ձայնէն
 Նընիկն ըսթաթի՝ հասաւ անդէն,
 Խաժնէր զաղուէս որ կ'ոռնար
 Բզքտուելով անդադար .
 Իսկ աքլորիկն ծառին վերէն
 «Աղուէս կ'ասէր ծիծաղելէն
 Այդ անճոռնի ձայնով պիտի
 Երգէի՛ր տօն վարդավառի» :

ՎՃՆ . Ծ . Վ . Ց . ՄԻՆԱՍԵԱՆ

Յ 1 . Ա Ր Ա Ն Յ ՈՐ Գ Ն

— . —

«Ես իսկ եմ յարու-
թիւն եւ կեանք»

ՅԻՍՈՒՍ

Եբրեւ երազ կամ վազախոյս մի ստուեր
կանցնին աւուրք, ամիսք, տարիք և դարեր .
Մինչդեռ բացեր ականողիք քո ի լոյս ,
Ո՞րպիսի ոք արդեօք տուաւ քեզ սին յոյս
Թէ մահուանէ զերծ դու , անցորդ ,
կենաց միայն ես բաժանորդ :

Ի՞նչ են փառքեր , հաճոյք վայելք նաև սէր .
Թէ ոչ՝ ախար մահուան փայլուն հընչակներ ,
Որք մինչ մատչին մեղմեղանօք գըգուիլ ձեզ ,
Յիշէ թէ կան անոնց տակ վիշաք աղեկէզ .

Քո կեանքն է վա՛հ , անցորդ ,
Մի խաղալիկ բաղդի ձախորդ :

Յաւոց հովաթս մինչև ջնջին իսկ փոշիք
կրեն մահուան մի անյեղլի դատակնիք ,
Ձոր գըրոչմեց անվըրէպ մատն Անեղին՝
Առ ի խըրատ և տիպար մարդ էակին :

Յուսոյ խարխիս չիք քեզ, անցորդ,
Յողդողդ 1 կենաց քոց տայ յագուրդ 2:

Ոչ յոյս, ոչ կար 3, ոչ մեծութիւն ճոխապանծ
կարեն փրկել ի մահուանէ ըզքո անձ.

Մինչ վշտասփոփ քընար փըշրին ի հառաջ՝
Անգութ մահուան անխոյս հարկին ընդ առաջ,
Ո՛ւմ ապաստան կաս, հէգ անցորդ,
Է՛ր այս աշխարհ սիրես յախորտ 4:

Ճշմարիտ և անանց կեանք է ինքն Յիսուս,
Որ իւր խաչիւ կտակեց մեզ անխաբ յոյս.
Թէ քո Փըրկչիդ հեռեւեցար օրինակին,
Բարի գործով զարդարելով քո հոգին,
Յո՛ւշ քեզ... չես մի սարգ անցորդ.
Անմահ կենաց դու ժառանգորդ:

Յ. ՄԱՆԱՎԵԱՆ



ՁՁ. Մ Ա Ղ Թ Ա Ն Ք

ՄԵԶՊՈՒՐԵԱՆ ՍԱՆՈՒՋԵԱՅ

Ա.

Դու որ երկնից ամենայնի տաս օրէն
Ամանակաց 5 համագոյից 6 Տէր, Որ էն,

(1). Անհատատ: — (2). Վշտանալ: — (3). կարողութիւն: —
(4). կամ յսխորա, գողող: — (5). յամանակ: — (6). Արարածք:

Որ ի մըթան սըիռեսս յեթերս զաստեղց բոյլ 1,
 Եւ յանդըս մեր այգուէն այգուէն ըզծաղկանց հոյլ
 Որ ըզմաղթանս լուեալ թռչնոց երամոյն
 Բաշխես նոցա ջամբ 2 ի պահու և տաս բոյն,
 Լուր արդ ճայնի քոյոց խոնարհ աղախնայց
 Եւ մահացուացս ողորմութեամբ արա այց:

Բ.

Տուր մեզ յաւէտ սիրել զմիմեանս ի քոյդ սէր,
 Յիշելով միշտ եթէ յաստիս չիք ինչ մեր.
 Թէ չիք ոք սուրբ և ոչ հզօր բաց ի քէն,
 Եւ մահացուք միմեանց կարօտ եղբարք են.
 Թէ մահուոյ արդարանալ չէ հընար
 Բայց լինելով այր ընկերին իւր սատար 3.
 Ոչ ի ցոյց ինչ և ոչ 'ստ հաճոյս թէ գընան
 Այլ երբ խղճիւ ի քո կամս են ապաստան:

Գ.

Արդ՝ թէ մաղթանքս չիցեն քեզ Տէր անհաճոյ
 Շնորհեա՛, աղէ՛, շնորհեա ի փառս անուան քո,
 Եղբարց մերոց լինել ըզգաստ պատանի
 Եւ քերցս նոցին լինել հոգւով գեղանի.
 Տուր երկոցունցս, իբր ի մատեան անսպառ,
 Ի տիեզերս ընթեռնուլ զհրաշից քոց բարբառ,
 Եւ աղախնեացդ համեստութեան շընորհիւ
 Լինել յաւէտ տանն Մեզպուրեան ի պատիւ:

Յ. ՈՍԿԱՆ

(1) . Խաւմբ (աստեղաց) .— (2) . Ուտեղիք .— (3) . Օգնակամ :

23. ՍԵՅՆԱՐԻ ԿԻԿՈՆ

Յեխոտ աշնան եղանակ
 Ուր՝ պէտ, անպէտ ժամանակ
 Երկինք առատ կ'անձրեւէ
 Գիւղացիին շատ լաւ է՝
 Բուխերիկին մի անկիւն
 Քաշուած՝ լինել անուշ քուն,
 Եւ ամառուան քաշածներուն
 Փոխան՝ առնուլ ոյժ զօրութիւն։
 Այլ շատ անգամ կը պատահի
 Որ գեղացին՝ աշնան ցեխի
 Սայլը լրծած՝ կըստիպուի
 Վարել պաշտօն փայտակրի։
 Թէպէտ դըժար, այլ ի՞նչ անել։
 Այդ է եղել նորա ճակատը գըրուել։—
 Ուստի օր մի Կիկո աղբար
 Երբ յանտառէն տուն դառնար
 Բեռնաւորած սայլը փայտ,
 Պատահեցաւ մի դժբաղդ
 Նըմա՝ փորձանք, պատահար,
 Սայլը առաջ չէր երթար։
 —Յոգնեցա՞ն արդեօք եզներ։—
 Իրաւ է որ ճամբան ցեխ էր։
 Կիկոն սըրտին նեղութենէն,
 Որ չը լինի մութի մընայ.

Աղօթք կ'անէր քրթին տակէն
Որ Աստուած ոյժ եզներուն տայ,
Քաշեն տանին սայլը իսկոյն
Ու չը մըթնած հասնին ի տուն:
Ուստի՝ յողնած խեղճ եզերուն
Քըրտնաթաթախ քամակներ
Սուր խըթանով կը խոցէր:
 Նզանց բերնէն
 Ռընգունքներէն,
Ինչպէս փուռէն Բարեւոնի.
Շունչը կեւնէր նման ծուխի:
Ինք կը կանչէր հեւալէն,
«Չո՛ւ, չո՛ւ, եզներս քիչ մընաց,
«Ահա մեր գիւղն հեռուանց
«Կը տեսնուի քա՛ջ կենդանիք
Հա՛ քաշեցէք, շուտ հասնինք»:
Անխօս եզներ ամենայն ջանք
Արին. այլ փո՛ւճ աշխատանք,
Սայլը և ոչ մի փոքրիկ քայլ
Կարող չեղաւ յառաջ երթալ:
Կամաց կամաց արեգակ
Ծածկուեցաւ լերանց տակ:
Գիշերն իրեն սև մութ սաւան
Ըսկսաւ փըռել ամէն տեղ:
Մեր կիկոյին սիրտը նեղ
Բարձրացուց աղօթքին ճայն.
«Ա՛յ սուրբ Սարգիս, սուրբ Քորոս
«Մեզ Հայերուն բարեխօս.

« Հա՛ շուտ հասի՞ք խեղճ Կիկոյին » :
Նոյն միջոցին ,

Որոշակի ,

Հըրեշտակի կամ մի սուրբի՞ ,

— Ձէ յայտնի , —

Կը հասնի ձայնը Կիկոյին .

Որ սարսափով

Ականջ դարձած բոլոր մարմնով ,

Շունչ բրունելով լրուիկ մընջիկ ,

Յետի խօսքերս կանէ մըտիկ ,

« Խե՛ղճ տըղայ , եզներդ ինչո՞ւ կը տանջես . . .

« Երկնից սուրբերն կը կանչես

« Որ դան սայլիդ ճամբայ բանան .

« Կարելի՞ միթէ այդ բան :

« Բըրիչ և բահ ձեռք առ դուն ,

« Մաքրէ՛ չորս կողմն անիւներուն ,

« Թէ որ կայ մի խոչ կամ սլատճառ ,

« Նայէ՛ այդոր առջեւը ա՛ռ .

« Յետոյ եզներդ առաջ վարէ՛ ,

« Ու տես , կերթա՞ն նոքա թէ չէ » :

Արտորալով Կիկո աղբար ,

Իսկոյն փայտ մի ձեռքը առած

Անիւներուն քովը գընաց ,

Ու տեսաւ որ մի խոչոր քար


Կիսով չափ ցեխին մէջ

Կ'արգիլէր անիւներուն ելեւէջ :

Մեծ աշխատանքով .

Լծակին միջոցով,
Երբ գըլորեց քարն մէկդի
Եղներն առանց խըթանի,
Գիւ գիւ սայլիլը՝ թեթեւ
Տարին մինչեւ տան առջեւ:
Այս առակիս բուն խըրատն
Այն է որ նախ ամէն մարդ
Իրեն ձեռքէն եկածն պէտք է
Աշխատելով ի գործ դընէ:
Անկէ յետոյ երբոր տեսնէ
Որ ինքն անձամբ կարող չէ,
Թող դիմէ սուրբերուն
Որ հասնին յօգնութիւն:
Այլ ես կասեմ կիկո քեզ,
Ձեռքէդ եկածն որ անես
Աստուած վերէն օգնական
Քեզ կը լինի յարածամ:

Հ. Բ. ԲՈՒՇԵՆԵՐԵԱՆ



ՉԳ. Ա Պ Ա Գ Ա Յ Ն

«Ո՛չ դուք ասէք թէ այլ ևս չորք ամիսք
 են՝ և հունձք դան, ահաւասիկ ես դամ
 ձեզ, ամբարձէք զաշս ձեր և տեսէք
 զարտորայս, զի սպիտակացեալ են և ՚ի հունձս
 հասեալ: (Յովհ. Դ. 35)

Ի՛նչ փոյթ թէ՛ ձըմբան ցուրտ ստռամանիք
 կը ծածկեն դաշտերն ու հիւղին տանիք,
 Բացէ՛ք աչերնիդ, տեսնել ծիծաղկոտ
 Ամառուան հունձքերն՝ լերանց ի օտորոտ՝
 Ար կ'անին ձեր մօտ:

Ի՛նչ փոյթ գիշերուան թէ մըթին թևեր
 կը պատեն զերկիր՝ ըզ ծով և զեթեր,
 Բացէ՛ք աչերնիդ, տեսնել քաղցրահոտ
 Սիւգերով խընկեալ ջինջն այն առաւօտ՝
 Ար փայլին ձեր մօտ:

Ի՛նչ փոյթ թէ աղբերք ցամքած են համակ,
 Եւ չը տան շրթանցդ ցօղոյ մի կայլակ և,
 Բացէ՛ք աչերնիդ, տեսնել ընդ արօտ
 Վըճիտ վըտակներ՝ ոյց ջուրց էք կարօտ՝
 Ար սահին ձեր մօտ:

Ի՛նչ փոյթ թէ խոնաւ խորշ մի անձկագոյն
 կըսպառէ ոգիքն առողջ ձեր մարմնոյն,
 Բացէ՛ք աչերնիդ, տեսնել մըթնոլորտ
 Զովացիկ ու անամպ, և ծըծել զայն օդ
 Ար շընչէ ձեր մօտ:

Ի՛նչ փոյթ թէ ամէն կորուսած բարիք՝
Աղքատ ու անտէր տըրնում թափառիք .
Բացէ՛ք աչերնիդ , տեսնել հոս ու հող
Աղամանդն անդին , ոսկին նախանձոտ

Որ շողան ձեր մօտ :

Ի՛նչ փոյթ թէ բախտին նայուածքն անողոք ,
Լըռեցուց ձեր ձայն՝ նըլազն ու բողոք ,
Բացէ՛ք աչերնիդ , տեսնել անաղօտ
Թըռչնոց խուռն երամ ծաղկանց 'ի ծըղօտ .

Որ կ'երգեն ձեր մօտ :

Ի՛նչ փոյթ թէ աշխարհ ձեր անմեղութեան
Կը լարէ թակարդ զերդ կըռփող Վ սատան .
Բացէ՛ք աչերնիդ , տեսնել խաշանց հօտ՝
Որ գայլէն անվախ ճարակին ըզ խոտ ,

Ու խայտան 2 ձեր մօտ :

Ի՛նչ փոյթ թէ հացի քաղցըն դըժժնդակ
Կը կըրծէ ձեր սիրտ , կըքէ ձեր քամակ .
Բացէ՛ք աչերնիդ , տեսնել ճոխ ու յորդ
Սեղան մի պատրաստ յոսկեղէն անօթ

Որ կանգնի ձեր մօտ :

Ի՛նչ փոյթ թէ ծովուն ալիք մեծասաստ
Ջարդեցին նաւուն կողն ու առաջաստ .
Բացէ՛ք աչերնիդ , տեսնել դեղևկոտ
Լաստ մի փըրկաւէտ՝ ծովուն 'ի յոլորտ

Որ ծըփայ ձեր մօտ :

(1). Տանջուղ — (2). Ուրախութենէ ցտակել :

Ի՛նչ փոյթ թէ կենաց 'ի ճանապարհին
 կ'արիւնեն զձեր ոտք ժանտ փուշեր չարին .
 Բացէ՛ք աչերնիդ , տեսնել քրտնատօթ
 Ձեր ճակտին համար պըսակ և նարօտ
 Որ ցոլան ձեր մօտ :

Ի՛նչ փոյթ թէ բոլոր ձեր ճըգանց փոխան
 Խոնջ ընկնիք յերկիր՝ բիրտ ոտից կոխան .
 Բացէ՛ք աչերնիդ , արտօսր 'ի ծընօտ
 Տեսնել զԱպագայն՝ յուսոյն ժառանգորդ՝
 Որ ժըպտի ձեր մօտ :

Եւ ի՛նչ փոյթ դարձեալ թէ բընաւք տան խոյս
 Ու շիրմին բացուի խորն անդընդասոյզ ,
 Յերկինս դարձուցէք աչեր նըւաղկոտ ,
 Եւ տեսէք զԱստուած բարւոյն առաջնորդ՝
 Որ հըսկէ ձեր մօտ :

ԵՂԻՇԷ Ծ . 4 . ԴՈՒՐԵԱՆ

ՁԾ . ԱԳՈԱԻՆ ՈՒ ԽՂՈՒՆՁ

Ագռաւն՝ հըսկայ , բազմատերեւ
 Մի ծառի գոռ բարձանց վերեւ
 Տեսաւ խըղունջն , և՛ ցատամար լի՝
 — «Ի՞նչ , հո՞ս , զաղիր ու դարչելի» ,
 Գոչեց , ի՞նչպէս այս ամպոց դրացի
 Ոստոց վրայ եկար» . . . «Սողացի՛ . . .» :

ԱՂԵՔ . Գ . ՓԱՆՈՍԵԱՆ

ԳԼՈՒԽ Ե.

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆՔ

1. ՔՈՒՐՔ ՁԻՆՈՒՈՐԸ

Երիտասարդ Հայրենիքին զինուորն եմ ես.
 Ամպրոպ մ'երկնեց զիս յիմ մօր կող շանթի մը պէս.
 Մընայ դափնի ես ի ճակատ, ծիրանին յուս,
 Ժայռն իւր սար՝ ետ ինձ խանձարուր, արծիւն եմ վէս:

Զիղըս՝ պողպատ, կողերս՝ երկաթ, կուրծքըս՝ պըղինձ,
 Իմ երակացս արիւն՝ կաթն է զոր ջամբեց ինձ 1.
 Ըմբի՛շ մարտի, աշխարհ՝ կըրկէս, զէնքըս՝ սահման...
 Ճակատիս գիրն է՝ կըտորըճութիւն, փա՛ռքն՝ իմ վախճան:

Յերկինս ունիմ մի վերջին Տէր, այն է ԱԼԼԱՀ
 Եւ աստ յերկրի՝ պետ մի, այն է իմ ՓԱՏԻՇԱՀ:
 Առ սէր նոցին, առ սէր կրօնի և հայրենեաց,
 Գո՛ւ նահատակ, այս է հոգւոյս ըղձանքն անմահ:

Յաւիտենից հորիզոնէն դարեր անթիւ
 Դէտակն անձկաւ մնային 2 ինձ որ տեսնեմ արւ:

(1). (Գափլան) :— (2). Դէտակն կալ, մնալ, ոպասել:

Մեծ տեսլեամբ մ'է կանխագըծած իմ Աստուածը
Աշխարհակալ ապագայիս ծըրագիրը :

Ո՛չ անապատք, ո՛չ ովկէանք, ո՛չ անտառներ,
Ո՛չ ժայռք ո՛չ սարք, և ոչ նոր նոր հորիզոններ .
Մըրրկոտըն քայլերուս դէմ զօրեն գոլ խուլթ
Գուպարայաղթ երբ իմ գըրոհ տայ գոռ գըռուլթ 1 .

Խեռ ոսոխին փաղանդք մեզ դէմ թող ճակատին .
Հեղեղն ենք մենք . յորդենք, քանդենք ցըթումքն յետին :
Թող իւր տարափ տեղայ՝ գընդակ, ուումքն՝ իւր կարկուտ,
Դէմ կայծականց եմք անխարխարն 2 ապառաժուտ :

Բաւ է գամ մի գոռայ շեփոր 3 մարտահրաւէր,
Ի դաշտ փառաց դէմ ռխերմիս գալ ի վըսեր .
Փայլատակիմ զօրէն 4 շանթի որոտընդոստ
Ու չըսպառիմ, շեւ ըսպառած յետին ըմբոստ :

Վա՛յ քեզ, ոսոխ, թէ հըրոսես 5 յայն սուրբ հողեր,
Զոր արեամբ են գընած, օժած իմ քաջ պապեր,
Մահ քո բաժին, մահ անդր քան եօթն պորտ՞ճեր,
Դողա՛ քաջէն զոր գինած է հայրենեաց սէր :

Նա միայնակն ինքն ընդդէմ քեզ լեգէոն 6 մ'է .
Համրէ՛ երկիրն իմ բիւրք բիւրուց այս քաջերէ,
Անկանի՛մք իսկ դաշտին վերայ մեր արեւէն,
Կանգուն թողումք հայրենիքը մեր ետեւէն :

(1) . Յարձակիլ — (2) . Հաստատուն — (3) . Փող — (4) . Պէտ-
նման (նե .) — (5) . Յարձակիլ — (6) . Բանակ :

Մեր կողերուն հոսած արեան առուններէն
 Նոր դիւցազանց գոռ գուպարներ պիտի յառնեն,
 Ու Օսմանեան մահիկապանծ դըրօշուն տակ
 Պի' խոյանան յաղթանակէ ի յաղթանակ:

Ուսած եմք մեր ամպրոպային լերանց սարէն
 Քամահել շանթն ու ամպրոպն երբ բարկածայթեն,
 Մեր անտառաց յաղթահասակ կաղնիներէն՝
 Յընչաց քերել 1 մըրրիկն երբ երկրաշարժէ:

Վաղրն ու առիւծ քաջ յօշոտել մեզ ուսուցին
 Մեր անձաւաց մէջ ոտընձիգ ժանտ թըշնամին.
 Անգղն ու արծիւ ժեռին 2 ժանեաց մէջ բոյն դընել,
 Վիթն 3 ու եղնիկ գահավէժը թափ տալ 4 վարգել 5

Սեւ ու ձերմակ ծովուց դըլփինք՝ 6 ձեղքել զովկէան
 Ու զերդ աղկիոն 7 օրիւ կատղած ալեաց վըրան,
 Գիտենք ուրմով շանթի մը պէս զարնել բարձրին
 կարկուտի պէս գընտակ թափել հետս 8 գըլուխին:

Որպէս տասարք մեր անտառաց բուրդ մայրիներ
 Որպէս մանգաղք մեր դաշտերու ատոք հասկեր,
 Նոյնպէս և մեր սուրեր գիտեն փըշրել հընձել
 Թըշնամիներն երբ ժպրհին մեր հող ոտք կօխել:

Զինուոր մ'եմ ես, պատերազմին օրն իմ համար
 Խընջոյից ու հարսանեաց օր մ'է հըրճուարար.
 Առնում զիմ սուր ու հըրացան, գոչեմ, ԱԼԼԱՂ,
 Նետուիմ ի մարտ, գոչեմ կեցցէ՛ իմ ՓԱՏԻՇԱՂ:

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(1) . Արհամարհել — (2) . Ժայռ — (3) . Վայրի պծ — (4) . Զար-
 նել խոթել — (5) . յարձակիլ — (6) . Մովսիս գազան (հօնուգ) —
 (7) . (Մառթը) — (8) . աղստամբ:

Յ. ԱՌ. ՔՈՅՐՆ ԻՄ

Վ Ա Ր Դ Ո Ի Հ Ի — Ա Ն Ն Ի Կ

Ո՛հ, թէ կարէի

Քո՛յր իմ, քեզ ամպն այն շողշողունն լինէի,
Որ ընդ ոտիւք սըփռի այգունն պատուանդան,
Ձի դու բաստիցդ 1 ելցես կապոյտն ի խորան:

Ո՛հ, թէ կարէի

Քո՛յր իմ, քեզ սիւքն այն սիրաշունչ լինէի,
Ո գրոյր վարդին թեւաբերէն 2 ի բարձունս,
Ձի մի ոգւոյդ ցընդիւր ընդվայր անուշունս:

Ո՛հ թէ կարէի

Յօղն այն վրճիտ առաւօտուց լինէի,
Որ ծաղկին հոյզ լինի, և քօղ յարփւոյն ջեր,
Ձի մի սըրտիկդ ի խորշակէ թառամէր:

Ո՛հ, թէ կարէի

Ես փափկասոյլըն քեզ սոխակ լինէի,
Ձի մի յամէն ըզմայլեալ սիրտդ ի նըլագ՝
Ձարթնոյր յամէն չըշունչ յուսալ սուրբ դաշնակ:

Ո՛հ, թէ կարէի

Քո՛յր իմ, շինին խոնարհ ես յարկ լինէի,
Յոր ըզքաղցրիկն արկանէ քոյն ծիծառնիկ,
Անմեղրութեանդ ապաւէն խորշ ի մըրրիկ:

(1) . Եղանկութիւն — (2) . Թռչել:

Ո՛հ, թէ կարէի

Քեզ սաղարթուն յամայիս ծառ վինէի,
Մոլորելունն՝ ևս ի հեռուստյուսասփիւռ,
Զի ըզքեւ շաղ ես սքփուէի կամ շուք հիւր:

Մինչ ըզկենցաղոյս

Անփորձդ և դու, ո՛հ փորձեսցես զամուլ յոյս,
Եւ զտապ և վիշտ՝ զոր ոչ գիտես դեռ զերկրի,
Քո՛յր իմ, և յա՛յն ժամ ո՛ տայր զքեզ սփոփէի,
Ո՛հ թէ կարէի:

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍ • ՆԱՐ ՊԷՅ

Յ . ՔՈՅՐՆ ՄԵՌՆԱԼ

«Միակ քոյրս էր, — կ'ըսէր կոյսըն ողբագին—,
Միակ եղբայրն զոր ինձ տուած էր երկին.
Նա հինգ ամօք երիցագոյն քան զիս էր,
Եւ երբ մեր մայր շատ վաղ մեռաւ թռաւ յեթեր,
Անհայր արդէն, նա ինձ եղաւ հայր ու մայր,
Ո՛հ, իւր պէտէն էի ոյր վրայ գուրգուրայր:
«Նա դեռ տըղայ, ընդունելով այն պաշտօն
Զոր տայր իւրեան մեր տըխուր բախտ, լուրջ՝ զգօն
էր և խոհուն, և համատի ընկերներ
Թեթեւաքայլ երբ կուգային զայն տանել
Ի պար ի պտոյտ, «ո՛հ, կ'ըսէր նա, քո՛յրս հապա»,
Եւ կը ծըռէր կրկին գըլուխն ի վերայ

Մի գողնոցի կամ գլխարկի զոր շինէր
 Ինծի համար, որ խաղայի առընթեր:
 Երբ տրտմեցնէր զիս մի աղէտ մանկային,
 Իսկոյն իւր գող կը վազէի լալագին,
 Եւ իւր համբոյրք կը ջնջէին իմ արցունք,
 Եւ ժպիտն անդրէն դառնայր գտնէր զիմ աչկունք:
 «Երեկոյին նա կը կցէր զիմ ձեռներ,
 Ծունըր դնէի իւր քովիկը աղօթկեր 1,
 Թոթովելով բառերն իրեն աղօթքին
 Եւ իրեն հետ նայելով հոն ուր էին,
 Կ'ըսէր, մայրիկն ու հայրիկը 'ւ ամենուն
 Հայրը՝ Աստուած և մանաւանդ որբերուն:
 Երբ քունն աչերս առնոյր, այլ բարձ չուզէի
 Բաց իւր ծունգէն, և առւտուն զարթնուի
 Իւր համբուրով:

«Այսպէս անցին տարիներ:

Մի ամուսին ընտրեց ում զիւր տուաւ սէր:
 Տըխուր իւր պէս, թէպէտ բնաւից տայր ծիծաղ:
 Եւ գրաւական իւրեանց սիրոյն մի չքնաղ
 Դատրիկ եկաւ ծաղկել յիւրեանց մթին բուն,
 Այլ չէր յողնած ճակատագիրն ապառուս:
 Մեռա՛ւ իտր այր, և միայնակ մընաց ինք
 Հիւանդագին և սրտահար, որբ մ'ի գիրկ:

— Մահու համբոյր մի նմա տուած էր Հիմէն 2, —
 Յամառ հազ մի ոգին քաղէր իւր կըրծէն:
 Հուսկ անկողին ինկաւ ուստի այլ չելաւ.
 Տառապեցա՛ւ արտասուելով վազազրաւ

(1). Աղօթոյչ. — (2). Հիմէն, դիք հարսանեաց:

իւր մանկութիւն, և սուղ միջոցն ուր կարծեր
էր թէ ահա բախտին ճակատ կը ժպտէր :

Իւր առաջին ամաց վիշտը ե՛ս էի ,

Իւր հուսկ ժամուց տանջանքն եղաւ խելացի
Անմեղ աղջիկն՝ որ ճամային կըսէր , «Յ՛Լ :

«Շատ պառկեցար շատոնց զիս գիրկդ չես առել .
«Ես , ա՛լ խելօք կը կենամ , զիս չե՞ս սիրեր» :

Սպրդեցաւ արցունք մի գոց աչերէն ,

Մինչ իւր հոգին խուսափեր էր չրթներէն .

Ա՛հ , չէր ուզած մեռնիլ առանց տեսնելու

Զիս հուսկ նուագ և գրկելու , — զի երկու

Օրէ հետէ քովը չէի — և հոգին՝

Մերձ ի թռանել՝ բանտարկեր էր ի ծոցին :

«Ո՛հ , պարոն , դեռ երեսնամեայ չէր իմ քոյր ,

Արդ աշխարհն ինձ անապատ մ՛է լոկ թափուր .

Երրորդ անգամ , ա՛խ , որբացայ , ի՞նչպէս արդ

Ապրիմ հապա , յայն քաղցր անուանց զորոնք մարդ

կուտայ այնըց ոյց քով ծընի և կ՛ապրի ,

Եւ ոյք այսպէս մասունքն են իւր սրտեկի ,

Լոկ +ոյր անունն ինձ ներուած էր երկինքէն .

Եւ արդ և զայն կը խըլէ բախտ իմ չրթներէն .»

Մերկ ծառ մի եմ երկրի վերայ , հոգմն երբոր

Փըչէ ուժգին , կը կքէ զիս կորակոր ,

Եւ չունիմ զոք առընթեր ինձ յոր յենում . . .

Իսկ որքն , աւա՛ղ , ճա՛գ ոյր մորիկ աւրեց՝ բոյն :


Եւ կարտասուէր , կարկեալ կայի իւր խորին

Սուգի առջեւ , և յուզեալ էր իմ հոգին ,

Ո՛հ , ի՞նչ սփոփ կարէի տալ եղկելոյն .

Մ'ս ալ զգացած էի պարապն այն անհուն
 Զոր մահ ի մեզ թողու, չափա՛ծ անդընդին
 Մութ խորութիւնն որ կը կլնէ մեր սրտին
 Հատորները, և յոր՝ ապուշ՝ յառեմք մեր
 Զորցած աչեր, հարցանելով ի զուր (է՞ր) :
 «Լա՛ց» գոչեցի. լա՛մք, այո, լա՛մք. մահացուք
 Զունին այլ ոյժ բայց թէ հառաչք՝ արտասուք,
 Երբ անծանօթն այն զօրութիւն զոր կ'ըզգամք
 Ի մեր վերայ և զոր սակայն չիմանամք,
 Կը զարնէ մեզ. ի՞մ կարող եմք, — բայց եթէ
 Արտասուելոյ որպէս մանուկ մի առնէ.
 Լա՛մք և նըմա փառք տամք զի մեզ արցունքի
 Գէթ չգըլացաւ շնորհն, ու ցօղ ետսըրտի) :

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐՍԱՆ



4. ԳԱՐՈՒՆ

Ո՛հ ի՛նչ անոյշ և ի՛նչպէս զով
 Առաւօտուց փչեա հովիկ,
 Մաղկանց վերայ գուրգուրալով
 Եւ մազերուն կուսին փափկիկ,
 Բայց չեա հովիկ իմ... *Հայրիկ չեմ*
 Գընա՛, անցի՛ր սըրտէն ի բաց :

Ո՛հ, ի՛նչ աղու Ա և սրտագին

(1) • Գաղթը •

Մառոց մէջէն երգես թռչնիկ,
 Սիրոյ ժամերն 'ի յանառաին
 Ըզմայլեցան 'ի քո ձայնիկ.
 Բայց չես թռչնիկ իմ... *հայրի քեզ*
 Գընա՛, երգէ սըրտէս 'ի բաց:

Ո՛հ, ի՛նչ մրմունջ հանես վըտակ
 Ականակիտ 1 և հանդարտիկ,
 Քու հայելոյդ մէջ անապակ 2
 Նային գիրենք վարդն ու աղջիկ.
 Բայց չես վըտակ իմ... *հայրի քեզ*
 Գընա՛, հոսէ՛ սըրտէս 'ի բաց:

Մ. ՊԵՏԻՔԹԱԵԼԵԱՆ



Ծ. ԳՈՒՍՏԻՆ ԱՌ ՀԱՅՐ

Գլուխդ երբեք թի՛ ճերմըկի
 Նշենոյ նման պիտի լինի:

Ա. ՏԸ ՄԻԻՍԷ 1.

Բաղդէ՛ս, ունինք և Գրակըստեանք 2
 Մովսէսք նաեւ մեզ պակաս չեն,
 Որոնց օրէնք և պատուիրանք են

(1). Ալֆրէտ աբ Միւսէ. գաղիացի Նշանաւոր քերթող ներկայ
 դարու, ծնեալ յամին 1857 — (2). Անուամբ երկու եղբարց, ոչք
 եղան ի Հռովմ՝ Տրիբուն և Ճարաստան երեւելի, ոչքս էին սրգիք
 կառնելիպի, Տիբերիոս մեռաւ 1884ն և կայրու 121 Ն. Բ. Միս:

Քաշկըռտական քերականք են:
 Թող օրինակ իրենց առնուն
 Քու խիստ ոճը՝ պարզ, կորովի,
 Եւ թո՛ղ տեսնեն թէ ներշնչմունք
 Պէտք է սըրտէ միայն բըղխի:
 Բայց մանաւանդ ինձ համար գրէ՛,
 Ինձ՝ որ քու ձեռք ու գրիչ սիրեմ.
 Ինձ՝ որ զգացմունքդ ՚ի սիրտըս հընչէ,
 Ինձ՝ որ քու միտք ու խօսք պաշտեմ:
 Հաւտա՛ աղջիկդ է կը զրուցէ՛
 Որ գլուխդ թէպէտ կը ճերմկի,
 Բայց նշենւոյն կը նմանի,
 Ում ծաղիկը պտղաբեր է:

ԹԱԳՈՒՀԻ ՇԻՄԱՆԵԱՆ — ԾԵՐԵՆՑ



Յ. ՄՆԱՍ ԲԱՐԵԱ՛Ի

Մընաս բարեաւ, որդեակ սիրուն,
 Քու հօրդ միակ ըսփոփանք.
 Հակատագիրն այնպէս վճռեաց՝
 Զի նորա լաստ յարածուփի 1
 Յաշխարհիս ծով ՚ի աղայ տիոց
 Միայնութեամբ տատանի:
 Զերկար ուղին հատեալ երթայ

(1) Միշտ ծփացող

Նաւահանդիստն յանձանօթ 1 .

Եւ ո՛ր գիտէ՛ որ մըրըրկաց

Մընան նմա սոլառնալիք ,

Յորոց ըզքեզ զերծ պահպանել

Եղեն սըրտին իւր մաղթանք :

Յարդ շատ եղև օտար պատեղց

Եւ 'ի ներքոյ և յախունս

Նորա նաւուն յեցեալ 'ի կողս՝

Տարուբերեալ չըջեցար ,

Լըքեալ երբեմն հեշտալի դէմս ,

Եւ զընկերաց քաղցր բարբառ :

Իսկ մինչ յայժմուս գողտր զաւակաց

Կայառեն ըզքև թռիչք ոտից ,

Եւ քաղցրաձայն մըրմունջք՝ մարի՛կ ,

Մայրի՛կ գոչեն անդադար ,

Թող ըզպապիկն 2 զի երթիցէ , յոր վայր իցէ

Նախախնամին հրաման :

ՏՈՒԹ . Յ . ԵԻՄԱՆԵԱՆ (ԵԵՐԵՆՅ)



Յ . ՀԱՐՅՔ ԱՌ ՄԵՂՈՒՆ

— * —

Ա .

— Ո՛վ խարտեալ մեղու , ըսէ ինձ շիտակ
ինչ որ ըսաւ քեզ թռչունն ոստոստուն ,

(1) . Փոխանակ ըսելու՝ յանձանօթ նաւահանդիստ : — (2) . Մեծ հայր :

Երբ՝ ծաղկանց վերեւ, բազմերգ բունոց տակ
կը թափառէիր դու առաւօտուն:

— «Նա ըսաւ ինձ իւր ձայնիւ գեղապար 1,
«կուզէի երգել ամենուն համար»:

Բ.

— Ամառն, յունիսի մէջ, քեզ ի՞նչ ըսաւ
Յորենի պարարտ հասկն ոսկեգունակ
Որ իւր նրբակազմ՝ ճըկուն 2 հասակաւ
Մայր հողին վերեւ շարժէր շարունակ:

— Ըսաւ «Երբ գայ օրն հնձոց անհամար,
կուզէի քաղուիլ ամենուն համար»:

Գ.

— Ըսէ՛ ինձ շիտակ, ո՛վ խարտեաչ մեղու,
Երբ դու մեկնեցար առ այն շեփորուկ 3
Որ իւր շուրջն անոյշ մի բոյր կը հեղու.
Մեղրդ առիր, նա ի՞նչ ըսաւ քեզ նորուկ:

— Ըսաւ. «Այս պարտէզն ինձ չէ՛ բնաւ յարմար
կուզէի ծաղկիլ ամենուն համար»:

Դ.

— Հո՛ն, բլրոյն վերեւ, դիմօք ամաչկոտ
կրկնելով անշուշտ բառեր սիրակէզ
Երբ կը բզզայիր մի ողկուզի մօտ,
Դեղնորակ խաղողն ի՞նչ բան ըսաւ քեզ:

— «Քանի որ արեամբս գինի շինուիմ յար,
կուզէի մեռնի՛լ ամենուն համար»:

ԱՂԵՔ. Գ. ՓՍՆՈՍԵԱՆ

(1). Խաղուն — (2). Խոնարհող — (3). Մաղիկ ինչ:

Յ. ԳԵՐԱՍԱՆՆ

Չունի ոչ կայք, ոչ բնակարան հաստատուն,
 Երջի մտածկոտ և նիհար,
 Յուզմունք, տագնապ՝ են լոկ սընուենդն իւր կենաց.
 Դափնիք ճակտին էլ լ դալար
 Գրտամբ, ճըգամբ, և արտսունքով են քաղուած
 Ժողովրդից Չ ծափահար:

Մերթ ծովեղեր, մերթ էլ երկթէ ուղեաց վրայ
 Կը թափառի սիրտն 'ի հոգ՝
 Փշալից փառաց նոր հորիզոն որոնել,
 Ուր ողջունեն նրան Յ ծաղկօք.
 Բայց նա ծաղկանց իւրաքանչիւր լուրջ թերթեր
 Յօղէ լեղի արտասուօք:

Թարդման մարդկան պէս պէս յախուռն կրքերին և՛
 Ունի հանճար և դիմակ,

Չիւր սեպհական անձըն վաղուց Յ մուացած՝
 Այլոց համար կեայ մինակ:

Մերթ է տըխուր, բայց Մոլիէն 6 ձեւանայ,
 Մերթ է յանկամս՝ 7 ողբերգակ:

(1). Ա.Լ.— (մկ). — (2). Ժողովրդէն (բց.). — (3). Ջնա —
 (4). Կրքերուն — (5). Շատոնց — (6). Մոլիէն մեծահռչակ կա-
 տակերդակ քերթող Գաղիացի, Յնեալ ի Փարիզ ի 1622, և մեռ-
 եալ 1673: Գլխաւոր գործերն են. «Թարթիւֆ, Ագահ, Երեւակա-
 յական բժիշկ, Ակամայ բժիշկ» և շն: «Մոլիէն» հոս գերանուենու-
 թեամբ գործածուած է: — (7). Ակամայ:

Ոչ մի բանի տէր վայելող չէ եղած,
 Ո՛չ կենացն ո՛չ մրտերմին,
 Տեղ մի այսօր, բան մի նորան թէ գրաւէ,
 Թէ սէր ըզգայ կուսեկին՝
 Կ'հասնի վաղիւ բաժանման ժամն անողոք
 Հարկ է մեկնել ողբաղին։

Չանձն իւր ըստէս թարէ փառօք անցաւոր,
 Որ 'ի հեռուստ զինչ Վ թմբուկ
 Անոյչ հնչեն նախանձորդին լըսելեաց,
 Մինչդեռ անբաւ վիշտ և անձուկ
 Կըրէ պաշտողն Շէքսպիրի Չ և մեկնիչ
 Որոյ լուծէ զհանելուկ։

Ըզբեմ թողնե՛լ, ա՛հ, չէ կարող նա բընաւ,
 Իւրաքանչիւր պըսակներ
 Հեարզհետէ կազմեն նորա շղթային
 Օղակներն այն ծանրաբեռն,
 Որոյ ահեղ շեղջին տակ օր մի նաեւ
 Մահն էլ խաղայ զիւր մեծ դերն։

Քըսակն ահա չէ համաշափ 3 վիճակին,
 Հարկ է սակայն շքեղ հազնի.
 Չէ փոյթ՝ թէ է՛ անօթի կամ թէ ծարաւ,
 Չեռնոց սլիտի և գեղանի։

(1). Խորեւ. պէս. — (2). Շէքսպիր. Նշանաւոր Թատերգակ
 քերթող Անգլիացի. (1594—1616), Տեղինակ բազում Թատերա-
 կան քերթուածոց, Գլուխ գործոցներն են Ռամէօ Ժիւլիէզ,
 Համլէտ, Օթելլօ, Մագդէտ, Էն. Էն. — (3). Հաւատար. —
 (4). պէտք է։

Փոշին կարմիր սքողէ զդիմաց դեղնութիւն՝
Գիշերն անքուն թէ տքնի:

Անթարթ աչքեր անդու 1 նըրան կը դիտեն .
Կը հաւատան երբ ատէ:

Միայն ըզսէրն անուանեն կեղծ ու պատիր՝ 2
Եթէ յանկարծ նա գտնէ:

Զիւր Օֆէլի կամ Տէզտէմոն 3, կամ ազնիւ՝
Մի բարեկամ զոր պաշտէ:

Աղէ՛ ուրեմն թափառականդ Ակասֆէր 4 . . . ,
Ա՛ն ըզդիմակդ, ե՛լ ՚ի բեմ,

Ծափ զարնելով թէպէտ ըզքեզ միշտ գովեն՝
Երբ ցոյց տաս չարն ու վըսեմ,

Իայց դու մի՛ մնար ոչ մի տեղ շատ օրերով,
Որ չընային քեզ նըսեմ:


(1). Անդադար. — (2). Խաբեբայ. — (3). Օֆելի և Տեզտէմոն, անկարկութիւն Շէքսպիրի թատերգութեանց մէջ եղող երկու անձնաւորութեանց, առաջինն դիւցազնուհի «Համլէտ»ի, և երկրորդն, կին «Օթելլո»ի: Օֆելի յուսահատութեամբ կը մոլեգնի, ծաղիկներ կը քաղէ դեռի մը եզրն և դեռամոյն կը լինի, իսկ Տէզտէմոն, առաքինի և անմեղ կնոջ մը իտեալն է, որ կը զոհուի իւր ամուսնոյն անիրաւ կասկածանաց. — (4). Առասպելական անձնաւորութիւն մ'է որ ճանչցուած է «Թափառական Տրեայ» անուամբ, «Թափառական Տրեայն», խորհրդանշանն է Տրեայ ազգին որ դարերէ հետէ թափառելու դատապարտուած է: Կը պատմուի թէ երբ Յուսու իտլը յուսն և վատտակարեկ ուղեց հանդիլ Ակասֆերոս անուն շրեային տան դրան առջեւ, ու կոշտութեամբ մերժեց, և այն ատեն Տէրն ի պատիժ ըսաւ անոր. դու պիտի թափառիս մինչև ցգալուստ իմ:

Սուլեց շողին, ժամ է գնալ ու թափառիլ
 Մեղփեմոնի 1 հէք զինուոր .
 Բարեկամներդ և սիրելիդ թո՛ղ մինակ,
 Մայրիկդ և հայր ալեւոր .
 Փութա՛ 'ի տես հանել մարդկան տիպարներ ,
 Պատառ հաց է հարկաւոր :

Նկարչին մնայ գէթ յիշատակն 'ի կըտաւ ,
 Փիղիասայն 'ի կըճի ,
 Կ'անհետանայ քեզ հետ հանճարն , և զդիմակ
 Կուտէ հողոյն սև ճըճի ,
 Պատմութիւն՝ նա՛ գուցէ զքեզ օր մի յիշէ
 Յապագայում, թէ հաճի :

Լաւն ու վըսեմ, նա՛ էր գրաւել զքեզ 'ի սպառ .
 Ո՛հ սիրեցեալ այն ճիւղաղբ . . .
 Պատանք՝ կեանքիդ լինին թատեր վարագոյր .
 Մարին լոյսեր , դադրին խաղբ .
 Գուցէ յետոյ դաշտի մի վրայ թէ գտնեն
 Զանթաղ մարմնոյդ չոր կըմախք :

ՊԵՏՐՈՍ Է . ԱԴԱՄԵԱՆ



Ուղեւորին ի պանդոկէ չիք ինչ իւր .
 Ապա զի՞նչ մեր . աշխարհս՝ պանդոկ , և մեք՝ հիւր :

ՅԱԿՈՒ ՈՍԿԱՆ

(1) Մեղփեմոն , մին յըննից մուսայից , մուսայ ողբերգութեան :

Յ. ՉԲԱՂԱՆԻ ՊԱԼԱՅԷ

Տեսա՞ր բընաւ զայն հրաշակերտ
Որ ըսպիտակ կ'անդրադառնայ
Մովուն յալիս կապուտաներկ
Որ կը փշրին ափանց վըրայ՝

Հոն Գարրարա 1. և Մարմարիս 2
Եւ ծովագեղ Պրոպոնդիտեանք
Յըզեն նաւօք կըճեայ լերինս
Ուր կը յենուն այն ապարանք՝

Հարիւրաւոր դարուց շիրմէն
Արթննալով ոգիք ազգաց՝
Իրենց դանձերը թափեր են
Մէջ լուսարձակ այն սըրահաց՝

Նաւք պաստառալի մինչ ի կայմ
Անոր շուքին տակ ընկղմեալ,
Այն տեսիլէն յակճիւռս կան 3
Արեւելեան անուրջ կարծեալ՝

Քան զՅոնիական և Դորացի՝
Քան ըզԳոթաց ձեւս նորանշան՝

(1) . Գարրարա , քաղաք Իտալիոյ , անուանի իւր մարմարիոնի հանքով — (2) . Մարմարիս , կղզի ի Մարմարա : — (3) . Աղշիւ , ըզմայիւլ :

Պարսն Արարին հոն կը կըցի
Հայ հանճարոյ 1 մը ի հրաման :

Ուորտահիւս լուսանցից քով
Ի վեր թռչին սիւնք մարմարոյ
Կը մոլորի լոյս արեւուն
Բիւր զարդերուն մէջ մանուածոյ 2 :

Կապոյտ ծովուն ալեաց մէջտեղ,
Անմահական ժըպիտ մ'է այն,
Եւ ամօթով է երկնագեղ
Կասդիլիացւոյն իսկ Ալհամարան 3 :

Եւ աստեղաց ի լոյս աղօտ
Երբ ուրուագիծն իւր օդեղէն
Կը նկարուի երկնից յոլորտ
Շուրջ պարփակեալ անտառներէն :


Կարծես այդ վէմք հոգիանան
Եւ ի լուսեան գիշերային
Դաշնակաւոր երգ կը դառնան
Զոր երազոտ լըսէ հոգին :

Տեսա՞ր բընաւ զայն հրաշակերտ
Որ ըսպիտակ կ'անդրադառնայ
Մովուն յալիս կապուտաներկ
Որ կը փըշրին ասփանց վըրայ . . . :

(1) . Այսինքն՝ վսեմ՝ Յակոբ Պէյի Պալեան . — (2) . Ուրած . —
(3) . Մաւրիտանական պալատ ի Սպանիա :

Ո՛չ կիճ է նա, ո՛չ հող՝ ո՛չ վէժ,
 Այլ մեծազօր Հայ հանճարին
 Մըտածութիւն մըն է վըսեմ
 Հոն օտարեղէն հագած մարմին:

ԹՈՎՄԱՍ ԹԷՐԶԵԱՆ



10. ԲՈՆԱՍՏԵՂԾՆ

Մանկո՛ւնք, դարձուցէ՛ք մի քիչ աչերնիդ
 Դէպ յայս մարդն, ահա, որ՝ լուռ, անբըթիթ 1՝
 Երկնից կը նայի և կը սքանչանայ:

— Բանաստեղծ մ'է նա:

Եթէ իւր նայուածքն հանդէին մի վայրիկ
 Վերայ ձեր ճակտին անմեղ ու քաղցրիկ,
 Թո՛ղ ձենէ մէն մի իւր դլուխըն բանայ,

— Բանաստեղծ մ'է նա:

Իւր հագուստն, աւա՛ղ, չէ՛ ճաշակալի,
 Բաճկոնն՝ այնքան հին է որ կը փայլի:
 Մանկո՛ւնք, մի՛ խնդաք դուք անոր վերայ,

— Բանաստեղծ մ'է նա:

Իւր անշուք խշտեակն 2 է տանեաց մօտիկ,
 Զմրան ցուրտ քամին անդ փըչէ սաստիկ:
 Բայց անդ՝ աւելի՛ երկնից մերձենայ...

— Բանաստեղծ մ'է նա:

(1) . Անշարժ :— (2) . Պառկելու տեղ:

Յաճախ չը գտներ՝ սև կամ ըսսլիտակ
Մի պատառ հացիկ իւր ատամանց տակ...
Յայնժամ քերթուածով Վ մ'եւեթ կշտանայ :
— Բանաստեղծ մ'է նա :

Շըքեղ բընութիւն , թռչունք , ծաղկունք , սէր ,
Գիշերոյ խաւարն և այգուն լոյսեր ,
Ամէնն՝ իւր երգոց մէջ պատկերանայ ,
— Բանաստեղծ մ'է նա :

Երբ փոթորկատանջ հերօք , քիթն ծովուն
Կ'երթայ , չ'գիտեր ո՞ւր , քայլիւք թափառուն
Ամէն ոք կըսէ . « Յիմար մ'ալ ահա՛ : »
— Բանաստեղծ մ'է նա :

Գիտէ՛ առանց վիշտ ըզգալու բնաւ ,
Թէ՛ մի օր՝ իւր կեանքն , ո՛վ բաղդ անիրաւ ,
'ի հիւանդանոց պիտի վերջանայ .
— Բանաստեղծ մ'է նա :

Այլ երբ մահ՝ զոր նա կոչէ անձկասլէս՝
Գայ իւր թեւօք զայն բառնալ յաշխարհէս ,
Պիտ' Երկինք բացուին առաջի նորա ,
— Բանաստեղծ մ'է նա :

Կըրնէ Տանգուռ

(ԱՂԵՔ. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ)



11. ՅԻՇԱՏԱԿ

Երբեմբն լի քաղցրիկ յուսով մանկութեան
Ելի քեզ յայց, ո՛ր դիւթագեղ 1 հըրուանդան,
Եւ քեզ, ո՛ր ծով՝ որ ընդ ալեօքդ անհամար
Մածկես ըզսին 2 պատկեր տիօցն 3 իմ դալար:

Հողիս թռուցեալ ՚ի թեւ խանդից եռանդուն՝
Ճեմէր լըռիկ ընդ ձեօք, ո՛ր ծառք սաղարթո՞ւն 4,
Հեղամբնջիկ ծովուն ալեաց կացեալ դէտ 5,
Որք փըշրէին ժայռիցն ՚ի կող վէտ ՚ի վէտ:

Ո՛ր վայր, քանի՛ չքնաղ էիր և քանի՛
Յոյզ մրրկատաստ ՚ի ներքս ՚ի յիս ըզգայի,
Մինչ զեփիւռիդ քո շունչ հեզիկ և փափուկ
Ինձ յունկանէ սուլէր անոյշ փըսփըսուք:

Սիրտ իմ եռայր 6 ՚ի մանկական հուր բորբոք,
Եւ անծանօթ էր ինձ դեռ վիշտ և մորմոք 7:
Մի դրախտ էիր, ես անդ Եւա երջանիկ՝
Երանութեան հոտոտէի ըզ ծաղիկ:

Սիրտ՝ որ ըզձից լողայ ՚ի ծով լայնատարր 8,
Շուրթն՝ որ ծըծէ զանմահութեան ըզ նեկտար 9,
Եւ աչք՝ որ կան ՚ի բընութեան դեղն յակճիւռ,
Զի՛նչ այլ նոցա պէտք վայելիցըն պատիր:

(1). Հրապուրիչ:— (2). Ունայն:— (3). Տարիք, հասակ:—
(4). Տերեւալից:— (5). Դիտելով:— (6). Կեփեր:— (7). Ցաւ,
վիշտ:— (8). Ընդարձակ:— (9). Աստուածըմպելի դից:

Ձիմ ըզճակատ սըզոխ փափկիկ փայփայէր
 Ձիւր ճառագայթս ինձ տայր լուսնակ լուսահեր,
 Եւ 'ի ծառոց միջոյ թըռչունք գարնային
 Գեղզեղէին իբրեւ քընար երկնային:

Անցի՛ն, աւա՛ղ, անցին երագ ժամքն այն սուղ
 Մենիկ թողին զիս աստանօր աչքս 'ի բուղիս,
 Որ յետ ամաց եկեալ ձեզ յայց վերըստին,
 Ո՛ր վայրք անոյշք, լացից սըրտիւ ցաւագին:

Ձուրկ ի խընդից, և ի յըղձիցս իսկ թափուր
 Գամ վերըստին, գամ, այլ թշուառ և տըխուր
 Շըրջիւ ընդ վայրս, յորում հանգչին ոչ վայելք,
 Այլ գեղազմայլ յիշատակացն իմ ըստուերք:

Եկի երբեմն, և յիմ շըրթանց սըլացան
 Երգք խանդավառ, տաղք 1 քաղցրալուր խընդութեան
 իսկ անդ զերթ հուսկ ողբ կարապին 2 վաղամեռ,
 Յիմ քընարէս բեկբեկ 3 նըւագք թըռչին դեռ:

ԶԱՊԵԼ ԽԱՆՃԵԱՆ
 (ՏԻԿԻՆ ՏՕՆԷԼԵԱՆ)

12. ՓՈՒՐԻՆԻ ԲՈՅԹ

Բարի անցորդ, ըսէ՛ խնդրեմ
 Տեսա՞ր արդեօք, արտը դէս դէն
 Անտառին մէջ կամ թէ ճամբան,

(1) . երգ — (2) . Ծովային թուչուն (թոյ գուչու) — (3) . նը-
 ւ աղեալ:

Տեսա՞ր միթէ իմ փոքրիկ եղբայր
Որ մինակուկ անշուշտ ժուռ գար :
Ո՛ր Աստուած իմ փնտռեմ ունայն :

Դեղձան ունի գլուխ գանգուր
Սև սեւ աչեր , ձեռներ գէր յոյր ,
Սիրուն մանկիկ մ'է լիովին .
Ճամբուն վրայ թէ տեսնէիր
Անտարակոյս կը ճանչէիր .
Կ'ըսեն նման է ինձ գլխովին :

Ա՛հ , կողբամ ես անոր համար ,
Զի շարաթէ վեր ա՛լ չէր խաղար
Ինչպէս ինձի հետ սովոր էր ,
Իսկ երբ սլատճառ հարցունէի ,
Կ'ըսէին ինձ նա կը հանգչի ,
Եւ չը գիտեմ է՛ր կը հանգչէր :

Օր մը գացի իր սենեկիկ
Գտայ զինք իր անկողնիկ
Ճիշդ իր բարձին պէս ճերմկեկ .
Իր տանթեղէ նոր բարձին պէս
Տուի անունը ես սիրապէս .
Բայց ի՞նչ օգուտ , միշտ ննջէր հէք :

Հրեշտակի պէս էր նա սիրուն
Զգեստ հագեր էր զարդարուն ,
Ինչպէս տօնի օրերն ունի . .
Իր բեհեզէ գոգնոց կոկիկ

Եւ դեղնորակ աղուոր կօշիկ,
Զոր դեռ նոր էր առեր անի:

Շիտակ գացի ես իր մահճիկ,
Պագի բերնէն ես անուշիկ,
Սահելով մեղմ վրայ եզրին,
Բայց նա անսաստ իմ աղերսիս
Աչք չըբացաւ որ նայի յիս...
Կ'երեւի թէ ննջէր խորին:

Քիչ մը ետքը տեսայ շատուոր
Մարդիկ տրտում ու սգաւոր
Որ մի սև բան կը տանէին.
Ծանր ելնելով մեր տան դռնէն.
Արդ իմ մօր աչք արտասուք թափեն
Առաւօտէն ց'երեկոյին:

Ա'լ չը տեսայ ես իմ եղբայր.
Ընկայ թէեւ ճամբայ տկար
Եւ բուրաստան պարտէզ ու բակ.
Ամեն տեղ ուր միշտ միասին
Կը խաղայինք տակ կաղնիին.
Դեռ կը փնտռեմ ես շարունակ:


Յո՛ւսացի որ զանի գտնամ
Այս դաշտերն որ միանգամ
Լեցուն էին ծաղիկներով,
Թիթեռներով, որոց թեւեր
Կարծես էին շողուն կայծեր.
Եւ ուզեցի երթալ իւր քով:

Բայց ահա տես բոլոր մարդեր ,
 Խեղճ ծաղիկներ են թառամեր -
 Թիթեռնիկներ լեղասպատառ
 Փախան դացին որ չը մըսին ,
 Բոլոր երկիր կ'երեւի սեւ .
 Չե՞ս զգար դու ո՛րչափ է սառ :

Անտառի մէջ , ո՛հ , խաւարին
 Եղբայրս կորած է՝ եղկելին .
 Անշուշտ եմ որ դողի մէջ է ,
 Շատ կը մըսի , կուլայ կողբայ ,
 Կամ ծունր դրած յաղօթս կայ
 Առ Տէր Աստուած որ քոյրն կոչէ :

Պէտք է դտնել իմ եղբոր հետք ,
 Դեռ եւս չեմ վաստակարեկ ,
 Տէր լրած է անշուշտ իւր ճայն .
 Ո՛րչափ իմ մայր տ'ուրախ լինի
 Երբոր զուարթ իր քով հասնի
 Փոքրիկ որդին կորստական :

Ա՛հ , ըսէ՛ ինձ , ըսէ խնդրեմ ,
 Տեսա՞ր արդեօք , արաք դէս դէն
 Անտառին մէջ կամ թէ ճամբան
 Տեսա՞ր միթէ իմ փոքր եղբայր ,
 Որ մինակուկ անշուշտ ժուռ դար .
 Ո՛ր Աստուած իմ փնտռեմ ունայն :



Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Ց

(Ա Ր Զ Ա Կ)

Գ Լ Ո Ւ Խ Ա . Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ք

1. Ընտանիք	(Ի . Յ . Պերպերեան) Երես	5
2. Հօրը տունը	(Յ . Ոսկան)	7
3. Մայրական սէր	(Թ . Թերգեան)	9
4. Առ Հայ մայրեր	(Ե . Տեմիրճիպաշեան)	11
5. Մօրս կրօնքը	(Համարդին)	12
6. Ատուած	(Թարգ . Ա . Մ . Գարագաշեն.)	15
7. Յիսուս ի Բեթելայ Սար	(Մ . Արքեպիո . Խրիմեան)	16
8. Զատիկ	(Գ . Ս . Օտեան)	18
9. Ստեղծումն մարդոյ	(Հ . Ալիշան)	22
10. Փոքրիկ Առուն	(Թարգ . Ա . Մ . Գարագաշ .)	25
11. Մարդն	(Թարգ . Ա . Մ . Գարագաշ .)	26
12. Զանգակն	(Ի . Յ . Պերպերեան)	27
13. Տիպար Օրիորդ մի	(Ֆենեղոն)	29
14. Առ Արեգակն	(Ոսիան)	30
15. Ժամանակ և Ապագայ	(Մատեայ Աղանի)	31

Գ Լ . Բ . Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք Ե Ի Ե Ղ Ե Ր Ե Ր Գ Ա Կ Ա Ն Ք

16. Հայ Գրագէտն	(Ե . Տեմիրճիպաշեան)	34
17. Ախալանց	(Գ . Եպիս . Սրուանմտեանց)	36
18. Հողմակոծ , անտառք	(Պ . Տը-Սեն-Բիեռ.)	38
19. Վխապատ	(Գ . Ս . Օտեան)	39

20.	Մովիկ	(Գ. Եպիս-Սրուանճտեանց)	41
21.	Երկե՛ր, երկե՛ր	(Մասեաց Աղանի)	42
22.	Ազգային Հիւանդանոց	(Բիւզանդ Գեղեան)	45
23.	Ի յիշատակ սիրեցեալ մօրս, Տիկին Նազը վահան	(Սրբուհի Տիւսաբ)	46
24.	Երկու դպրոցատէրք	(Մ. Միրախորեան)	48
25.	Վարադայլեռն	(Գ. Եպիս. Սրուանճտեանց)	50
26.	Շուետացի լուղորդք	(Նորայր)	52
27.	Վերջալոյս	(Մինաս Զերագ)	55
28.	Ողբ ի վերայ բարեկամին	(Գ. Ս. Օտեան)	57
29.	Զմեռն	(Հ. Ղ. Ալիշան)	60
30.	Դամբանական ճեղայիրլեան Ամիրայի	(Ներսես Վարժապետեան)	62
31.	Ի մահ Մարտիկ Գվֆեն.ի	(Մ. Կիւրճեան)	64
32.	Հայ վարժապետն	(Գ. Զիլինկիրեան)	66
33.	Հայ օրիորդ մի	(Ա. Արփիարեան)	69
34.	Նկարիչն	(Ռ. Յ. Պերպերեան)	71
53.	Հաղարան բիւլբիւլն...	(Գ. Եպիս. Սրուանճտեանց)	74
36.	Բերայի հրդեհը	(Մ. Զերագ)	76
37.	Գրականութիւն	(Եղ. Մուրատեան)	79
38.	Ռեմիէէն յԵրուսաղէմ	(Ա. Յ. Այվազեան)	81
39.	Վոսփորը	(Արմէն Լուսինեան)	84

ԳԼՈՒԽ Գ. ՆԱՄԱԿՆԵՐ

40.	Նամակ Խրիմեան Հայրիկի	88
41.	Նամակ Օտեան Գրիգորի	90
42.	Զերազ առ Տէմիրճիպաշեան	91
43.	Դուրեան առ Պ. Աղամեան	93

44. Գուխոնն Լուսինեան առ Եղիա Տէմիրճիպաշեան 95
 45. Վիքթոր Հիւկօ առ Մարիամ Իշխանուհի Լուսինեան 98
 46. Ռ. Յ. Պէրպէրեան առ Անդրանիկ Թօհաֆճեան 98
 47. Մ. Մամուրեան առ Տիկին Դ. Ս. Փափազեան 101
 48. Ա. Լուսինեան առ Տոքթ. Ն. Ռուսինեան 102
 49. Ե. Տէմիրճիպաշեան առ Տ. Յ. Մ. Սիմօնեան 106
 50. Մ. Կիւրճեան առ Խմբ. «Կրթարան» Հանդիսի 108
 51. Տիկին Սեվինեէ առ Դուստրն 109
 52. Օր. Ս. Սեղբոսեան առ քոյրն 111

(ՈՏԱՆԱԻՈՐ)

ԳԼՈՒԽ Դ. ԲԱՐՈՅԱԿԱՆՔ

53. Խաչ օգնեա՛ ինձ (Մելքիսեդէկ Սրբազան) 113
 54. Արտոյտ ձագերն և Գիւղապետը (Գ. Քուշներե.) 118
 55. Կապիկ և ակնոց (Գաբրիել Արքեպիսկ. Այվազե.) 122
 56. Արտոյտ և խայտիտ (Հ. Գ. Հիւրմիւզեան) 124
 57. Աստուած (Ռ. Յ. Պերպերեան) 125
 58. Բաժինք (Գաբրիել Արքեպիսկ. Այվազեան) 127
 59. Հայելի և կապիկ (Ա. Ա. Նալպանդեան) 128
 60. Աշնան հովիկ (Թարգմ. Հ. Ք. Քուշներեան) 131
 61. Թաթուլին Գալաճօշը (Գ. Արքեպիս. Այվազե.) 133
 62. Իմ մահը (Պետրոս Դուրեան) 134
 63. Գուլպայի մը պատմութիւնը (Յ. Սեբեան) 136
 64. Սիրեցէք զմիմեանս (Պետրոս Դուրեան) 136
 65. Կատու և շուն (Յ. Ղ. Ճ.) 138
 66. Դռում (Վանան Մ. Վ. Տեր. Մինասեան) 142
 67. Տերեւիկ (Արնոյտ. — Թարգմ. Քուշներեան) 144
 68. Եզն և գեղջուկ (Առաքել Ն. Նալպանդեան) 145

69.	Գորտ և կով (Ասօնոստէն — Թարգ. Հ. Հիւրմիւզ.)	148
70.	Մուկ և կով (Հ. Գ. Հիւրմիւզեան)	150
71.	Էշ դժգոհ (Վահան Ծ. Վ. Տէր Մինասեան)	151
72.	Աղուէս և աքլոր (Վահան Ծ. Վ. Տ. Մինասեան)	152
73.	Առ անցորդն (Տիգրան Մանավեան)	153
74.	Մաղթանք Մեղզուրեան Սանուհեաց (Յ. Ոսկան)	155
75.	Սայլորդ Կիկոն (Հ. Բ. Բուշներեան)	156
76.	Ապագայ (Եղիշէ Ծ. Վ. Դուրեան)	160
77.	Ագռաւն և խղունջ (Աղեք. Գ. Փանոսեան)	162

ԳԼՈՒԽ Ե. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆՔ

78.	Թուրք զինուորը (Արմէն Լուսինեան)	163
79.	Առ քոյր իմ վարդուհի - Աննիկ (Խորէն Արքեպիս)	166
80.	Քոյրն մեռեալ (Ռ. Յ. Պերպերեան)	167
81.	Դարուն (Մ. Պեշիկքաշիեան)	170
82.	Դուստրն առ հայր (Թագուհի Շիշմանեան)	171
83.	Մնաս բարեա՛ւ (Տարք. Յ. Շիշմանեան)	172
84.	Հարցք առ մեղուն (Աղեք. Փանոսեան)	173
85.	Դերասանն (Պետրոս աղամեան)	175
86.	Զրաղանի Պալատը (Թովմաս Թերզեան)	179
87.	Բանաստեղծն (Թարգմ. Աղեք Փանոսեան)	181
88.	Յիշատակ (Զապիլ Տօնիկեան)	183
89.	Փոքրիկ քոյր (Մ. Մամուրեան)	184

Handwritten signatures and notes at the bottom of the page, including the name 'Երվանդ' and other illegible cursive text.

[12]

12

A 15109

ՎՐԻՊԵԿ


Էջ	Տող	Սխալ	Ուղղիչ
13	18	բարեպաշտութիւն	բարեպաշտութիւն
48	25	3	(-եւրդ է)
61	9	տաշերով	տաշեղով
61	19-20	պաշար ուան	պաշար ուած
63	10	տրտմութիւնները	տրտմութիւնները
80	3	անրոց	անոնց
89	45	տազնապիլ	տազնապին
90	1	մեռի	մեռնի
92	16	ընթացքիդ	ընթացքիդ
98	25	սպրդեցան	սպրդեցաւ
110	25	Տիկին Սեվէնսէ	Տիկին Սեվիւնսէ
111	7	քայրիկ	քաղցրիկ

Handwritten signatures and stamps, including a circular stamp with Armenian text.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0055933



ЦЕНА

~~А 1~~
15102